



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3074

18978

u. g. h. l. m. n. o. p.

q. r. s. t. u. v. w. x. y. z.

891.99

ch-56

1888



xvl, *ph.*

xvl



891.59 3074

4-56

43

Ս. ՓԻԼՈՅԵԱՆՑ.



1001  
4480

# ԿՈՐԱԾ ՄԱՐԳԱՐԻՏ

ՆՈՐԱԾԱԶԶԵԴԻ ԿԵԱՆՔԻՅ

2003



ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՈՏԻՆԵԱՆՑԻ.

1888



## Ա Ջ Դ.

Ընթերցողը այս գրքուկի միջոցով կը ծանօթանայ մի ամբողջ բաղմանայ գաւառի վարք ու բարքին և բառքառին, ի հարկէ համառօտապէս: Կարծելով որ այդ ծանօթութիւնները և տեղեկութիւնները, որչափ էլ տկար նկարագրուած լինին, այնու ամենայնիւ ըստ չափու պիտանի պիտի համարուին ազգագրութեան կարեւոր գործում և ընթերցողի հետաքրքրութիւնը պիտի շարժեն մէկ աստիճան, ես թոյ տուի ինձ լոյս հանել այս գրքուկը, յուսալով որ կը հանդիպիմ անաչառ քննադատի:



Дозволено цензурою. 6 Февраля 1888 г. Тифлисъ.



Ա.

## ՏԱՊԱՆԱԳԻՐ.

Մեծ պատի մի կիւրակէ երեկոյ Նոր-Բայա-  
զէտում սառը քամին սաստկութեամբ փչելով բե-  
րում էր իւր հետ մօտիկ գետի խշշիւն ձայնը և  
տարածում քաղաքի խուլ անկիւնները: Սաստիկ  
մութն էր և վաղուց էր, որ փողոցներից մարդիկ  
քաշուել էին: Երկար միջոց դեռ շարունակվում էր  
քամին:

Այդ միջոցին Նոր-Բայազէտի մի յետ ընկած  
փողոցում մի սենեակի մէջ, թէպէտև ճրագ չէր  
վառվում, սակայն վառարանում ճթպթացող կրակի  
լուսով ամեն բան կարելի էր նշմարել: Դուռը ներ-  
սի կողմից երկաթի նիգով փակած էր: Վերին լու-  
սամուտի մի ապակին կոտրուած էր, որի տեղ հա-  
սարակ թուղթ էր կպցրած: Քամու ուժգին հարու-  
ածից երբեմն այդ թղթի ներքին շուրթը պոկ-  
վում էր ու դարձեալ կպչում: Սենեակի վերև եր-  
կու կողմից զուգահեռաբար դրուած էին երկու



մահճակալներ, իսկ մէջտեղը պատի մօտ մի սեղան:

Սեղանի վերայ դարսած էին զանազան զրքեր, լրագիրներ և ձեռագիր տետրակներ: Պատի կողմը մի հայելի կար, որի շրջանակը պարսկական ճաշակով դեղագործած էր: Մի փոքր հեռու դրած էր մի պղնձեայ բաժակով ջուր և երեսը թղթով ծածկած: Ահա սեղանի բոլոր զարդարանքը:

Մահճակալներից մէկը, որ դրուած էր լուսամուտների կողմը՝ անկողնուց զուրկ էր, սա պէտք էր դալիս միայն հիւր եղած ժամանակ: Իսկ միւս մահճակալի վերայ անկողնու մէջ պառկած էր մի երիտասարդ, որի աչքերը, ինչպէս երևում էր, փակած էին:

Բայց ինչո՞ւ արդեօք շուտ շուտ շուտ էր անցնում մէկ կողքից միւս կողքի վերայ, երևի քնած չէր: Նորա հիւանդոտ գէմքը անգաղար փոփոխութեան մէջ էր. գուցէ դա խորասուզուած էր անլուծանելի մտածութիւնների մէջ, որոնք միմեանց հակառակ գալով, կարծես, անհանգիստ էին աւնում նորան:

— Ե՛հ... անիծած քամին էլի թուղթը պըրծացրեց, ասաց երիտասարդը, երբ շառաչիւն հանելով թղթի տակից ներս փչեց քամին: Նա վերկացաւ տեղից, հագաւ հողաթափները և երկու քայլ անելով բարձրացաւ միւս մահճակալի վերայ, մի կերպով թուղթը ամրացրեց և կրկին իւր տեղը

գարձաւ, դարձեալ նոյն դիրքն առաւ, նոյն խորհրդածութեան մէջ խորասուզուեցաւ:

Ո՞վ էր այդ երիտասարդը արդեօք, և ի՞նչ էր դորա մտատանջութեան պատճառը:

— Տէր Յակոբը, յանկարծ խօսեց երիտասարդը, այն ամբակազմ ու առողջ տղամարդը, որ հարիւր քսան տարուց աւելի տարեց, որը կարծում էր, ոչ ոք իւր հանճարը, իւր հնարագիտութիւնը չունի, ինքը միայն մի բացառութիւն էր մարդկային ցեղի մէջ, Աստուած միայն իրան էր սիրել, իրան միայն զարդարել Եօթնարփեան շնորհքով: Նա պարծենում էր, որ երկու հարիւր կտոր գիրք էր կարդացել. էլ Ալբերդ, էլ Տաթևացու հատորներ, Հարցմանց, Հարանց Վարք ևն. ևն.: Իւր կարծիքով հասել էր ոչ թէ միայն գիտութեան ամենավերին ծայրին, այլ դեռ բաւականին տարածութիւն էլ գէշն անցել: Ել ի՞նչ երկարացնեմ, կարծում էր, թէ ինքը աշխարհի մէջ առաջին հանրագէտն էր, և ո՞ր մահկանացուն կը սխալուէր նորա առաջ յանգգնիլ, թէ ինքն էլ մի երկու տը ու բեն գիտէ: Այսօր թաղեցինք նորան: Կեանքը իւր նշանակութիւնը կորցրեց իմ աչքում, երբ մարդիկ հող լցրին նորա կտաւի մէջ կոլոլուած անշուք դիակի վերայ: Ես այնտեղ կանգնած էի, ես իմ աչքովս տեսայ, որ հողը նորա վերայ ածելու ժամանակ, նա ոչինչ չը խօսեց, չը բարկացաւ, չը



կարողացաւ դուրս գալ, հայհուցել կամ ծեծել իւր վերայ հող ածողներին: Ուրեմն զուր էին նորա երկարակեցութիւնն էլ, ինքնագովութիւնն էլ: Նա մահու ճանկերի մէջ ընկել, պրծել էր...

— Մահու ճանկերը... կրկնեց նա, մի փոքր մտածելուց յետոյ, մահու ճանկերը գրկելու են թէ շուտ, թէ անագան ամեն մարդու, հետեւեալը և ինձ: Տէր-Յակոբը—այնքան երկար ապրելուց յետոյ, դարձեալ մեռաւ: Ես մի հիւանդոտ երիտասարդ, ինչ պէտք է անեմ... Ես էլ պէտք է մի օր մեռնեմ, և այնպէս, որ վերաս հող ածելու ժամանակ Տէր-Յակոբի նման չը պէտք է կարողանամ խօսել: Ո՛հ... ցերեկուայ անցքը ինչ մեծ տպաւորութիւն է թողել իմ վերայ: Միթէ հազար անգամ մեռել թաղելու ներկայ չեմ եղել, հազար ինչպէս երիտասարդներ իմ աչքի առաջ հողը չեն դրուել:—Այո՛, մեծ տպաւորութիւն: Ես այսօր հաստատապէս սովորեցայ, որ սէտք է մի օր մեռնեմ, և ինչ լաւ, որ կը մեռնիմ, այն կեանքում, գուցէ կը գտնեմ ես «նորան»...

Վերջին բառը ուշի բերեց նորան և նա բաց արեց աչքերը քնից զարթնող մարդու պէս, զգաց իւր դրութիւնը. վառարանի վերայ ուշ դարձեց, վեր կացաւ, կրակը առաջ քաշեց, ծխնելոյզը փակեց և կրկին իւր անկողինը մտաւ:

— Ուրեմն, քանի կենդանի եմ, շարունակեց

նա, գնամ «նորա» ցանկացած տեղը բնակեմ, այնտեղ գերեզմանաքարս պատրաստեմ, և հիմիկուց տապանագիրս այսպէս գրեմ...

Այ ձեռի ցուցամատը ճակատին դրեց և մի փոքր մտածելուց յետոյ, բարձրաձայն իւրաքանչիւր բառը շեշտելով՝ արտասանեց հետեւեալ տողերը.

— «Մի օր երբ ծանր մարմինս կը թողնեմ,  
Թեթեւ կը թռչեմ, երկինքդ կ'ելնեմ,  
Ինձ միտդ բերես, անունիդ մեռնեմ,  
Չուն, ինչ որ լինիմ, վերջը ես քոնն եմ...»:



Բ.

## ՄԱՆԿՈՒԹԻՒՆ.

Առաւօտ էր: Նոր-Բայազէտի փողոցների մէկով անց էր կենում մի միջահասակ տղամարդ: Նորա ծնօտը ծածկուած էր կէս թուխ, կէս սպիտակ մազերով, երեսի գծագրութիւնը, դառը ժպիտը տխուր տպաւորութիւն էր թողնում նայողի վերայ: Նա գնում էր քայլերը անգգայաբար փոխելով: Նորա քամակից գնում էին երկու մատղաշ երեխաներ, որոնցից մէկը մի սեւագանգուր տասը տարեկան, իսկ միւսը մի շիկահեր ինն տարեկան մանուկներ էին: Երկսի ուսերից էլ քաշ արած էին մի մի փոքր տոպրակ: Սոքա նոյնպէս լուռ ու տրտում հետևում էին ականջ առաջնորդին, որ ինչպէս երևում էր, իրանց հաճելի չէր այդ: Երբեմն այս ու այն կողմն էին նայում գող կատուի պէս, կարծես, իրանց առաջնորդին թողնել ու փախչելու փորձեր էին անում. մինչև անգամ նորանցից մեծը օգուտ քաղելով ուշաբարձ առաջ-

նորդի դրութիւնից, մի անգամ շեղուեց ուղիղ ճանապարհից և փախս առաւ, բայց ոտքի ձայնը մտանեց իրան և իւր առաջնորդի ազդարարութեամբ հպատակուեց իւր ճակատագրին:

Գնալով սոքա կանգնեցան մի խանութի առաջ, ներս մտաւ առաջնորդը, որից մի փոքր ուշ մանուկներն էլ ներս կանչուեցան: Խանութի վերին կողմը դրած էր կարճ ստներով մի մեծ սեղան, որի վերայ ցանուցիր ընկած էին մանր գործիքներ և կաշու կտորներ: Սեղանի շուրջը նոյնպէս ցած ակթուկների վերայ նստած էին մի քանի միմեանց անհամապատասխան հասակներով մարդիկ և կար էին անում:

— Հա, մտածեցին մանուկները, սօլկարի դուքան ա, մեր ոտների հին, կարկատած սօլերն էլ էս դուքանից բերին մեզ էսօր:

Գործատան կառավարիչը մօտ կանչեց մեր փոքրիկներին, որոնք նորա ձեռքը համբուրեցին և ցոյց տուած տեղը գետնին փռած մորթու վերայ նստեցին, տոպրակներից իրանց գրքերը հանեցին և վարպետը այբուբենի վերայ մատնացոյց անելով ասաց. «Խաչը պաչէք ու իրէք հետ ասէք, խաչ, օգնեա՛, ինձ»: Մանուկները կրկնեցին: Յետոյ այբ, բեն, գեմ, մի քանի անգամ կրկնելուց և կրկնել տալուց յետոյ ասաց վարպետը, «էդ ձեր էսաւուր դասը, դէ լաւ սերտէք, թէ չէ, ձեր ականջը կը ծակեմ կը կախեմ առիքից»:



Այս սպառնալիքից վախենալով մանուկները կրկնեցին իրանց դասը ցուցամատը թղթի վերայ դրած, իսկ աչքերը այս ու այն կողմը իրանց անձանթ առարկաների վերայ դարձրած: Մի փոքր լռութիւնից յետոյ վարպետը հրամայեց դասը նորից կրկնել, բայց ցաւը այն էր, որ մոռացել էին: Առաջին անգամ մի մի ապտակ շրփալին հանքուքեցին այնպէս, որ կարծեցին, թէ վարպետի ձեռքը կրակոտ էր: Մի փոքր լաց էլան, ապա լսելով կորցրած անունները կրկնեցին մի քանի անգամ: Յետոյ միմեանց դաս ասելուն չը հաւանելուց, թէ մի այլ հանգամանքի պատճառով, չը գիտեմ, որտեղից մի սատանի ծիծաղ մտաւ այս երկու թըղուկների մէջ, որոնք իրանց շրջապատող հսկանքի ահից չը կարողանալով ազատ ծիծաղել խեղդփում էին աշխատելով ծիծաղը պահել, մինչդեռ սորանով աւելի սաստկանում էր: Վերջապէս կարմրագունած և ծիծաղահարամ դուրս պրծան վարպետի տնօրինութեամբ և գռանը մի կուշտ ծիծաղելուց յետոյ կրկին ներս կանչուեցան շարունակելու իրանց գործը մինչև կէսօր: Կէսօրին վարպետը պատուիրեց նրանց, որ գնան տուն ճաշ անեն և շուտ վերադառնան:

Ճանապարհին մանուկներն ուրախ, ազատ, միմեանց առաջ ոտք ձգելով, իրար խեղդելով, ուրիշի հաւերին կամ լուսամուտներին քար գցելով,

պատահած իրանցից փոքր երեխաներին խփելով, հայհոյելով տուն հասան:

Մի շաբաթ շարունակ մեր ուսանողներն իրանց սովորական փողոցով գնում էին խանութ դաս առնում, ծեծ ուտում, իսկ ճաշին ու երեկոյին տուն էին վերադառնում ու հաց ուտում:

Մի անգամ, երբ խանութ էին գնում, — Աւետիս, ասաց իւր փոքր ընկերին Սմբատը, արի էսօր դաս առնելու չ'էթանք, էթանք առաջ դարի գլօխը, էնտեղից ման գալով իջնենք, էթանք Խաչերը, Խաչերի աղբրից մէ պաղ ջուր կխմենք, ասան, է: Կը բարձրանանք գլխովը կը պտտենք, կը գանք, ընկնենք կալերը, էնտեղից կը գանք տուն, կ'ասենք ուստէն (վարպետը) թողեց՝ հաց: Հաց կ'ուտենք, գիրքներս ու էլի հաց կառնենք, սաքի (որպէս թէ) էլի էթում ենք ուստա, մենք Յագոփին էլ կը կանչենք, մէ բաշ կ'էթանք սուրբ Օհաննէս կը համբուրենք, էնտեղի չիմանը (մարգագետին), մի բօլ ձիաւոր կը խաղանք, մեր հաւասը կը հանենք: Համբարձման օրը էգա մօտանում ա, մարդերը լազաթ չեն տալըմեն, չեն թողումեն խաղանք, ասումեն՝ չըրա՞ղ կայնէք, կ'ընկնէք ձիան ոտի տակ:

— Սմբատ, լաւ ես ասում ես, ասաց Աւետիսը, որ մինչև հիմա զմայլած լսում էր իրանց անելիք ճանապարհորդութիւնը, համա որ ափերն իմացաւ, էն վախտը թնչ կանես:



— Ի՞նչ պտի անեմ, ըսկի բան չեմ անի:

— Սխար մեղի կտփի, թմալ կանես:

— Ե, թող տփի, էն հլա մեր ափերն ա, բա էն լաւ ա, որ խալզի ուստէն ա մեղ տփում. մէ բան որ պտի տփուենք, ինչ ուստի տփոցն ուստենք, հազր մեր ափոր տփոցը կուտենք, մէ թաս էլ պաղ ջուր կխմենք վրէն ու էնէնց կմարսենք:

Աւետիսը մի փոքր մտածելուց յետոյ վճռեց հետեւել Սմբատի խորհրդին, բայց յետոյ մի միտք ծագեց նորա գլխում:

— Կըգամ, Սմբատ, մատը բարձրացնելով ասաց Աւետիսը, համա որ ափերն հարցրեց «որդ սաբիբ էլաւ», ես կասեմ Սմբատը...:

— Չէ, Աւետիս, կտրելով նորա խօսքը ասաց Սմբատը, էլ սաբիբս որն ա, որ հարցրեց, կասենք... կասենք... դէ մի բան կասենք, կպլըրծենք էլի:

— Ի՛նչ խելօքնես, դու խաբես, տանես. իրիկունն էլ մեղքը գցես իմ վրէն:

— Դէ ասա, չեմ ուզում գամ, էլի:

— Ընչի՞ չեմ ուզումեմ, համա որ իրիկուանից վտխենում եմ, վայ... Սմբատ, ժամը ընցել ենք, էս դո՞ր էկանք, դարձի, դարձի, առանց էդէլ ետացանք, հիմի եա ափերն ա, եա ուստէն մէկը կտփի մեղ:

Սմբատը ընկերի խօսքից զգուշացած իւր շուր-

ջը նայեց, կարծես, ինքն էլ մի սարսափ զգաց, — վայ... Աւետիս, ասաց, Բերդի մահլէն ենք հասէրենք, օղորդ որ էս դո՞ր ենք էթում ենք: Եթանք, էթանք ուստէն:

Մանուկները դարձան դէպի խանութ տանող ճանապարհը և վազ անելով տեղ հասան: Այսօր ընդհակառակ ծեծի երես չը տեսան, նորանց բաղդից վարպետը տեղ էր գնացել և շատ յետի եկաւ: Ծաշի ժամանակ տուն գնալիս մանուկները շատ ուրախ էին, բայց ցաւում էին, որ իրանց մտածած զբօսանքը չը կատարեցին:

— Հազր, ասում էին, ուստէն էլ ուշ էկաւ, ընչի չըգացինք, և կամելով իրանք իրանց ազատ ցոյց տալ, ձեռնալ, թէ իրանք մի որ և է բռնութեան տակ չեն և ուր ուզենան բացարձակ կարող են գնալ. ուղիղ ճանապարհից դիտութեամբ դուրս եկան և իրանց քայլերը դարձեալ ուղղեցին դէպի Բերդի թաղը, որ այն կողմից պտոյտ անելով տուն գնան:

Բերդի թաղում, երբ նոքա մտան մի լայն փողոց, մի դարվազից դէպի բակը ներս նայեցին:

— Աւետիս, հլա իշկա (նայիր) բակի մէջ էն աղջկան, ասաց Սմբատը, հլա թամաշ արա, ինչ շէկ ծամեր ունի, կասես թէ քո մազերի ռանգն ա:

Արդարեւ բակում մի թաղիք էր փռած, ուր



նստած էր մի եօթ տարեկան շէկ աղջիկ, որը գըրկած ունէր մի գլուխը սև ինքը սպիտակ կատու, որին փայփայում էր ու հետը խաղում, յետի ոտների վերայ կաղնեւ էր սովորացնում, երբեմն բարկանալով ականջներն էր քաշում և երբեմն սիրելով գլուխը պաշտում: Մի քառորդ ժամի չափ մանուկները կանգնած նայում էին աղջկայ ու կատուի խաղին:

Աղջիկը չէր իմանում, թէ իրան նայողներ կան: Երբ մանուկները գէպի ներս բարձր ձայնով «ճիկ» գոռացին ու փախան, աղջիկը շուռ տուեց գլուխը, բայց ոչ ոքի չը տեսաւ:

— Աւետիս, արի գնանք պատից քար գցենք, էն աղջկան վախեցնենք, ասաց Սմբատը, երբ որ ճաշ անելուց վերադառնում էին խանութ:

Աղջիկը, որ տակաւին նստած էր միւկնոյն տեղը քարի թրփոցը լսելով՝ վեր կացաւ, բակից դուրս նայեց և փախչող մանուկներին տեսնելով ասաց. «Սև կապածներ, հաւատաս, դասները սերտ չեն, տփոցի ահից չանթէքը գցել են ուսը, ընկել են քուչէքը. և սկսեց ծափ տալով ծաղրել նորանց:

— «Ուստա փափուկ,

Լախ ձմերուկ,

Պատէն կախուկ, ջան, ջան»:

Մանուկները ոչինչ չը լսեցին, նոքա արդէն փախել, գնացել էին:

Հետեւեալ օրը կիւրակէ էր, ուստէն և մանուկները ազատ էին, կարծում էին, թէ աշխարհք իրանց են տուել: Մի քիչ մածուն կերան ու դուրս պրծան: Ամբողջ օրը էլ տեղ չը թողին, ման եկան, իրանց սիրելի փողոցով էլ անցնել չը մոռացան և դարձազի մօտ գնացին: Բայց երևի տան ընտանիքը տեղ էին գնացել, որովհետև դուռը փակած էր, և սևագլուխ կատուն պոչը կախ գցած բակից դուրս պատերի տակին նուալով պտտում էր: Սմբատը գրպանից հացի ու պանրի փշրանք հանեց և կատուի առաջը թափեց:

Աւետիս, ինչ փափուկ զատ ա, հլա ձեռք քսի քամակին, կտտուի մէջքը շոյելով ասաց Սմբատը:





Գ.

## ՍՈՒՐԲ ՆՇԱՆ

Նոր-Բայազէտից դէպի արևելք, մօտ չորս վերստ հեռաւորութեամբ Գեղամայ լճի ափին գըտընվում է Նորագուղ գիւղը երկու հարիւր յիսուն տուն հայ ժողովուրդով, որոնք 1828—30 թուականներին Արծափից են այստեղ գաղթել և պարսպում են ըստ մեծի մասին հողագործութեամբ և ձկնորսութեամբ։ Վերջին տարիները սովորութիւն դարձաւ նաւակներով ցորենի և գարու բեռներ վարձով փոխադրել Զիբուխլու գիւղը Թիֆլիս տանող ճանապարհի վերայ։

Նորագուղ գիւղում «Սուրբ Նշանի տէր» մականունով մի ծերունի կայ, որը պապական ժառանգութեամբ ունի մի մեծ արծաթեայ խաչ հասարակ ակներով զարդարած, մի շատ փոքր խաչ ևս մանրաշար արծաթեայ շղթայիկով նորանից կախում և քառասուն—յիսուն շուշպաներով փաթած, որ դէպի այս կողմը գաղթելու ժամա-

նակ այդ ժառանգութիւնը հետն է բերել, որին տեղացիք «Արաբու սուրբ Նշան» անուն են տալիս։

Ծերունին իւր տան մէջ մի փոքրիկ դռնակով խուց ունի շինած, ուր մի խաչքարի վերայ բազմացրած պահում է Սուրբ Նշանը։ Նորա առաջ առաստաղից կախ արած ձէթի կանթեղը ամեն կիրակամուտ երեկոյին վառվում է։

Կիւրակէ օրերը ջերմեռանդ ուխտաւորների բազմութիւն մարդիկ ու կանայք, առաւելապէս Նոր-Բայազէտից յաճախում են այստեղ Սուրբ Նշանը համբուրելու։ Մոմեր են վառում, մի կտորած խեցիի մէջ աթարի կրակի վերայ խոնկ են գցում, խուցը ծխով լցնում և մի քանի կօպէկ խաչհամբոյր գցելով իրանց ուխտն են անում։ Եղել են ջերմեռանդ ուխտաւոր կանայք ևս, որոնք իրանց ճակատի օսկիքից մինը կտրել գցել են Սուրբ Նշանին խաչհամբոյր իրանց ցանկալի մուրազին հասնելու, կամ մի երկարատե ցաւից բժշկուելու համար . . .

Ծերունին սկսում է պակաս-պուտ, բայց քաղցրաձայն «Տէր ողորմեա», որին հեղամուռնջ ձայնակցում են ծունկ չօքած ուխտաւորները և վերջը տան հացից մի կտոր նշխար բերանները գնելով դուրս են գալիս գետի ափը մարգագետնի վերայ և երկու սեւեր մէկ-մէկուց բաժան խումբ խումբ նստած ճաշ են անում։ Սովորութիւն չը



կայ, որ մարդիկ ու կանայք միասին սեղան նստեն: Պառաւ մայրը անգամ իւր հասակ առած որդու հետ հաց ուտել անպատշաճ է համարում:— «Մեք կնիկ արմատ ենք, ասում են նոքա, որ տղամարդի պատիւը չը ճանաչենք, Աստուծուն էլ չենք ճանաչի. տղամարդը, որ կայ՝ գլուխ ա, իսկ կնիկ արմատը՝ ոտ»: Ահա տեղական կանանց երբեմն ջերմ, իսկ այժմ մի փոքր սառնացած համոզմունքը:

Նորագուշի նկարագրական նշանաւոր տեղը բռնում է գիւղից վերև գտնուող հին գերեզմանատունը, ուր կարգով տնկած խաչարձանները հեռուից նայողին հեծելազորի խմբեր են պատկերացնում: Այդ է պատճառը, որ տեղական աւանգուծիւնը ասում է, թէ թշնամիքը մի անգամ վրայ են տուել այս գիւղի վերայ, բայց խաչարձանները տեսնելով կարծել են իրանց ախոյեանն է, ուստի թողել ու փախել են: Նոյնպէս ասում են, այստեղ է մեր Գեղամ նահապետի գերեզմանը, այնտեղ է հին Գեղարքունույ աւերակները և այլն:

Ահա մի խումբ ուխտաւորներ մօտեցան Նորագուշի ճանապարհի վերայ տնկած խաչքարին:

— Էսա հասանք «Խաղախաչին», ամենքդ էլ համբուրէք ու ողորմի տուէք խաչի տակը պարկոյներին, խաչքարը համբուրելով ասաց մի հասակաւոր կին:

Ուխտաւորները կատարեցին նորա հրամանը:

— Հորսէ, ղորբան հարսէ, հլա էտոնց ղսէն (պատմութիւն) արա, իմալ են էլել, որ էրկսին մէ տեղ են բէբել են, էս չօլի գլօխը թաղել են, հարցրին մի քանի նշանագրուած ու երեսները քողաւորած օրիորդներ, չը նայելով, որ հազար անգամ լսել էին:

— Իմալ պոի ընի, նոցա սիրտը չը կօտրելու համար, սկսեց Շողոյ—հարսէն, տղէն մէ սիրուն տղայ ա էլել, մէ հաստաթիկունք, ղօչաղ տղայ, էդ տղէն սիրուել ա տէրտէրի աղջկայ վրէն: Չունքի տղէն աղքատ ա էլել, տէր-տէրը չի ուզել իրա աղջիկը անբաղդացնի, տայ էդ տղին: Յետոյ իմացել ա, որ տղէն մէ քանի թուրքերի հետ հազրվում ա, որ մէ գիշեր գայ ու աղջկան թրով, թուանքով փախցնի մէ հնարք ա գտել, խաբար ա ղրկել տղին, ասել ա. «Ես իմ աղջկը կը տամ, թէ որ մէ օրուայ մէջ, դու մինակ իմ թափի գլխի արտը քաղես, պրծնես»: Էդ աւերած արտի մէ ծէրը ստեղ ա էլել, մէկէլ ծէրը է նախագնէն:

Տղէն ուրախ-ուրախ գէրնդին մէ իրիկուն սըրում ա, հազրում ա ու առաւօտը էն գլխէն գալըմ ա ու խաղ ասելով քաղում ա: Իրիկուան դէմ դեռ արևը չէր մտելէր, տղէն մէքիչ էր մնացել էր, որ արտը պրծնէր. խաբարը էթումա տէրտէրին, թէ քու տունը չը քանդվի, վալլա հէնա տղէն կայենական (ահագին) արտը քաղեց, պրծաւ, իլ-



լաջ ունես), տես: Տերտէրի իլլաջը կտրոււմ ա, մէ պառաւի մէ բան ա տալըմ ա, ասում ա, գնա, շուտով արտը, տղին խաբի, ասա, որ տէրտէրը իմացաւ քո արտից պրծնելը, իրա աղջկան զարկեց սպտնեց, բադւա (զուր տեղ) էլ ընչէս ջանդդ չարչարում...:

«Քափ ու քրտնքի մէջ շաղախուած տղէն պառաւի բէրնից, որ չէ, էդ խօսքը լսումա, տեղ բատեղ պատռում ա: Խաբարը էթում ա աղջկան, թէ տղէն չը կարցաւ արտից պրծնէր, զօռից մեռաւ, համա աղջիկը ընդուց վազնում ա, իրան ծովն ա քցում ա: Զուր մարդ ժողովիլը, ջանգակ հանիլը, աղջիկը խեղդվում ա, պրծնում ա: Տերտէրի ճարը կարում ա, աղջիկն էլ բէրում ա էստեղ տղի հետ մէ տեղ թաղում ա, էս Խաղախաչն էլ տնկում ա նրանց վրէն...»

Ունկնդիրները Շողոյի արած ջերմաջերմ պատմութիւնից ստրտափած ասացին, «Աստուած ձեր հոգին լուսաւորի, բարով էն հանդէն հասնէք մէկ մէկու»:

— Հարսէ, բա ընչէն էդ խաչին Խաղախաչ են ասումեն, հարցրեց մի օրիորդ:

— Էդ էլ գիտէք ընչի, շարունակեց Շողոն, էն օրը, որ թաղում են էդ երկսին, գիշերը սաղ գեղը երազ ա գալըմ ա մէ սիպտկամուրուս խալիոր, մեռնեմ իրան Սուբնիշանն ա էլել. (բոլորը

խաչակնքում են երեսները): Երազ ա էկել, ասել ա, որը որ հագի ցաւ ունենայ, էթա էն երկու ջիվանի գերեզմանը համբուր ա, իրանց ողորմի տայ, հագը կը կտրուի, կը սաղանայ:

— Է՛նա, Լուսաւորիչն երէվաց հա, ասաց Շողոն, մատով ցոյց տալով առաջները բացուող դաշտավայրի մէջ կանգնած փոքրիկ վանքը, և ամենքը խաչակնքեցին:

— Հարսէ, Լուսաւորիչն ա շատ զօրքով (հրաշագործ) թէ Սուբնիշանը:

— Տնակուներ, էդ էլ չէք գիտում էք, ասենք, մեռնեմ երկսի զօրութիւնին էլ, համա Լուսաւորչու դուռը հազարից մէ հետ ըխտաւոր չէթում ա, Սուբնիշանին, տեսնում էք, դեռ մէ կիրակի չընցեր ա, որ նրա դռան ըխտաւորը պակաս ըլնի, թողզը չորեքշաբթի ու ուրբաթ օրերը: Սխարքանի՛ հետ, էլ գործակալ, էլ վարդապետ ու տէրտէր չըմնաց, գացին, որ Սուբնիշանը բերեն Գեավառ (Նոր-Բայազէտի նախկին անունը), դնեն ժամը: Երազ էր էկել, ասել էր, իմ տեղից ընձի մի խախտէք, թէ չէ, ինչ սասում, պատուհաս ասես, կթափեմ ձեր վրէն: Տէր-Յովանէսը յանկաճ չէր արել, գացել էր զօռով քաշելէր, բերել էր, երբ որ հասել էր գեղի կարմունջը, ընկել էր չօքերի վրէն, չունքի Սուբնիշանը սարսափացրել էր. «Հիմի հոգիդ առնեմ, էս կարմնջի վրէն, ասել էր, ա՛յ տէր-



տէր»։ Լուսաւորիչը էնտեղից բարեխօս էր կայնել էր, թէ «կարգաւոր մարդ ա, խնայեա՛», նոր Սուբ-նիշանը գացել էր, ընկել էր աիւրջ գիրկը...

— Մեռնիմ իրա լուս հրաշքին, ասացին ամենքը. դու ամենի մուրազին էլ հասնես, նրանց սաղաղէն էլ մեզի։

Խօսակցող ուխտաւորների խումբը գնալով արդէն հասել էր Սուբնիշանի դուռը։ Ներս մտան համբուրեցին, ամեն մէկը իւր առանձին ուխտն արեց, բայց հեռու կանգնած մի մատղաշ աղջիկ դեռ ոչ մօտ էր գնացել և ոչ համբուրել։ Երբ Շողոմն ուշադրութիւնը նորա վերայ դարձրեց, «Վա՛յ, քօռանամ ես, Մարգարիտ ջան, ասաց, արի՛, դու էլ արի՛» և գրկեց աղջկան, բարձրացրեց, ասաց՝ «Համբուրի՛ ու ասա, ո՞վ Սուբնիշան, դու ընձի մէլաւ տղայ ղսմաթ անես»...

Այս խօսքի վերայ հասակաւոր աղջիկները մէջ ծիծաղի շշուկն էլսուեցաւ։ Շողոմն ասաց նորանց, «Բա էդենց էկել է, էդենց էլ կէթայ, աղջիկը տղա կուզի, տղէն աղջիկ»։

Մարգարիտը մեր ծանօթ բախումը կատուի հետ խաղացող շէկ աղջիկն էր։

Դ.

## ԲԵՐԴԻ ԳԼՈՒԽ.

Մախընթաց գլխի անցքից վեց տարի անցել էր։

— Ախչի Հոռոմսիմ, ասաց մի աղջիկ իրանից մի փոքր հեռու կանգնած ընկերին, արի մենք էլ է՛ն Ռուսների գերեզմաններից էթանք ցած դանք, շարան քարերի տակին շատ ծաղիկներ կան։

— Չէ, էնտեղի ծաղիկները լաւ չեն, հլա մատղաշ կըլնեն, հազր Սուբսէփանոսի պատի քամակը լիքն ա, մէկմէկու հետ բխբճում են, արի՛, էն տեղ էթանք։

— Քա էնտեղ էնա էն ղդամ աղջիկ են լցուել, հիմի ամեն մէկը մէ ծաղիկ բռնել ա, էլ մեզ փայ չի մնացել ա։

— Արի՛, արի՛, դու չես գիտա, մէկէլ ո՞րն ա էթում ա, հասնում ա Ռուսների գերեզմանների էն եանը»։



Երկու աղջիկները մէկմէկու ձեռք բռնելով «ջան գիւլում» երգելով գնացին Սուրբ Ստեփաննոսի մատուռի մօտ, ուր լցուել էին անթիւ աղջիկներ, որոնք նոյնպէս երգելով ամենմէկը մի ծաղկի բուռը բռնած չափում էին նորա երկարութիւնը և թելով կապում:

— Հոռոմսիմ, հլա յանկաճ գիր էս աղջկան, տես քմալ համ լալում ա, համ էլ խաղ ասելով իր ծաղիկը չափում ա:

— Քա էդ վի՞ր աղջիկն ա:

— Ողորմածիկ Անոյի աղջիկն ա, կասէնաս իսկը իր մէրն ա, հլա յանկաճ գիր «ջան գիւլում» ասումա՛,

— «Բերդի գլուխ ցել ունեմ,  
Ռանգ-ռանգ թել ունեմ,  
Թելիկ մէլիկ սարկաւադ,  
Ես քեզանից մէհլ ունեմ...»

— Ախար մէրն ա ընկել միտը, լալում ա, ասաց Հոռոմսիմին իւր ընկերը: Խեղճ աղջիկ. Ախչի, արի, արի գնանք, սիրտս լցուաւ, վա՛յ, Անոյ, լուսի փայ ըլնես, ինչ թափուր կնիկ էր:

— Քա էդ քնչ Անոյ ա, ես չեմ ճանաչում եմ.

— Քա մեր Մախմուռի կէսրանց գրկից Անոն

քնչ էր, Բերդի մահլէն, Ալթունի աղջիկը, ինչ որբւերցաւ, գնաց Զիբուխլու մարդի. ինչ յետոյ ասին, թէ մարդը էնդագամ տիեց, որ խեղճը դարդամահ էլաւ, մեռաւ. ու ես ինչ գիտեմ, հազար ու մէկ բան ասին...

— Հա, իմ մէրն ընձի էդոնք ղսա արել ա, համա ես չեմ տեսել եմ էդ կնկան:

Ամեն մի ագաբ աղջիկ մի նշանով քարի աակ իւր ծաղիկը չափեց. (առաւօտը պէտք է գան, տեսնեն երկարե՞լ է, թէ կարճացել, որ նորանով գուշակեն իրանց կեանքի երկարելն ու կարճելը): Յետոյ եկան ու խառնուեցին սպիտակ չարսաւով ծածկուած կանանց խմբին, և բոլորը միասին, երեկոյեան զանգակը տալու ժամանակ էր, երբ եկան, կանգնեցին Բերդի ծայրին, որ այնտեղից «Թամաշա» անեն քաղաքին և իրանց թամաշա անել տան: Այս տեսնելով՝ օտարականը կը կարծի թէ իգական սեռի մի պատերազմական բանակ է տեսնում, որ ահա յարձակուելու է քաղաքի վերայ:

«Բերդի գլուխ» կոչվում է այն դարը, որ արեւելեան կողմից իւր պարանոցը երկարացրած, մի ոտը Բանդի մահլին, իսկ միւսը կալերի մահլին դրած՝ ահագին ժայռապատ գլուխը բարձրացրած դիմում է ամբողջ քաղաքի վերայ: Թ. Ի՞նչ պատճառով է դա բերդ կոչվում, յայտնի չէ. գուցէ Անկիթամուրի կամ մի ուրիշ աշխարհաւեր ասպա-



տակողի երեսից բնակիչների համար բերդի պաշտօն է կատարել, և այդ կարծիքը հաստատում են այդ սարի մէջ գտնուող սրբատաշ սենեակները:

Յերեկը ներս ես մտնում սարի հարաւային մուտքից ժայռի միջով և մի փոքր յառաջ ես գրնում, բացվում է առաջդ մի դուռը: Գուռն սեմը երեք սմբողջ կոփած քարից է: Մտար ներս, ներկայանում է առաջդ մի խուլ Լաբիւրինթոս մշտապատ խաւարի մէջ թաղուած: Մի ակամայ սառսուռ զգալով վառում ես ձեռքիդ ճրագը, որ հետըդ տարել էիր և ի՞նչ ես զգում... Սարսափելու փոխանակ այժմ սկսում ես ափշիլ, զմայլիլ մարդկային անսանձ սխրագործութիւնների վերայ: Ի՞նչ ճարտարութեամբ շինուած մէկմէկու մէջ մինչև քանի քանի սենեակներ: Պատերը յղկած և վարպետութեամբ միմեանց հազցրած քարեր են, և մի քանիսի իւրաքանչիւր պատը կամ առաստաղը միապաղաղ քարից է կտրած և քանդակներով զարդարուած: Այդ տեղից մի ստորերկրեայ ճանապարհ տանում է գէպի գետը, որտեղից, ինչպէս կարծվում է, ջուր են տարել պոտսպարուածները:

Վերջապէս թէ ինչ ուզում է լինի, Բերդի գլուխը՝ պահպանում է իւր մէջ Նոր-Բայազէդի հնութեան էեքքերը: Սորա կատարը մի երկար դաշտավայր է, որը սկսվում է քաղաքի միջից և վերջանում է մեզ արդէն ծանօթ Ձառնաթափի՝

մօտ: Բերդի ծայրին հին գերեզմանատուն է, ուր գտնվում են սուրբ Ստեփաննոս և Աղենց գմբէթ կոչուած մատուռները: Գմբէթի տակ թաղուած է քաղաքիս հիմնադիրը — Մկրտիչ աղէն:

Ծագկաչափի ծէսը Նոր-Բայազէտում իգական սեռը կատարում է Բերդի գլխին ամեն տարի Համբարձման չորեքշաբթի օրը — ճաշից լետոյ: Իսկ երեկոյեան մութը ընկնելիս, երբ մարդկանց ոտը փողոցներից կտրվում է, տեսնում ես, ամեն փողոցով բոլորովին անխօս անց են կենում շտապով երկ-երկու, կամ երեք-երեք աղջիկներ մի-մի փարչ բռնած: Սոքա եօթը աղբիւրից այս երեկոյ ջուր են վեր առնում և ամեն աղբիւրից մի-մի քար ևս մէջն են գցում: Յետոյ ամենայն ոք ըստ մեծի մասին հասակաւոր օրիորդներ, փարչի մէջ գցում են մի մատանի, կամ կոճակ, մատոնոց և ալլն: Եւ նորանով իրանց ապագան դուշակում են:

Նուիրական փարչը երեք գիշեր բաց երկնքի տակ «աստղունք» են դնում և յառաջիկայ կիւրակէին ժողովում են միասին և սկսվում է վիճակախաղի հանդէսը: Ամեն թաղ իւր առանձին խումբըն ունի:

Հասաւ նշանակած օրը և հանդէսն սկսուեց: Յառաջ կարգով ամեն մէկը «ջան-գիւլում» երգելով



և փարչը երեխայի պէս թռցնելով խաղացրին: Յետոյ չորս կամ հինգ տարեկան երեխայ երեսը քողաւորած մէջտեղ նստացրին և փարչը, որի վերայ էր ամբողջ խմբի ուշադրութիւնը, դրուեցաւ նորա առաջ: Նորից սկսեցին մի-մի տուն «ջան-գիւլում» ասել և վերջումը «Հա՛րս, Հա՛ն, վիճակն ի բարին» ասելով հրամայում էին հարսնացած երեխային փարչի միջի իրեղէններից մէկը հանել և ում իրը, որ դուրս էր գալիս, երգած խաղի իմաստը նորան էր վերաբերում, ուստի և մէկը ուրախանում էր և միւսը տրտմում՝ նայելով երգի իմաստին: Լսենք, դարձեալ երգում են:

— «Գետը նի մտայ խոր ա,  
Քաթան շաբիկս նոր ա,  
Խաբար տարէք իմ եարին,  
Ես օլքա օլքա կորայ...»

Երեխան դուրս հանեց մի կոճակ և ամեն կողմից ձայն տուին «էս վիճն ա, էս վիճն ա», բայց ոչ ոք տէր չեղաւ:

— Հաւատաս վիճակը վատ էկաւ, կոճակի տէրը դաստու (գիտութեամբ), եա թէ չէ կսկծու տէր չի կախում ա, ասաց մէկը.

— Ես, զարմացմամբ հարցրեց միւսը, ընչի՛ պակաս վիճակ էր «Քաթան շապիկս նոր ա»:

— Բաս «Գետը նի մտայ խոր ա», կամ թէ «Ես օլքա օլքայ» կորայ:

— Ես, գետը որ կայ լիութիւն ա, աղջկայ ուզողները շատ կը լինին:

— Վայ, Մայրան, դու էտէնց ես հասկանում ես:

— Եդ կոճակը Մարգարիտինն ա, Մարգարիտին, Անույի աղջկանը. ասաց մի ուրիշը. ինքը էս տեղ չէ, տուէք ինձ, ես կը տամ իրան:

— Խեղճ Մարգարիտ, ասաց իւր մտքումը խաղի իմաստից վատ բան գուշակողը...:



Ե.

## ԵՐՋԱՆԻԿ ԲՈՊԵՆԵՐ

Այսպես ավերը մօտ քառասուն Հինգ տարեկան մի մեկամղձոտ տղամարդ էր։ Սա այն մի ևնոյն մարդն էր, որին մենք հանդիպեցանք, երբ Սմբատին և Աւետիսին յետևը գցած գնում էր կոշկակարի խանութը նորանց ուսման տալսւ։

Սա իւր երիտասարդութեան ժամանակ ճնշուած էր հօրից մնացած պարտքերի տակ և թէպէտև այժմ ազատուած էր պարտքերից, այնու ամենայնիւ մինչև մեծ տանջանքներով աշխատելն ու վրձարելը արդէն սպառվել էին նորա թարմ ուժերը և այդ հանգամանքն էր, որ դրեց նորա դէմքի վերայ մշտական մռայլոտ կերպարանքի տիպը։ Ամեն ոք, ով որ էլ լինէր, ստիպուած պատկառանքով կը վերաբերուէր դէպի Կարապետ ավերը։

Սմբատը սորա փոքր եղբայրն էր, իսկ Աւետիսը իրանց հարևան Մանուկի որդին, որը գիշեր

և ցերեկ համարեա՛ Սմբատենց տանն էր լինում վալեւելով նորանց սէրը Սմբատից ոչ պակաս։

Կարապետ ավերը միշտ պարծանքով էր պատմում իւր նախնեաց հարուստ օջախի, և իւր պապի քահանայ լինելու մասին և այս նպատակով Սմբատի կրթութեան վերայ առանձին հոգս էր տանում, որ մի օր նորան քահանայ ձեռնադրել տար և իրանց տան նախկին փառքը դարձեալ վերականգնէր։

Մեզ յայտնի է արդէն, որ Սմբատն ու Աւետիսը կոշկակարի խանութում ուսանելու ժամանակ անգիտակցաբար շուտ-շուտ յաճախում էին Բերդի թաղը, ուր սիրելի էր դարձել նորանց, առաւելապէս Սմբատին, ներս նայել մի դարվազից և կատուի հետ խաղացող Մարգարիտին երբեմն նայել և երբեմն բարկացնել, իւր այնտեղ շուտ-շուտ յաճախելուց կամաց-կամաց Մարգարիտի ուշադրութիւնն էլ գրաւեց։ Սմբատը զգում էր այդ և ուրախալի էր։ Տարիներ անցան և Սմբատին պատանեկական հասակնն հասցրին և կեանքի քաղցրութիւնը նորան զգալ տուին։

Հանգամանքը այնպէս բերեց, որ Մարգարիտը իբրև աշակերտ, ամեն օր գնում էր իրանց հարևան Գէվոյի տունը նորա կնոջ մօտ կար, գուլբայ և այլ կանացի գործեր սովորելու։

Սէթրակը—Գէվոյի որդին, որը ուսումնարանի



աշակերտներից մէկն էր, Սմբատին շատ անգամ ճաշից յետոյ բերում էր իրանց տուն և պատվում, որ վերջինս նորա դասերը սովորացնի և գլխաւորապէս թուաբանութեան խնդիրները լուծի: Սըմբատը ինչպէս դպրոցում առաջինը և ընդունակը բոլոր աշակերտներին օգնում էր, որի համար և ամենքից յարգանք էր վայելում:

Սէթրակէնց տանը Սմբատն ու Մարգարիտը միջոց ունեցան մօտ յարաբերութիւն ունենալու: Ամեն անգամ, երբ Սմբատը հեռանում էր տանից, Մարգարիտը դռան մէջ կանգնած գուլբէն ձեռին նայում էր Սմբատի յետևից մինչև որ նա անցնում էր միւս փողոցը: Միմեանց հետ աչքերի նայուածքով էին խօսում, ինչպէս երկնային օգիների մասին են պատմում ալդ. լեզուով դեռ չէին խօսացել:

Մի օր Սէթրակը բազար էր գնացել թուղթ գնելու, երբ Մարգարիտը սրահում կանգնած, կարծես, մի բանի էր սպասում: Սմբատը այդ րոպէին սենեակից դուրս նայեց և առանձնութիւնից օգուտ քաղելով սկսեց խօսակցել իւր սիրտը զրաւած աղջկայ հետ, երբ յանկարծ Սէթրակի մայրը կանչեց «Մարգարիտ»: Մարգարիտը իւր վարպետի ձայնը լըսելուն պէս մի ակնթարթում դուրս թռու Սմբատի գրկից: Նա արգէն հացատանն էր: Ինքը ջուր էր լցնում վարպետի գլխին, իսկ վարպետը գլուխը

սանրելով աղօթում էր, որ խճճուած ծամերը շուտով ուղղուէին:

Ահա նորա աղօթքը:

— «Աստուած ողորմի անլիշատակ պառաւին,  
Եօթը դիր գնաց Երուսաղէմ,  
Քարը քաղեց, աւազը մաղեց,  
Չուգեց իր մեղաց թողութիւն,  
Ուգեց իր թախկած ծամին, խառնած մանծին  
յուսակութիւն».

Այս աղօթքը Եօթը անգամ կրկնեց նա, մինչև նորա մազերը ուղղվեցան.

Այն օրից Սմբատը այլ ևս բաղդ չ'ունեցաւ յարաբերութիւն ունենալ Մարգարիտի հետ, որովհետև Սէթրակը շուտով դուրս եկաւ դպրոցից: Նա արգէն իւր հօր ցանկութեան չափ «գրել» ջնջել» սովորել էր, պէտք է առևտուր անէր, ուստի և դաս սովորելու կարիք չը կար:

Իսկ Սմբատը, երբ դպրոցի դասընթացը աւարտեց, այնուհետև առանձին կրթութիւն ստացաւ Գանձակեցի Յարութիւն վարժապետի մօտ, բայց ուսումը նորան չէր յագեցնում. մի իղձ նորա սիրտը անդադար ալեկոծում էր. Այդ իղձը Մարգա-



ընտն էր, որի հետ փափագում էր մի օր ամուսնանալ, բայց ով էր նորա կարեկիցը, նորա վերայ ուշք դարձնողը: Երկար ժամանակ ծածկելով իւր մէջ այդ գաղտնիքը հետզհետեւ ծանրանում էր իւր վերայ այդ ցաւը, ուստի անճարացած Սմբատը մի օր իւր մօր առաջ բաց արեց իւր սիրտը:

— Սդէ, ես նշանվում եմ:

— Վա՛յ, զարմանալով ասաց մայրը, դու քո գլխու իմա՛լ ես նշանվում ես:

— Չեմ ասում, իմ գլխու, ամօրն ասա, թող ինձ նշանի:

— Հլա աղջիկ էլ չենք տեսեր ենք:

— Ես տեսել եմ:

— Դու քնչ կը ճանաչես լաւ աղջիկը:

— Որը իմ սրտովն ա, լաւ աղջիկը էն ա:

— Ո՞րն ա քո սրտով աղջիկը:

— Ալթունի թուը, ասաց Սմբատը, կարծես ակամայ արտասանելով այդ խօսքը:

— Էն եթիմ (որք) աղջիկը: Ո՞րտեղ ես տեսել ես նորան:

— Շատ տեղ եմ տեսել, ամօրն ասա, տես, քնչ կասի:

— Ազաբ տղի աչքին փարդա (քօղ) կը լինի:

— Ես քեզ ասում եմ, ամօրն ասա, տես քնչ կ'ասի:

— Ո՞րը կանայ ամօրդ էտէնց բան ասա, հլա մնայ տեսնենք:

Այնուհետեւ ամեն օր Սմբատը ստիպում էր իւր մօրը, որ Կարապետ ամօր հետ իւր նշանուէլու մասին խօսք բաց անէր և նշանլուն իւր սիրած Մարգարիտը լինէր . : . :



կէ օրը քուֆտա չ'ուտի, կ'իմանայ թէ լի օր է, կամ պաս:

Երանելով Նոր-Բայազէտում ապրող օտարականին՝ ասում են.

— « Ուտես մուֆտա,  
Փմփուխ քուֆտա,  
Թալես չուֆտա »:

2.

## Մ Ա Տ Ա Ղ

Նոր-Բայազէտը իւր ունեցած սովորական կերակուրների մէջ պարծենում է քուֆտա կոչուած կերակուրով: Ամեն տեղ, ամեն երկիր քուֆտին «Բայազէտ քուֆտա» են անուանում:

Նոր-Բայազէտին այդ ժառանգութիւնը մնացել է Հին-Բայազէտից: Թէև Թիֆլիսում էլ, Երևանում էլ և շատ տեղեր օրինակ առած գիտեն քուֆտա եփել աւելի մեծ, աւելի փափուկ, բայց ամենքն էլ կը խոստովանին, որ Բայազէտ քուֆտի համը ուրիշ համ է:

Աստուծոյ իրան կիւրակէ օրը Նոր-Բայազէտի և՛ աղքատ և՛ հարուստ տներում, համարեա՛, առանց բացառութեան քուֆտի պղինձները թոնրի վերայ ղլթպլթում են: Շատ սակաւ Բայազէտցի կը գտնուի, որ քուֆտէն ամեն կերակրից չը գերադասի: Վերջապէս Նոր-Բայազէտցին, որ կիւրա-

Փմփուխ քուֆտէն է գլխաւոր պատճառը, որ Նոր-Բայազէտի ղասաթ-խանում (սպանդանոցում) միս գնելը շատ դժուար է, և առանց կռուի, համարեա՛ անկարելի է միս գնողից իւր պահանջած կտորը ձեռք բերել:

Գլխաւորապէս կիւրակէ օրերը դեռ արշալոյսը չը բացուած, ահա՛ մի ահագին գոմէշ, որին մի խումբ մարդիկ առաջներն արած քշում են դէպի ղասաթ-խանայ: Մի աղմուկ է բարձրացել խմբի մէջ, որ մի վերստ հեռուից լսողը կարծում է հըրդեհ է ընկել: Մէկը բոլոր ուժը ժողոված գոռում է «կարճակողը ես եմ բռնել», — Միւսը, թէ «ծակոսկուր իմնա»: Երրորդը — «Կուլիկը» մարդ չը բռնի հա՛, ես երեկուց եմ թամբահ արել (պատուէր տուել):

Աղմուկ բարձրացնող խումբը ահա՛ տեղը հասաւ, երբ և գոմէշի ոտները կապած վեր գցին ու



մորթեցին. Իւրաքանչիւր ոք իւր նշանակած կտորը ստանում է, և հետզհետէ խառնաձայն լսվում է ամեն կողմից, որ գոռգոռում են.

« Գաթէն... գիւնգետօր մազը, եախէն, տա-  
րախղը՝ բարմղները, իչաթիւն, բէլաթիւն, գէթա-  
եախոն, շիլաւն ու լեզոն, ոտ ու գլօխը, գիւն-  
գիւլը, պոչը, գօշը, բուդու բօշը... »

— Բուդու բօշը ես եմ բռնել.

— Չէ, ես եմ բռնել.

— Տօ, գնա՛հ, դու նոր էկար, ես գոմէշը  
դուրս հանելու վախտն եմ ասել.

— Դու գնա, թնչ մտքի ես, էս էլ էն չէ-  
լաւ . . .

— Տօ թնչը.

— Զաթի (առհասարակ) դուք շառադ էք.

— Եսվաշ, հլա թող մնայ իմն ու քոնը.

Ահա կշռվում է միսը.

— Եգքան ոսկոր մի գնի է.

— Ես, միսն անոսկոռ կըլնի,

— Տօ կակղանը բօլ արա, քուֆտացու չը կայ  
մէջն է:

— Ահա էս էլ քեզի կակղան՝ քուֆտացու,  
ոսկոռն էլ արա եախնացու:

— Դէ փողը տո՛ւր:

— Էս ա կէթամ տնից կը բերեմ:

— Կըմոռանամ է:

— Ա՛ռ դանակս, ես թէ չէ թաղբէհս պահի  
մինչև որ գնամ, փողը բերեմ:

Այսօր լուսնիսեան մի կիւրակէ օր է, և Նոր-  
Բայազէտում ո՛չ մի թոնրի վերայ քուֆտի պղինձ  
չէ երևում, շատ թոնիր էլ չէ վառվում: Ի՞նչ է  
պատճառը: Եթէ մի գլխաւոր պատճառ չը լինի,  
պէտք է կարծել, որ ամբողջ քաղաքը սուգի մէջ  
է, որ ժամանակ չ'ունենալով մտածելու պապերից  
ժառանգած քուֆտի մասին, օրը կիւրակէ կամաւ  
զրկվում են իրանց սիրած կերակրից, այն ինչ, ա-  
մեն մարդու երեսից այսօր ծիծաղ է թափում.  
Ի՞նչ կայ ուրեմն.

Մի ամսից աւելի կը լինի, որ երկնքի երեսից  
ամպերը այնպէս են կորել, անհետացել, որ կար-  
ծես, այլ ևս վերադառնալու միտք չունին. Ամա-  
ռուայ արեգակը իւր կրակի ճառագայթներով աչ-  
րում, խորովում է, համարեա՛, ամեն ինչ, և՛ քար  
ու թուփ, և՛ սար ու ձոր. Դաշտերի խոտը, որ  
մայիսին կանաչած ցնծում էր, դեղնել ու խանձել  
է և արտերը աղանձել: Ա՛խ են քաշում մի կա-  
թիլ անձրևի համար, բայց անձրև չը կայ:

Սնահաւատների մէջ կարծիք է տարածուել,  
թէ հարուստ ցորենատէրերը դիդամբ երկինքը  
կապել են, անձրև չը գայ, որ իրանց ամբարած



ցորենները թանկ գնով ծախեն աւելի հարստանան, ուստի ի վրէժ այդ հարստականները՝ մի քանի մարդիկ ժողովուրած են և մի էշ առաջները զցած հանդէսով դէպի գետն են տանում, որ այդ միասըմբակ Աբիսր Գեափառայ Նեղոսի մէջ փառաւորապէս լողացնեն: Խեղճ անասունը չի զարմանալ արդեօք, թէ այս ո՞ր խաչիցն է, որ էս շոգին ու թողին սառը բաղանիքով պատվում են իրան և ջանը դինջացնում, քանի որ իւր կեանքում բացի ծեծից երբէք պատիւ չի տեսել: Հարցնող լինի, թէ այդ քնչ էք անում: Վշտնք լողացնում, որ անձրև գայ: Կը լինի պատասխանը:

Մի քանի երեխայք էլ «Խուչկուրուրիկ» են շինել, այն է մի ցախ-աւելի վերայ հագցրել են մի հին արխալուղ և միջից մի փայտ անցկացրած ու բռնած ման են ածում տները: Ամեն տան առաջ մի թասով ջուր են ածում նորա գլխին, որ անձրև գայ:

Իայց ժողովրդի մեծամասնութիւնը, կարծում է, որ անձրև չը գալու պատճառը իրանց անօրէնութիւնն է, որ գործել են Աստուծոյ պատուիրանքի դէմ, մինչև որ Աստուած բարկացել է և անձրև չէ տալիս, ուրեմն պէտք է Աստուծոյ սիրտը մի բանով քաղցրացնել, որ հաշտուի և անձրև տայ, հաց բուսնի, որ երեխէքը սովից չը կոտորուեն:

— Ամեն տարի այս ժամանակը պապական սովորութիւն ա էլել, որ մատաղ անենք, մինչև երբ մեր Աստուածը մոռանանք: Արարած աշխարհ, թէ գեղ, թէ քաղաք Մեծ-Ջատիկի առաւօտը մատաղ կ'անեն, մատաղի մսով կը զատկուեն, մենակ մեք այդ սովորութիւնը չ'ունենք: Մերն էլ, որ կալ, սուրբ Յովհաննէսի մատաղն ա, անձրևային տարի էն էլ չենք անում: Աստուած էլ երես ա դարձնում անձրև չի տալը, մարդ ջուրէք, փող ժողովեն, որ մատաղ անենք: Այս էր ժողովրդի պահանջը:

Ահա երկու ընտրած մարդ բազարի մէջ այս ու այն պատահողից մինչև երկու երեք շաբաթ մատաղի փող ժողովեցին, տասը հատ եզը ու երեք ոչխար, նորա չափ էլ ալիւր ու բրինձ գնեցին և ալիւրը տներում հաց թխել տուեցին, մնացել էր, որ այս կիւրակէին մատաղ անեն: Նախընթաց օրը Պօղոսն ու Մուխսին մի քանի մարդով մատաղի հացը, քառասուն-յիսուն կաթսաներ, վառելիք և իրանց գիշերը մնալու համար վրաններ և ինչ որ հարկաւոր էր մի քանի սալերի վերայ բարձած մատաղացուների հետ տարան ս. Յովհաննէսի չիմանը, որ գտնվում է Նոր-Բայազէտից դէպի արևելք: Երեկոյեան այնտեղ մատաղները մորթուեցան, պատրաստուեցան: Կէս գիշերը անց էր, երբ Պօղոսն ասաց, օջախները վառելու ժամանակ է:



Առաւօտուն կարելի էր տեսնել դաշտի երես գետի ափում կարգ-կարգ փորուած օջախները, որոնք վառվում էին պղինձների տակ: Ռեռ ծառայողներից բաց ոչ ոք չէր երևում:

— Ռէ պրծէք, շուտ արէք, կարգադրում էր Մուխսին, հիմի պատարագը դուրս կը գալ, էն դաշանը եղ լից, էն դաշանը էփաւ, օջախից լետ քաշէք, էն խաշլամէն տարէք, չադրը ջոկ պահէք, դէ պրծէք, հիմի որտեղ որ ա սաղ Բեաժաւ կը թափեն, կը գան»: Ահա պատճառը, իմ սիրելի ընթերցող, թէ ինչո՞ւ այսօր կիւրակէ էր և Նոր-Բայդէտում քուֆտա չէր եփվում:

Ամեն շաբաթ ու կիւրակէ օր, որ պատարագը երկու եկեղեցումն էլ մատուցանվում է, այսօր ի պատիւ մատաղի ս. Կարապետ եկեղեցու հոգևոր դասն էլ ս. Աստուածածին եկեղեցին գալով միատեղ են աղօթում, որ պատարագը դուրս գալու՞ն պէս թափորով գնան ս. Յովհաննէսի չիմանը: Ժամասացութիւնը վերջացաւ, եկեղեցականք զարգարուած դուրս եկան դուռը:

— Սմբատ սկսիր, քո ձայնը անուշ ա, ասաց հանդիսապետը, և Սմբատը, որ տիրացունների մէջ նշանաւոր էր և բուռվաւ էր կրում, սկսեց Ենորհալու գղջունակ երգը՝ «Աշխարհ ամենայն» և թափօրը ճանապարհ ընկաւ: Թափօրին հետևում էր խուռն բազմութիւն արական սեռի:

Ի՞նչպէս չը սիրահարուէր Մարգարիտը Սմբատի վերայ, մինչդեռ Սմբատը, բացի այն, որ քաղցրը բնաւորութիւն և դէմքի գեղեցկութիւն ունէր, այլ և նորա ձայնից ունկնդիրների հոգին յափըշտակվում էր: Ռժ էր լսել նորա երգելը ու չէր զմայլուել: Շատ մարդ կիւրակէ առաւօտ շուտ զարթնում, եկեղեցի էր գնում միայն նորա համար, որ Սմբատի «Առաւօտ լուսոյ» երգելը լսէր: Գարասիրտ մարդ պէտք է լինէր, որ իւր արտասուքը զսպել կարողանար այն ժամանակ, երբ Սմբատը եկեղեցում երգում էր «Զարթի՛ք, պատրաստեցէ՛ք իւր լապտերաց ջերմ արտասուս, ալէլուիա»: Մի անգամ Ծաղկազարդի օրը, երբ Մարգարիտը հազորդուելու համար եկեղեցի էր գնացել՝ Սմբատի երգի ձայնը լսելով ասել էր:

— «Զան, ջան, ջահէլ, ջիվան, ջանիդ մեռնիմ, Զանգակ ձէնիդ զուրբան ըլնեմ»:

Թափօրը հասել էր քաղաքի եզրը, որտեղից սկսվում էր ս. Յովհաննէսի չիմանը, երբ «Աշխարհ ամենայն» աւարտելով, սկսեցին «Դարձո՞ զցասումն» ապաշխարութեան շարականը: Մի փոքր յառաջ գընալուց լետոյ վերջապէս հեռուից երևացին վրանները, օջախները, որտեղից մսի անուշահոտութիւնը մուխ ու ծուխի հետ միախառնուած բարդ-



բարձր բարձրանում էր գէպի երկինք: Մատաղ եփողները շէրեփները ձեռքներին թանձր ծխի մէջ աղմուկ բարձրացնելուն շտապ-շտապ որ չէ այս ու այն կողմն էին ընկնում, հեռուից կարծվում էր, թէ Բաբելոնի հնոցի վերայ ձէթ ու նաւթ աւելացնող Քաղզէացիներն են:

Թափօրը նշանակած տեղը հասնելով ճաշու երեք «ողորմեան» ասացին, յետոյ ժողովուրդը ծունկ չոգեց և դործակալը մի քանի խօսքով մատաղի նշանակութիւնը բացադրեց և ապա սկսեցին ողբաձայն «Տէր ողորմեա», յետոյ օջախներին մօտ գնալով՝ օրհնեցին մատաղը, վերջը ամենքը, տղամարդիկ առանձին խմբերով, իսկ երեխայք առանձին նստեցին:

Մարդկանց առաջը փռած լաւաշների վերայ շէրեփ-շէրեփ տաք-տաք բրնձախառն մատաղամիսը բաժանվեցաւ: Մի քառորդ ժամի մէջ տասներեք տաւարի միս կերան, կշտացան, բերանները սրբեցին ու վեր կացան, աղքատների բերած պուտուկները մատաղաջրով լցուած յետ գնացին, մինչև անգամ մօտիկ գիւղացիք ևս մատաղից ճաշակեցին, հասակաւոր մարդիք տուն գնացին, իսկ երիտասարդ տղերք Պօղոսից մի քիչ խաշլամայ ուզեցին, և աղլուխի մէջ փաթաթելով լողանալու համար Ձանգի գեօլ գնացին:

է.

## ՀԱՐՍԱՆԻՔ.

Անց/ացաւ ամառը, եկաւ աշունը: Մանուկը—Աւետիսի հայրը մի օր մի աղջիկ էր տեսել ու հաւանել, ուզեց իւր որդու համար, և մի քանի ամսից յետոյ հարսանիքի պատրաստութիւն տեսան: Սմբատը ուրախ-ուրախ ընկած բազարում թերթեր էր բաժանում, որոնց վերայ գրուած էին հետևեալ տողերը:

«Մանուկ Իրիգորեան խնդրէ ի Զէնչ հանգերձ ընտանեօք Զերովք դալ և վայելել ուրախութիւն հարսանեաց որդւոյ իմոյ Աւետիսին, 17-ին դեկտեմբերի 18... ամի. երկուշաբթի, երեկոյեան ժամուռն»:

Քաւոր-աղի «կնքահօր» տունը արդէն մի շաբաթ առաջ Մանուկն ու Կարապետ ավերը մի գլուխ շաքար) երկու շիշ արաղ ընծայ տանելով առանձնապէս հրաւիրել են նորան:



Մի կողմից էլ խնդրակը—մի հասակ առած կին—մի փոքր տղայ առաջը գցած ման էր գալիս հրաւեր ստացողների տները, և ամեն մի տուն մտնելիս սովորական բտրէր տալուց լետոյ աւելացնում էր, «Զմրութը (Աւետիսի մայրը) շատ կարոտով բարև անում ատեն, ասում ատէս ուրախութիւնը իրանց ազաբներին ընի, հալբաթ-հալբաթ (անպատճառ) ամենով գան իմ որդու ուրախութիւնը»:

Տան տիկիները, որը արաղ, որը, չամիչ, որը փող էին ընծայում խնդրակին, և «շատ լաւ կըլինի» ասելով ճանապարհ գցում: Այսօր Աւետսենց տանը միս մորթէքի հանդէսն էր կատարվում: Նաղարա գուռնան ածում էին բակումը, ղասաբ-Մուխսին էլ վաղուց եկել, դանակը սրել պատրաստել էր: Հետգհետէ ժողովում էին մօտիկ բարեկամների կանայք ու հարսներ և բակումը միմեանց ճկութներից բռնած մեծ շրջան կազմելով պար էին գալիս: Շաջանի մէջտեղ Չալոն—Աւետսենց պարարակ եզը—ոտները կապած վեր գցին: Մուխսին Չալոյի կոկորդը դէպի արեւելք դարձրած դանակի բերանով խաչ քաշեց կոկորդի վերայ ու կտրեց և արիւնը ֆշֆշալով հոսեց չոր մօխրի վերայ, որ առաջուց պարզած էր բակի մաքրութիւնը պահպանելու համար: Այս միջոցին վրայ հասաւ Զմրութը ձեռք փխեց արեան մէջ և խա-

չաձե քսեց դռան ճակատին, որ չար աչք չը դիպնի օջաղին: Ամեն կողմից, կտուրը, պատերի վերայ, դռանը մարդիկ էին թափած թամաշա տնում, որոնցից պատուաւորներին Մանուկը արաղ էր բաժանում:

Հետեւեալ աւուր երեկոյին պէտք է սկսուէր հարսանիքը: Յերեկը սովորականից աւելի բարկ վառվում էր թոնիրը, այնպէս, որ մուխն ու ծուխը բռնել էր ամբողջ տունը: Օրը մի փոքր էլ քամի էր, երգիկից ծուխը շատ ծանր էր քաշվում: Թոնրի վերայ շարուած էին պղինձներ, որոնցից մէկում Չալոյի միսն էր ղլթպլթում, միւսում բրինձը, մի փոքր պուտուկի մէջ էլ խորովածներ իւղի մէջ տապակվում, բայց տօլմէն, ղեռ հարս ու աղջիկ միմեանց մօտ հաւաքուած նոր էին պատրաստում ու դարսում առանձին պուտուկի մէջ, որ թոնիրը իջնելուց—վառվելուց լետոյ գրուէր տակը մինչև երեկոյ: Մանր երեխէքն էլ, որը լալիս էր փլաւ էր ուզում, որը խորոված: Քէվանի Մաքան էլ—խոհարարուհին, որին կովելով, որի ոիրտը շահելով հանդարտեցնում էր. «Էսա էփաւ հա, էսա-փլաւ կը բերեմ հա և մի կողմից էլ շերեփը ձեռքին կերակրների համն էր տեսնում և կամ թոնիրը մանրացան ածելով կրակի բորբոքումըն էր սաստկացնում:

Կէս օրը անց էր, երբ Զմրութը ասաց— Աւե-



տիս, որդի, մութն ա, էլ երբ պետք է Փրկիչներ (գերեզմանատուն) էթաք: Տեղական սովորութիւն է, որ ամեն պսակուող, հարսանիքը — մարմնական ուրախութիւնը սկսելուց յառաջ իւր հանգուցեալների գերեզմանները պետք է օրհնել տայ, նորանց կենդանի աղօթքն ու օրհնութիւնը ստանայ և ապա գայ թագն ու պսակին արժանանայ:

Աւետիսը մօր հրամանը լսելուն պէս կանչել տուեց ծխատէր քահանային, Սմբատի և մի քանի մօտիկ ազգական տղերքի հետ վեր առան հետները մի աղլուխով երկու գաթայ, մի կտոր հալուայ և շիշ արաղ գնացին գերեզմանատուն, օրհնեցին, կերան, խմեցին, ողորմի ստացին, քահանային էլ աջամբոյր տուեցին և վերադարձան:

Երեկոյին մուխն էլ էր քաշուել ծուխն էլ, կերակուրները պատրաստ շարուած էին թոնրի վերայ ու ծածկած: Մսի ու իւղի հոտը օդն էր տարածուել, այնպէս, որ ներս մտնողի բերանը ջրակալում էր, ուր մնար մի քանի պառաւներինը, որոնք նստած թոնրի մօտ յօրանչելով զրոյց էին անում:

Աւետսենց թալվէն այսօր անասուններ չը կային, դօրանց փոխանակ պետք է հիւրեր լինէին, ուստի բոլորովին աւելած, սրբած և յատակի վերայ չոր խոտ էր փռած, իսկ խոտի վերայ թաղիքներ ու գորգեր սլարգած, և վերին կողմը, ուր

սովորաբար Չալոն էր կանգնում, գորգի վերայ դռշակ էլ էր փռած, ուր պետք է նստէին քահանան և քաւոր-աղէն:

Ձուռնաչի Իսկոն իւր նաղարաչու հետ դուրս եկաւ բակը «նաւողտ» տալու, առաջին անգամ սկսեց ծանր «սահարի» առանց նաղարի, և յետոյ եղանակը թեթեւացնելով ածեց «լագգէվարի» երբ և նաղարէն մասնակցեց նորան: Մի տղայ մէջ ընկնելով սկսեց պարել, ոչ այնքան համեմատ եղանակին, որքան գիտութեամբ խենդի պէս ծամածռութիւններ անելով:

Երբ մութը կոխեց բոլոր աշխարհ, սկսեց երկընթից ձիւն թորթորալ, հարսանիքատուն մտնողն ասում էր, «հարս ու փեսէն աման շատ են լիզել, ձուռն ա գալում ա»:

Հիմա թալվի մէջ ճրագներ վառեցին և սնէրի ճրագթաթերի վերայ դրին, մի քանի շամադաններ էլ, որոնք մէկ կամ մէկուկէս արշին երկարութիւն ունէին, ճրագուէ վառած մոմերով շարուեցին մսուրների հանդէպ, և փաթուղի կողոր լապտերները ջահիլ տղերքի ձեռքերին նոր-Բայագէտի փողոցներում այս ու այն կողմն սկսեցին ֆռֆռալ հանդիսականներին հարսանիք հրաւրելու: Այն տունը, որ ծեր կամ պառաւ կար, նոքա միայն մնացին, շատ տուն կողպուեցաւ այս գիշեր, որովհետեւ «հանդերձ ընտանեօք» էին հը-



րաւերուել: Ամենքն էլ պահու շորեր հագած, մանաւանդ կանայք, որոնք մի-մի զարգարուած կուռք էին դարձել, որի գէյրէն, որ հասարակ էր, կամ որին մախմուռ քեաթիբա կամ նոր կօշիկներ չունէր, հարեաններին էին խնդրել և նորանցով զարգարուել: Շատերի ճակատի և պարանոցի շաւրան ոսկիքն էլ «ամանաթ» էին: Հաւատարմութիւնը այս գէպը ունէր փայլում է իւր բոլոր կողմերով:

Հարսանիքի բակում վառվում էր շամալը, ճրագուտած ցնցոտիներից պատրաստած ջահը, իսկ սրահում մի սեղանի վերայ շարուած էին չոր մրգեղէններով մի քանի ափսէներ, արաղի ու գինու շիշեր: Իւրաքանչիւր հրաւիրուած ընտանիք, երբ մտնում էր սրահը, իսկոյն մի բաժակ արաղ կամ գինի էին առաջարկում ընտանիքի գլխաւորին, որը խմելուց յետոյ մի կամ երկու մանէթ «խալէթ» էր դնում ափսէի մէջ և ներս ընդունվում, տղամարդիկ թալվէն, կանայք ու աղջիկներ հացատուն, իսկ փոքր տղայք—թալվի սաքուն: Հետզհետէ հանգիստականների թիւը շատանում էր: Եկաւ և քահանայն, ոտքի կանգնեցին բոլորը և ողջոյնը ընդունելով հրաւիրեցին նորան դօշակի վերայ: Մատուակը, արաղի գաւը ձեռքին, իւրաքանչիւր եկողին արաղ էր առաջարկում:

Մի փոքր մնաց քահանան կարգադրեց, որ

գնան քաւորի լետ: Նաղարա զուռնան ածեցին, տաս-տասներկու երիտասարդներ վառած մեղրամօմերը ձեռքերին ճանապարհ ընկան դէպի քաւորի տուն և քաւոր-աղին իւր ամբողջ ընտանիքով և դեռ մի երկու-երեք էլ փեսայ ու մարդու տուած աղջիկ իւր ընտանիքի վերայ աւելացրած, որոնք տեղական բառով «քաւորի պլընդ» են կոչվում, հետեւը առած մեծ հանգէսով հարսանիք բերին: Առաջից դնում էր նուագածունների խումբը, նորանից յետոյ ծառայի գլխին դրած քաւորի խալաթը, որ մի մեծ սինու մէջ երկու-երեք լիտր չամիչ ու խուրմա էր, չորս հատ մանրագլուխ շաքար, ամեն մի շաքարի գլխին մի-մի վառած մեղրամօմ, երկու հատ ևս կէս ֆունտ ծանրութեամբ մօմեր, նորանից յետ գնում էին հրաւիրակները և պար եկողները, յետոյ ջահը, լապտերներ, և ամենի վերջը քաւոր-աղէն իւր ընտանիքով:

Սրահի սեղանը ի պատիւ քաւորի նուագած և դեռ մի քանի ափսէներ էլ աւելացրած էր: Սոքա միւսներից աւելի պատիւ ստացան, մանաւանդ քաւորակներ: Խումբը նաղարի դղրդոցի հետ երբ ներս մտաւ, ամենքը, բացի քահանայից, ոտքի կանգնեցին և քաւոր-աղին հրաւիրեցին քահանայի մօտ նստել: Խալաթի սինին դրուեցաւ քահանայի առաջ, որը մի-երկու բուռ միրգ առնելով և



«Աստուած օրհնի քաւոր-աղին» ասելով հրամայեց ման ածեն սինին ի տես բազմականների և ամենքը «չէն կէնայ քաւոր-աղէն» ասացին և սինին յանձնուեցաւ քիլարչուն—հարսանիքի կառավարողին:

Իսկ կանայք ի հարկէ հացատուն մտան կանանց մօտ: «Քաւորի կնիկն էկաւ, տեղ արէք» քաւորի կնիկն էկաւ, տեղ արէք» ձայն էին տալիս ամեն կողմից: Այս յուշարարութիւնը նորա համար էր, որ հարսանիքում կանանց մէջ կարգով նստել չը կայ, այլ մէջտեղ, չորս հինգ հոգուց բաղկացած փոքրիկ խումբերով խառն ի խուռն նստում և գլուխ գլխի տուած ամեն կին իւր տան որպիսութիւնն է պատմում: Հազիւ լսելի եղաւ ամենին, սթափուեցին իրանց պատմութիւններից, ճանապարհ տուին քաւորի կնիկան, որը անցաւ ամենից վեր նստեց և ամենքն իրանց յարմար տեղը նստեցին:

Հիմա հարսնու աղջիկների մէջ զովուոցէ ընկել, «դէ շուտ արէք, հինայ տանելու ժամանակն է»: Այս անգամ էլ զուռնաչին կանանց մէջ մի ծանր եղանակ ածեց և մի կին հինէն գլխին դրած ծանրաշարժ կոտրատուելով պար էր գալիս: Ապա քսան երեսուն փոքր ու մեծ հարսնու աղ-

ջիկներ նաղարի առաջնորդութեամբ հինէն վեր առած ճանապարհ ընկան: Երբ հասան խնամու դուռը, զուռնաչին եղանակը փոխեց և հարսնու աղջիկ պար բռնեցին: Խնամու տանից հիւրերը դուրս թափուեցան թամաշա անելու: Մի քառորդ ժամից յետոյ երբ պարը վերջացաւ, բոլորը ներս հրաւրուեցան: Աղջիկները նորահարսի մօտ խօսեցին, ծիծաղացին, բայց նա տխուր էր, նորանց ծիծաղը իրան դիւր չէր գալիս և նորանց հագարից մի հարցին գլխով էր անում: Նորահարսի մայրը նորեկ հիւրերին չամիչ բաժանեց, ամենին էլ ուրախացրեց: Յետոյ մէջտեղ բերին միմատուցարան, որի մէջ չամիչ էր ածած և վերան դրած էր նորափեսայի համար պատրաստած զանաուզեայ մի շապիկ և կապոյտ մահուդից մի շալվար: Խումբը շապիկ փոխանը վեր առած վերադարձան դէպի տուն, որը մարդկանց ու կանանց ցոյց տալուց յետեյ նոյնպէս յանձնեցին քիլարչուն:

Քահանան վեր առաւ քաւորի բերած երկու մօմերից մէկը և ասաց.—Օրհնած ժողովուրդ, այս մօմը եկեղեցուծն է, պէտք է ծախուի, ո՞վ աւելի գին տայ նորանն է: Եկեղեցու օգտին է: Աստուած ձեզ օրհնի, քանի կարաք շատ-շատ տուէք:

— Տէրտէր մէկ աբասի ինձ մօտ, ասաց երիտասարդներից մէկը:

— Մէկ աբասի, կրնեց քահանան:



— Հինգ շահի, ասաց միւսը:

— Հինգ շահի, Աստուած ձեզ օրհնի, շատ-  
շատ տուէք:

— Երկու աբասի, ձայն տուեց երրորդը:

— Երկու աբասի, կրկնեց քահանան:

— Տասը շահի, ասաց չորրորդը:

— Տասը շահի, դէ Աստուած օրհնի, տասը  
շահի, առեցի հա, տուեցի հա:

— Երեք աբասի, ասաց նորափեսայի աղբրա-  
ցու Սմբատը, որը կանգնած մատուռակի պաշտօն  
էր կատարում:

— Աստուած օրհնի իմ Սմբատին, երեք աբա-  
սի, տուեցի հա, երեք աբասի, տուեցի հա...

Լռութիւնը այս բոպէիս տյնպէս էր տիրել  
բազմականների մէջ, որ ճանճը դգգար, աղաղակի  
ձայն կը կարծուէր: Քահանան մի փոքր էլ սպա-  
սեց և ասլա ասաց—երեք աբասի, դէ Սմբատ-ջան  
փողը բեր:

— Տէրտէր, պսակի ժամանակ մի «Սուրբ խա-  
չիւս» էլա, կասեմ, ասաց Սմբատը, էն էլ իմ  
հախը:

— Էս եկեղեցւ օգտին ա, ա՛յ որդի, դու էլ  
գիտես, որ ինձ մէ կօպէկի օգուտ չունեմ սրանից:

— Հանաք եմ անում, տէրտէր, մօտ գալով ա-  
սաց Սմբատը, փողը վճարեց, տէրտէրի աջը համ-  
բուրեց և մօմը ստացաւ:

— Փոխը քեզ ընի, փոխը քեզ ընի, ձայն  
էին տալիս ամեն կողմից, երբ աճրգախօսութիւնը  
վերջացաւ:

Սմբատը ամենին գլուխ տալով ի նշան շնոր-  
հակալոթեան գնաց իւր տեղը կանգնեց. մօմը  
կապեց մի սրի վերայ, որ պսակ գնալու ժամանակ  
նորափեսային ազաբբաշի լինէր, այն է, մօմը վա-  
ռած պէտք է փեսայի կողքին կանգնի և ամեն  
դռան շէմքից անցնելուս սուրը նորա գլխին պա-  
հի, որ չարքերը չը խփեն նորան: Քահանան հրա-  
մայեց, որ թագաւորի (փեսայի) հանդերձը բերեն:  
Բերեցին: Հանդերձի առաջ մէջտեղը փեսան, իսկ  
աջ ու ձախ կողմը քաւորն ու ազաբբաշին չոգեցին:  
Քահանան վեր կացաւ, հանդերձը օրհնեց: Աւետա-  
րան կարդալու ժամանակ միայն ժողովուրդը ոտքի  
կաղնեց, և օրհնութիւնից յետոյ ամենքն էլ նըս-  
տեցին:

— Դէ Աստուած օրհնի, ասաց քահանան մաշ-  
տոցը առաջ տանելով, բօլ-բօլ էկէք, հիմի ինչ որ  
տաք իմն ա:

Յառաջ փեսայն, յետոյ քաւորն ու ազաբբաշին,  
ասլա բազմականք մէկ-մէկ եկան չոքեցին մաշ-  
տոցի առաջ համբուրեցին ու խաչ-համբուր տուե-  
ցին:

Արդէն գիշերուայ կէսը անցել էր: Քահանան  
հրամայեց, որ հացը քաշեն: Այս լսելուն պէս մեր



սաղիքը (մատուռակ) համարեա՞ իրար խառնուեցին, մէկը երկար սուփրէն էր փռում, միւսը հաց պարգում, մի ուրիշը աղամաններ, գդալներ և բողկ էր բաժանում և հետզհետէ շարուեցան պանրի ամանները: Քահանան հացն օրհնեց և վերջը աւելացրեց «Աստուած շնորհաւոր անի: Բոլոր բազմականները կրկնեցին նոյնպէս «Աստուած շնորհաւոր անի», և սկսեցին հաց ուտել: Քահանան արաղի բաժակը ձեռքին սկսեց խօսել:

«Ժողովուրդ, Աստուած օրհնի. Աստուած էս հարկը շնորհաւոր անի, հարսին ու փեսային սուրբ պսակին արժանացնի, մի բարձի ծերացնի»: Եւ դառնալով գէպի փեսայի հօրը, որը հեռուն կանգնած էր, Մանուկ, աչքդ լուս, Մանուկ, միշտ էսպէստ ուրախութիւն տեսնես, քաւոր-աղա, ողջ ըլնես, անփորձ անսասան մնաս, միշտ քաւոր-աղա ըլնես, փոխը պտտի քաւորին ըլնի, վերը որդի կայ, Աստուած նորան էլ արժանացնի էս ուրախութիւնը, վերը չը կայ, Աստուած թազայ տայ ուրախացնի, Տէր-Աստուած քեզ փառք»:

Քահանան իւր ճառը վերջացրեց և արաղը խմեց, բայց զեռ բոլորովին կուլ չը տուած, — Օրհնեա՞ տէր, անուշ, օրհնեա՞ տէր, անուշ, օրհնեա՞ տէր, անուշ, մէկ-մէկու յետեւից ձայն տուին բոլոր բազմականները: Քահանայից յետոյ խօսեց քաւոր-աղէն և արաղը խմեց և նորան հետեւեցին

բազմականները: Մինչ սորանց արաղ խմելը արդէն մի մատուցարանի մէջ լցրած խորովածը մի գդալ էլ գլխին դրած սաղին առաջարկում էր վեր առնել և հիւրերը գդալով, որը երեք, որը հինգ կը տոր վեր էին առնում ու դարսում հացի վերայ: Շատերին էլ, որ չէր յաջողվում և գդալի մէջ մի կտոր էր գալիս, այնքանով բաւականանում էին, որովհետեւ երկրորդ անգամ առնելը ամօթ էր: Ապա հետզհետէ բերին բօգբաշը, ասլմէն և վերջը փլաւը:

Հաց կերութիւնից յետոյ, որը վեր կացաւ, տուն գնաց, որը տեղն ու տեղը Մորփէոսի գիրկն ընկաւ Բագոսական ջերմեռանդութիւնից ստիպուած, իսկ մնացեալները հերթով երգում էին պարսկերէն գիւանի, Քէշիշ-Օղլի, Քեօռ-Օղլի և այլն և ոմանք առանձին նստած և զուռնի փոխանակ մեղմաձայն նայր ածել տալով պարում էին:

Քահանան ներքև նստողներից մէկին կանչեց, — Կարոյ, Կարոյ, Աստուած օրհնի, վեր կաց արի ինձ մօտ մի քիչ բան ասա, ուրախանանք:

Կարոն մի երիտասարդի չոքացրեց իւր մօտ և հարցրեց, տէրն ես:

— Տէրն եմ, պատասխանեց երիտասարդը:

— Կա՞ծ տամ, բարակ մանես, թիակ տամ, գուռը քրթես, օխտը աման մի հետ չրթես, ասա՞, տէրն ես:



— Տէրն եմ:

— Բընես հաւեն, իջնես թաւեն, չը պրծնես  
ատմացաւեն, մահրում մնաս գինու գաւեն, ասա,  
տէրն ես:

— Տէրն եմ:

— Տաւ ու չոռի հիլլէն ուտես, ջոջ թուանքի  
գիլլէն ուտես. տէր-Սահակի սիլլէն ուտես, ասա,  
տէրն ես:

Կարոն ձեռը վրայ բերեց և մի շրջական ապ-  
տակ խփեց երիտասարդի երեսին, որը վեր կացաւ  
ու փախաւ, ուրախութիւնն ու ծիծաղն ընկաւ  
բազմականների մէջ:

Մտնենք սաքուն, տեսնենք մանկանց խում-  
բը՝ մեր մատաղ սերունդը ինչո՞վ է զբաղուած:  
Սոքա էլ հաց կերել պրծել են և սկսել են ման-  
կական խաղեր:

Մի խումբ մանր երեխայք երկու մատով մի-  
մեանց ձեռքի երեսի կաշուց բռնած իրար ձեռ-  
քից կախ ընկած բոլորը միասին երգում են, —  
«Ճի՛վ, ճի՛վ, ճի՛վ, թը՛ռաւ գնաց պապոնց կտուր»  
և ձեռքի կապը քանդելով բարձրացնում են ձեռ-  
քերը վերև: Յետոյ մի առանձին եղանակով եր-  
գում են հետևեալ մանկական տաղերը:

Յուրտ ա, ցուրտ ա, մօլլէն Գուրդ ա, տէր-

տէր Խայ ա, ջամկի թայ ա:

Էգէ, դուգէ, դուգս ա, ոսկէ կոճակն արբար  
ա, մախթէ կոճակ, ճուկ պլոճակ:

Քարագործ քարերն էլայ, Ասպատուր, սարերն  
էլայ, էշը գուայ, դու փոփուայ:

Ակլատիգ, չուան վիգ, գառէ մուռթ, մա-  
գէ պոչ:

Տղայ, տղայ, ոսկէ ջղայ, ան քո ճանիր, գնա,  
խաղա՛, ալուր մաղեմ, գամ քէ պալսեմ:

Աղջիկ, անղջիկ, քարէ չղջիկ, ան քո տիկնիկ,  
գնա՛, խաղա՛, ալուր մաղեմ, գամ քէ թաղեմ:

Աքլոր տիքլոր, չարուխ չամբար, մշկի զամ-  
բար, ազի հուզի թուրքի թագի, ղլըջի. մստի,  
եանալի...

Մի ուրիշ խումբ շրջանակի ձևով նստել եր-  
կու ձեռքները գետնին դրած, նորանց պապը (ա-  
ւագ ընկերը) հետևեալ ամեն մի բառը «սեղով»  
մատով համարում է նորանց ձեռքերի վերայ. «Տի-  
տղիկ, տիտմարողիկ, դուռնաթողիկ, էփած գա-  
թէն, եղն ա վրէն, կը պճպճայ, ուտայ էնի, խմայ  
էնի, ըլնի էնի: Վերջին բառը ում ձեռքի վերայ  
որ ասվում է, այն ձեռքը դուրս է հանվում և  
բառերը նորից կրկնվում է մնացեալ ձեռքերի վե-  
րայ: Վերջին մնացող մի ձեռք ումը որ է, նորա  
մէջքին բռնեցքով ծեծում են ու ծիծաղում:

Յետոյ պապը «ուչտի, ուչտի, ղառ-ղառ ուչ-



տի, (թռաւ, թռաւ, ագռաւը թռաւ) ասելով ձեռքը բարձրացնում է, և բոլորը հետևում են նորա օրինակին ձեռները բարձրացնելով, որովհետև ագռաւը թռչուն է: Իսկ երբ պապը ասում է «Ուշտի, ուշտի, փլաւ ուշտի» կամ, դանակ ուշտի՝ ու ձեռը բարձրացնում, եթէ մէկը սխալմամբ նոյնպէս ձեռը բարձրացնում է, նորան ծեծում են, որովհետև փլաւը կամ դանակը թռչուններ չեն:

Յետոյ սկսում է պապը. «Հէքիաթ, հէքիաթ պապս ա, արջաքուռակ տակս ա, ձին հէժա, գացի էրեան, հաւերին կուտ բերեցի, հաւերն ինձ մի ձու-ձու տուին. ձու-ձուն տուի պառաւին, պառաւն ինձ մի գաթա տուեց, գաթէն խտուի չոբանին, չոբանն ինձ մի գառը տուեց, գառը տուի Աստծուն, Աստուածն ինձ մէ աղպէր տուեց: Ախպէր, անպէր, ջան ախպէր, ջանս քեզ շուրբան ախպէր, դու բերդի գլխին ախպէր, ես բերդի տակին ախպէր»: Յետոյ բոլորը միասին:

«Արէք, տեսնենք, մեր բոստանը ո՞րն ա կերել:— Է՞ծն ա կերել: Արէք, տեսնենք, մեր է՞ծը ո՞րն ա կերել.— Գէլն ա կերել.— Գէլը ո՞րն ա կերել.— Թիւանքն ա կերել: Թուանքը ո՞րն ա կերել.— Ժանգն ա կերել,— Ժանգը ո՞րն ա կերել.— Աւազըն ա կերել.— Աւազը ո՞րն ա կերել.— Զուկն ա կերել.— Զուկը ո՞րն ա կերել.— Իսանն ա կերել.— Իսանը ո՞րն ա կերել.— Հողն ա կերել.— Հողը ո՞րն

ա կերել.— Օձն ա կերել.— Օձը ո՞րն ա կերել.— Լանկլանկն ա կերել.— Լանկլանկը ո՞րն ա կերել.— Կրակն ա կերել.— Կրակը ո՞րն ա կերել.— Զուրն ա կերել.— Զուրը ո՞րն ա կերել.— Բոստանն ա կերել: Բոստան ջրին, ջուր կրակին, կրակ լանկլանկին, լանկլանկն օձին, օձը հողին, հողն իսանին, իսան ձկան, ձուկն աւազին, աւազ ժանգին, ժանգ թուանքին, թուանք գէլին, գէլն է՞ծին, է՞ծ բոստանին, եսլալա...

Գնանք մի ուրիշ խմբի մօտ, որոնք միմեանց առաջարկութիւն են անում: Սոքա ամենից հասակաւորներն են:

Թէ ասիր «Լա՛ֆաթա».

«Լա՛ֆաթա».

Ես դու ուտենք մեղրով գաթայ:

Թէ ասիր «մա՛րագ».

«Մա՛րագ».

Ուտես մեղրով կա՛րագ.

Թէ ասիր «նո՛ւռ».

«Նո՛ւռ».

Էթաս վանքի դո՛ւռ.

Թէ ասիր «գէ՛րան».

«Գէ՛րան».

Ուտես մածնի մէրան-

Սկսուեց տեղական շուտասելուկները.



Ձոչ ձորի ձան ջուրը ծծեմ. — Նանճը նստիր արծաթ կը տաշայ. տպուռ, արծաթատաշ ճանճ, տպուռ, արծաթատաշ ճանճ:

— Ձոչ ձորին ձինը ջուրը ծռել...

Յետոյ տեղի ունեցան հանելուկները.

Էն քնչ է ինչ. — Սև սլայ, սիպտակ սլայ, խաթուռնը մէջ կը սլվլայ (աչքերը),

Հնդստան, Սրաքստան, Էրկու կաքաւ էկան, նստան, մէրիր թռան, ձագեր նստան. (Սրեգակ, լուսին և աստղեր):

Մանդր-մանդր եկեղեցի, դանկով զարկի դուռը բացի, մտայ մէջ խամբուրեցի, էլայ կտուր, քար թալեցի (նուռ):

Մի ղուշ իջաւ երկնուց, ոսկէ գիւգիւմ էր կըտուց. ղո՛ւ արաւ, բո՛ւ արաւ, աշխարհի մէջ երեք բան չը գտաւ, (երկնքին սիւն չը կայ, ծովին ծածկոց չը կայ և երրորդ՝ ջորին ծնունդ չունի):

Պրտա՛, մտո՛ւ, պրտա՛ մտո՛ւ, թէ՛ չը մտաւ, կրծա՛, մտո՛ւ. (ասեղից թել անցկացնելն):

Փուտ-փէտ փորուկ, ասլանը մէջը խորուկ. (հրացան).

Չորս կախիկ, չորս կոխիկ, երկու խշտիկ, մէ պալըզիկ. (կովի չորս պտուկը, չորս ոտը, երկու պողը և մի պոչը).

— Թագաւորը թրաշ ա ընում, վեր կացեք, ձայն էր տալիս դալլաքը (սափրիչ) քնած երիտասարդներին զարթնացնելով, որ վեր կենան երգ ասեն, թագաւորին թրաշ անեն և դալլաքին փող ընծայեն:

Երիտասարդները վեր կացան, պատրաստուեցան և վառած ճրագ գրին մի նստարանի տակ և փեսան նստեց աթոռ: Երիտասարդները երգում էին, իսկ դալլաքը սափրում էր նորա երեսը:

— Աստուած շնորհաւոր անի, բարձրաձայն աղաղակեցին ամենքը, երբ թրաշը վերջացաւ:

— Աստուած շնորհաւոր անի, ասաց Սմբատը և խնամու տանից եկած ղանաուզ շապիկը երկուերեք անգամ պտտացնելով մերկացած փեսայի գըլխովը հագցրեց նորան, և հետզհետէ միւս հանդերձները ամեն մէկին «Աստուած շնորհաւոր անի» ասելով և փեսայի գլխին պտտացնելով հագցրեց: Թագաւորը երբ զարգարուեց պրծաւ, երկու կողքին էլ քաւորը և ազաբբաշին կանգնեցին վառած մոմերը բռնած: Հարսնուաղջիկները եկան թագաւորի առաջ գիւլաբ (վարդաջուր) խաղացնելու, զուռնան ածեց մի ծանր եղանակ և թագաւորի ամուսնացած քույրը մի շիշով վարդաջուր բռնած պար էր դալիս: Պարում էին նոյնպէս երկու օրիորդներ, որոնցից մէկը մի փոքրիկ ղանաուզեայ կանաչ ժապուէն ունէր ձեռին, իսկ միւսը



մի ֆուռնտանոց շաքարի գլուխ: Գիւլաբ խաղացնողըն երբեմն-երբեմն ձեռքի վարդաշուրը սրսկում էր թագաւորի և բազմութեան վերայ:

Երբ որ պարը վերջացաւ, կանաչ ժապաւէնը օրիորդը տարաւ և ամրացրեց թագաւորի կրծքին: Յառաջ Մանուկը, յետոյ Զմրութը և թագաւորի քուրերն ու մօտիկ բարեկամները մէկ-մէկ եկան և համբուրեցին թագաւորի երեսը:

Զուռնէն եղանակը փոխեց և ամենքը միախուռն բազմութեամբ, մարդիկ պալտոն կամ եափունջի առած, իսկ կանայք սպիտակ չարսաւներ գլխին գցած թագաւորի հետ ճանապարհ ընկան դէպի խնամոնց տուն: Զահերն ու լապտերները երկնքի աստղերի հետ մրցում էին: Լուսաբացին մօտ էր: Ճանապարհին, որը պարում էր, որը երգում, ծառայողներն էլ արագ էին բաժանում, որ պսակ գնացողները չը մրսեն:

Սովորաբար պսակ գնալուս տղամարդիկ համեմատաբար շատ քիչ են լինում, նորանցից շատերը, ինչպէս վերը ասացինք, հացկերութիւնից յետոյ ցրվում են: Բայց կանայք առանց բացառութեան մէկի, սպասում են, թէ երբ պսակը պէտք է գնայ, որ իրանք էլ գնան խնամոնց տուն յատկապէս մեղր ուտելու:

Հանդէսը երբ խնամոնց տուն հասաւ, ամենից առաջ կանայք շտապեցին ներս մտնել և խառն ի

խուռն տեղաւորուել այնտեղի հիւրերի մէջ, բայց առանց չարսաւը գլխից առնելու, որպէս զի որոշուեն միւսներին: Յետոյ տղամարդիկ ներս մտան և մարդկանց մէջ նստեցին: Ամենից յետոյ գուռնի և պարոզ երիասարդների հետ մարդկանց մէջ մտաւ թագաւորը և խոնարհութեամբ գլուխ իջեցրեց բազմականներին: Վերջինները նորա բարեւ ընդունեցին՝ «Թագաւոր, վաճառդ շնորհաւոր ըլնի» ասելով: Մի փոքր սպասեց թագաւորը և ապա իրաւունք ստացաւ կանանց մէջ գնալու:

— Պսակն էկաւ, պսակն էկաւ, սո՛ւս կացէք, զգուշացրեց Մարգարիտը, որը աչքը տնկած թագաւորի գալուն էր սպասում:

Երբ թագաւորը իւր սվիտայով տուն մտաւ կանանց մէջ, գոքանչ ու քենիք վրայ հասան և նորա երեսները համբուրեցին: Մի տղայ մատուցաբանի մէջ մրգեղէն լցրած առաջ բերեց և մի ուրիշը մի շիշ շարբաթ (շաքարաջուր) բերեց և մի բաժակ լցնելով թագաւորին խմացրեց իւր ձեռքով:

— Նո՛շ, նո՛շ, նո՛շ, գոռացին ամեն կողմից:

Այս ձայնը կրկնուեց քաւորին, ազարբաշուռն և բոլոր երիտասարդներին խմացնելու ժամանակ: Կանփետ, նողուլ, գդալով նուան հատիկներ դնում էին թագաւորի բերանը: Այս միջոցին կանանց մէջ մէկն էլ նշախառն մեղրն էր գդալով խրում չար-



սաւաւոր «Թաղա խնամիքի» բերանը: Կեր ու խու-  
մից յետոյ գիւլաբ խաղացրին Թաղաւորի առաջ,  
նոյն կարգով ինչպէս տղայի տանը, այն զանազա-  
նութեամբ, որ պար եկողները այստեղ աղջկայ  
հիւրերիցն էին, իսկ կանաչի փոխանակ այստեղ  
կարմիր էր ժապաւէնը և որի խաղացնողը Մարգա-  
րիտն էր, որ պարելու ժամանակ համարեւս բոլորի  
աչքը իւր վերայ էր դարձրել: Նորա մշտական տը-  
խուր կերպարանքը, անմեղ նայուածքը շատ չք-  
նաղ ու գրաւիչ էր, ճրագների առաջ նորա կա-  
պուտակ աչքերը երկու փերուզաների պէս փայլում  
էին, ձախ թշի վերայ մի սև խալ էր երևում, ո-  
րով աւելի համակրելի էր դառնում նորա ձիւնա-  
փայլ դէմքը, շէկ մազերի տասնուհինգ—քսան  
հատ մանր յուստակները նազուք մէջքի վերայ  
փռուած գօտուց ցած էին իջել: Այս հրապուրիչ  
արարածը կարմիր ժապաւէնը երկու մատի մէջ անց-  
կացրած պարում էր:

Այս միջոցին ուշք դարձնող լինէր ազարբա-  
շու վերայ, կը կարծէր, թէ նորա ուշք վերացած  
էր բոլորովին և ինքն իրան մօռացած: Զուռնի  
սուր ձայնը, նաղարի դղրդոցը և բազմութեան աղ-  
մուկը կարծես, խորին լռութիւն էր նորա հա-  
մար, նա ոչինչ չէր լսում, ոչինչ չէր զգում, մին-  
չև անգամ նորան Աւետիսը մի ինչ որ բան էլ  
հարցրեց, բայց պատասխան չը կար: Սմբատը յեն-

վել էր մի սեան վախելով միգուցէ վեր ընկնի,  
նորա ծնկները դողդողում էին, թուլանում էին,  
նորա ճակատի վերայ քրտինք պտուղ-պտուղ կանգ-  
նած փայլում էր իւր մոմի լուսի առաջ, նա այս  
րոպէին կարծես, մի անշարժ արձան էր, միայն  
նորա աչքերն էին շարժվում Մարգարիտի կաքա-  
ւելու հետ:

Երբ պարը վերջացաւ, Մարգարիտը մօտեցաւ  
համեստ ժպիտով գլուխ տուեց Թաղաւորին, և  
երբ ձեռքի ժապաւէնը ամրացնում էր նորա կրծ-  
քին անդիտակցաբար իւր աչքերը հանդիպեցան  
մօտին կանգնած Սմբատի աչքերին, կարմրեց, ա-  
րիւն դարձաւ, ուստի և փախաւ գնաց կանանց  
մէջ:

Կանաչ սև կարմիր ժապաւէնները մի խաչաձև  
կազմեցին Թաղաւորի կրծքին, սա է այն արարո-  
ղութիւնը, որ պառաւները ազաբներին օրհնելիս  
ասում են «բարով կապենք կանաչ-կարմիրդ», որ  
նշանակում է «բարով ամուսնանաս»:

Տեսնենք թէ՛նչ է կատարվում նորահարսի մօտ:  
Նա անդադար լալիս է, չորս կողմից շրջապատած  
նորան զարդարում են: Վարպետ կինը իւր աշա-  
կերտուհու գլուխն է կանացի ձեով կապում,  
միւսները քահանայի օրհնած հանդերձներն են  
հագցնում: Նա այդ միջոցին մի կատարեալ պա-  
ճուճապատան էր, ինչպէս և շուռուճուռ էին տա-



լիս նորան՝ հնազանդվում էր: Երբ զարդարելուց պրծան, կանչեցին նորահարսի եղբորը, նա էլ եկաւ քրոջ գօտին կապեց:

Աղջկայ ծխատէր քահանան շուրջաւը ուսին գցած տուն մտաւ և հրամայեց. «շուտ արէք, պրծէք, հարսը բերէք, կէս օր դարձաւ»: Բայց քահանային լսող չը կար: «Ի՛նչ պրծէք, հա». բարկացաւ քահանան: Բայց ումն ես ասում, այնպէս մի իրար անցում, մի աղմուկ էր ընկել տան մէջ, որ միմեանց չէին հասկանում: «Ձայնդ կտրի». բարկացաւ քահանան զուռնաչու վերայ և նա լռեց. բայց դարձեալ հարս չը կայ: ձորահատեալ քահանան կանանց բազմութիւնը, որը այնքան խիտ էր, որ ասեղ գցելու տեղ չը կար, ձեղքելով և հրամայողական խօսքերով հազիւ կարողացաւ դուրս բերել լացող նորահարսին, որի թւերից բռնած առաջնորդում էին նորան կանայք: Նորա երեսը թանձր քողով ծածկած էր: «Առեալ զձեռն Եւայի և տուեալ իյաջն Ադամայ» ասելով քահանան ձեռք ձեռքի տուեց թագաւորին և թագուհուն և «Տանում են, աղէ-ջան, տանում են» եղանակը որ չէ էն քաֆրի (անգութի) տղայ Իսկոն ածեց, լացն ու աղաղակն ընկաւ աղջկայ տանեցւոց մէջ:

Արևը նոր էր ծագել, երբ հանդէսը աղջկայ տանից դուրս գալով ուղղուեցաւ դէպի եկեղեցի: Այստեղ պէտք է լիշել, որ մէջտեղից գնում էր

Թագաւորը, նորա ձախ կողքից թագուհին, յետոյ հարսնաղբէրը և յետոյ քաւորը, իսկ աջ կողքից— նորա ազաբբաշին և հարսի յետևից նորա փեշերը բռնած գնում էր հարսնաքոյրը—մի պառաւ:

Մանուկը մի քանի մարդով դեռ դուրս չէին եկած, նոքա մնացել էին խնամու սիրտն առնելու:

— Խնամի-ջան, ասում էր Մանուկը նորահարսի հօրը, քո աչքն էլ լոյս, մեր աչքն էլ լոյս, աղջիկ ես տուել, տղայ ես առել. Աստուած նորանց մեզ համար սաղ պահի: (Այս ասելով արաղը խմեց):

— Անուշ էլաւ խնամի-ջան, պատասխանեց հարսի հայրը և բաժակը առնելով ասաց, աչքդ լոյս խնամի-ջան, իմ աղջկայ ոտով Աստուած քեզ շատ խէր տայ, տար խէրը տես, թէ գէլ ա գառ դառնայ. Աստուած քո հարսու թագաւորը շնորհաւոր անի:

Վերջապէս շնորհակալութիւն յայտնելով դուրս եկան խնամիքը.

— Թագաւոր թաւն ա, գողում էին մի քանիսը.

— Աստըծու գառն ա, պատասխանում էին միւսները պսակի առաջ պար գալով.



Մի քանի մարդիկ էլ, որոնք հարսանիք հրաւիրուածներէն չէին, հացի կտոր բռնած գալիս էին քաւոր-աղի առաջ, նա էլ նորանց արաղի փող էր բաշխում:

ձանապարհը, որով գնում էին, ընկնում էր քաւորի տան փողոցով, որը ի պատիւ թագաւորի և թագուհու քաղցրեղէնների սեղան դուրս հանեց հանդիսի առաջ: Վերջապէս, եկեղեցի հասան, դռանը գուռնան պար եկողներին խաղացրեց, մինչև որ ներսը պսակի խորհուրդը կատարեցին: Պսակից յետոյ հանդէսը ուղղեց իւր գնացքը դէպի Մանուկենց տուն: Նոցա բակումը նոյնպէս սեղան պատրաստած և աթոռներ շարած սպասում էին հանդէսին: Մի քանի երիտասարդներ սլակի առաջ ընկած կատարները արաղով այնքան էին տաքացրել, որ էն դիմաթ ցրտին բացի չըմրսելը դեռ քրտնած էլ էին: Երբեմն պարում էին կամ իրար վզով ընկած երգում, և երբեմն նոր եկած ձեան մէջ ազատօրէն թաւալելով հօլ, հօլ, հօլ, հօլ էին գողգողում, իսկ երբեմն մի-մի քրդի քօլօզ դըլ-խըներին դրած և մի-մի դադեանակ (հաստ բիր) ձեռքներին առած ռաղաջօ (փայտակոխ) էին խաղում: Այսպիսի գուարճութիւններով հանդէսը մըտաւ Մանուկենց բակը:

Յառաջ անցաւ թագաւորի և թագուհու դի-

մաց Շահրիզեցին <sup>1)</sup>—Ժողովրդական շարական երգողը և սկսեց մի առանձին եղանակով.

— «Յնծացէք, ուրախացէք, ալէլուիա,  
Մեծ աւետիք սաղ աշխարհին, ալէլուիա,  
Այսօր տօն է կոյս Մայրամին, ալէլուիա.

Ծնաւ բերեց իւր խաչ որդին, ալէլ.,  
Իւր խաչ որդին Աստու որդին, ալ.

Աստու որդին զրին մտուր, ալ.  
Պատիւ էտուն բուրդ խանձարուր, ալ.

Քրիստոս մէջ քեզ փաթաթեցին, ալ.  
Գէրնիր վրէն կամար արին, ալ.

Սնիր բոլոր ծառ խնկենի, ալ.  
Թունդիր ինե եկեղեցի, ալ.

Հարսներ բոլոր գէտ Եղվնեկ, ալ.  
Կարդան սաղմոս, գովան նարեկ, ալ.

Ձեր Աւետիս նստեր թախտին, ալ.  
Թագաւորէ թուրը ձեռին, ալ.

Աւետսի գութան դաշտ կուբանի, ալ.  
Չարակամը դուռ կու պատուի, ալ.

<sup>1)</sup> Շահրիզ մի գիւղ է Նոր-Բաղադէտի գաւառում:



Աւետսին կայ բակըմ օխճար, ալ.  
Բակ օխճրի պճեղն օսկի, ալ.

Աւետսին կայ բակըմ մատակ, ալ.  
Բակըմ մատկի կօտօշն օսկի, ալ.

Աւետսին Հեծէ կապուտ քուռակ, ալ.  
Բրչամ թալե սլուրակ-սլուրակ, ալ.

Մէջքը զարկէ սլողսլատ ուրազ, ալ.  
Փայլս տուէք, փայ պատարազ, ալ.

Տան տիկին դու առատ երես, ալ.  
Նիաթ չանես, Աստուած սիրես, ալ.

Քեզմէ չուզեմ ձիմը ջորի, ալ.  
Քեզմէ կուզեմ գառը, մաքի, ալ.

Մաքին քո տան չարի փոխան, ալ.  
Քո թագաւորի ոտաց ղուրբան, ալ.

Գառ տու տանիմ սուրբ սեղանին, ալ.  
Հէլի, գնա՛ դուռ մառանին, ալ.

Ձեռք ձգէ սինին օսկէ, ալէլուիա,  
Կարճիկ բռնէ, էրկէն կտրէ, ալէլուիա:

Կեցցէ մեր թագաւորն... գողացին բոլորը:

Պատուաւորները շարուեցան սեղանի շուրջը  
աթոռների վերայ, իսկ թագաւորի և թագուհու

Համար չը կամեցան, որ դռտնը կանգնէին, որով-  
հետեւ սաստիկ ցուրտ էր օրը: Նորանց ներս տա-  
նելու ժամանակ թափեցին Հարսի գլխին մի ամա-  
նով չամիչ և դրին նորա գլխին մի լաւաշ հաց:

Այս ու այն կողմից մանր երեխէք, որոնք  
վաղուց այդ արարողութեանը աչք տնկած սպա-  
սում էին՝ վրայ թափուեցին և գետնին թափուած  
չամիչը միմեանց ձեռքից խլեցին ու կերան:

Գեռ թագաւորի մայրը չէր երևում, ուստի  
երգելով նորան սկսեցին գուրս կանչել:

— « Թագաւորի մէր, դուրս արի,  
Տես քեզ ինչերն եմ բերել,  
Թունդիր վառող եմ բերել,  
Տախտը աւլող եմ բերել,  
Կովեր կթող եմ բերել,  
Գլուխդ դմփող եմ բերել »:

Այս վերջին տողի վերայ ամենքն էլ ծիծաղա-  
ցին, որովհետեւ «գլուխ» դմփող երկգիմի նշանա-  
կութիւն ունի, առաջինը, նշանակում է « գլխիդ  
ոջիւները ջարդող եմ բերել », որ նոյնպէս գովա-  
սանք է Հարսի համար, իսկ երկրորդը — « գլուխդ  
ծեծող եմ բերել, իրաւունքները ձեռքիցդ խլող  
եմ բերել »:

Այս ձայնի վերայ դուրս եկաւ Զմրութը մի



պուտուկ ձեռքին, պուտուկը դրեց տան շեմքի մօտ (թագաւորի ոտների տակ) որը ոտքը խփելով փշրեց պուտուկը) որ իւր ամեն դադաբալէն (փորձանքներ) պուտուկի հետ կորսուէր: Իսկ Զմրուժը նորահարսի գլուխը համբուրեց և ձեռքից բռնած տարաւ նորա համար պատրաստած առագաստը, ուր իսկոյն մի ծծկեր արու երեխայ դրին հարսի գիրկը, որ նորա անդրանիկն էլ արու լինի և առաջին անգամ նորան հաց բերելուս մածուն տուին, որ պարզերես հարս լինի:

Ազաբբաշու բռնած թուրը առանց մոմի այժմ թագաւորն ինքն է առել ձեռքը իբրև գաւազան և այս ու այն կողմն է ման գալիս: Դռանը հարս ու աղջիկ շրջան կազմելով մի քիչ պարեցին ու ցրուեցան: Տղամարդիկ, որոնք իրիկուանից կիսով չափ պակասած էին, ներս հրաւիրուեցան հաց ուտելու: Կերակուրը Չալոյի խաշն էր և հացկերութիւնից յետոյ գնացին ամենքն իրանց տուն քնելու, միայն մի քանի երիտասարդներ մնացին թագաւորի որսին մասնակցելու: Բակում զուռնան որսի եղանակը ածեց և սուրը կիսով չափ մերկացրին, երկու տղայ, մէկը կոթից միւսը պատենից սրի բերանը դէպի վեր բռնեցին: Յառաջ թագաւորը մի հաւի ոտներից ու պոչից բռնած երեսը խաչակնքեց և մի անգամ սրի վերայ խփելով հաւի գլուխը թռցրեց: Նորան հետևեցին ազաբբաշին

և բոլոր աներկայ եղող երիտասարդները մի-մի հաւ զոհելով, որին որ չէր յաջողվում մի անգամով հաւի գլուխը թռցնել, կրկնում էր հարուածը, մէկը մինչև անգամ երրորդեց էլ հարուածը հազիւ կարողացաւ յաջողեցնել, որի վերայ ծիծաղացին ընկերները: Յետոյ տեղի ունեցաւ «գիւլաշը»: Երկու երիտասարդներ մէջ մտնելով յառաջ պտոյտ պտոյտ անելով հանաքներ սկսեցին, յետոյ փակուեցան միմեանց: Չորս կսղմից աղաղակներ բարձրացան, որոնք խրախուսում էին մէկին և միւսին. «դէ ղօչաղ, դէ ղօչաղ հա»: Վերջապէս մէկին յաջողուեց ընկերին խփել զետնովը, որի պարանոցից իսկոյն կապեցին մի բաղդադի աղլուխ իբրև մըրցանակ իւր զօտեմարտութեան: Դիւլաշը նոր էր վերջացել, երբ խնամոնց տանից երկու մարդ նորահարսի ջհեղը (օթիտ) բերեցին փեսայի տուն, մէկի շալակին կողպէքած մի սնդուկ էր, միւսին մի կապած մաֆրաշ:

Արևը մօտենում էր—արևմտեան հորիզոնին, երբ ամբողջ ցերեկը համարեա քնացող հարսանիսւտնէր սկսեցին զարթնել և իւրաքանչիւրը իւր տանը պատրաստվում էր «որսի իրիկուն» հարսանիք զնալու:

Երեկոյեան երբ ճրագները վառուեցին, և հարսանիքատունը հետզհետէ հանդիսականներով լցուեցան և երբ լսուեց, թէ քաւոր-աղէն գալիս



է, զուռնէն նորան ընդ առաջ գնաց, նոյնպէս և «Թագա-խնամիքի» — նորահարսի ընտանեաց զալուն:

Այս երեկոյ ընթրիքը շուտով տուին: Որսի հաւերը էփած ու փլաւի գլխին դրած բաժանուեցան: Այս երեկոյին բաժանուեցաւ նոյնպէս ի պատիւ Թագա-խնամու իւրաքանչիւր երկու մարդուն մի շիշ գինի, որ ի փոխանակ նախընթաց երեկոյին մենակ արաղն էր: Նոր-Բալաղէտում արաղը այնպէս է գործածվում, ինչպէս Թիֆլիսում գինին:

Սորանից յետոյ ով կամեցաւ, մնաց կանանց գիշերային պարին հանդիսատես լինելու, ով չէ՝ տան տիրոջը շնորհակալութիւն յայտնեց ու գնաց իւր տուն: Բայց մենք դեռ ևս պէտք է գնանք կանանց մէջ, նորանց հանդէսը տեսնելու: Նոքա էլ հաց կերել պրծել են, հիմա էլ ջհէզն են բաց անում: Զհէգբացէքի հանդէսը մի տօնավաճառ է ներկայացնում: Նորահարսի մօտիկ ազգական մի երիտասարդ կին ջհէզի սնդուկը բացել ու առաջն է դրել, միջի իրեղէնքը մէկը միւսի յետեւից հանելով բարձրաձայն քարոզում է ի լուր հանդիսականների, թէ այս ինչ խալաթը քաւորին է, միւսը, թէ քաւորի կնկան է, հարսի կիսուրին է, կէսրարին է և այլն:

Մինչ այս մինչ այն կէս գիշերը արդէն անցել էր, ուստի և շտապեցին կանայք զեօվունդ (պար) բռնել: Գեօվունդը յառաջ երիտասարդ տը-

ղէրքից սկսուեց, որոնց հետզհետէ մասնակցեցին նախ հասակաւոր յետոյ միջահասակ կանայք, ամենից յետոյ և օրիորդները: Լոյսը բացուելու մօտ էր, երբ հարսանիքի ծառայողները ձայն էին տալիս ամեն աեղ՝ «Ձեզի տուն կայ»: Լսողները պատասխանում էին՝ «Թագաւորին քուն կայ»: Եւ մեր պարից ու հարսանիքից կշտացած հիւրերը ցրուեցան ամենքն իրանց տուն:



Ը.

## Ծ Է Ս Ե Ր

— Այ՛ն... չէին թողնում, մի հանգիստ նըստէինք տօ. անջախ ազատուանք ղալմաղալից, ասում էր Աւետիսը հարսանիքից մի շաբաթ յետոյ մի օր, երբ ինքն ու Սմբատը տանը նստած խօսում էին զանազան բաների վերայ:

— Ե՞րբ ես պրծել. դեռ շատ ղալմաղալներ ունես, ասաց Սմբատը:

— Ել բնչ կայ, որ:

— Եգուց պստի զատիկ կը գայ, պէտք է գընաս աներիդ տուն, զատիկ շնորհաւորես: Զատիկ իրիկուն տիրացուներ կը գան «Աւետիս» ասելու, թագա-թագաւոր ես, շատ փող պէտք է բաշխես: Տեառնդյառաջին նաղարա-գուռնով քեզ եկեղեցի պէտք է տանենք, դու էլ ծերերի պէս ձեռքիդ մօմը, Աւետարանի «սուր» բառը լսելուն պէս կըտընես ծոցդ պահես, որ օձից չը վնասուես, կրակ վա-

ռելուն պէս Շուշանիդ (նորահարսին) պէտք է կրակի վրայով թռցնես, որ փորձանքից ազատ մընայ, ծիծաղելով ասում էր Սմբատը: Բարեկենդանի հինգշաբթի օրը մեր սուրբ Վարդանի քաջութեան ու մահուան տօնն ա, Նոր-Բայազէտի կըտընենք պէտք է ձի խաղացնեն, դու էլ ինչպէս թագա-թագաւոր, անպատճառ պէտք է խաղացնողներից մէկը լինես, աշխատիր, որ լաւ ջիրիդ խըփես ու չը խփուես, ձիանիցդ էլ փախած ժամանակ չընկնես: Միտդ ա էն տարին էլի եդ օրն էր, ինչ Մարգարէն ու Թէլումենց Աղաջանը ձի քշելու ժամանակ մէկ-մէկու հանդէպ եկան ու ձիանքը իրարու դիպան, կտրիճները ուշաթափ ընկան, Մարգարէն վերջը լաւացաւ, ամա Աղաջանի դուղը ցրուել էր, մինչի իրիկուն չը քաշեց, մեռաւ խեղճը:

— Ընչք խեղճ, տղամարդի պէս խաղում էր, տղամարդի պէս էլ մեռաւ:

— Եդպէս ա, նրա աղբէր Կարապետն էր պակաս, որ չէ ձի հեծած դուրս կը գար մէյդան, կ'ասէիր մի ասլան ա, միթէ դրանք պակաս ազգից են, ախար մեր Բայազէտցի Դանիէլ կաթուղիկոսի ցեղիցն են, որից ընծայ ստացած մատանիքը մինչև հիմի պահպանում են ինչպէս հայրենական սրբութիւն:

— Ե՛, էլ բնչ ղալմաղալ մնաց:



— Հա՛, մեծ պատի երկուշաբթին, էլի պէտք է աներանց գնաս, նրանց ձեռքները հարսի պէս պաչես, պատը շնորհաւորես, նրանք էլ քո երեսը պաչեն ու քեզ խալած բաշխեն, ի հարկէ առանց ինձ չես էթայ: Յետոյ տուն կգանք, երգկից չուան կը կախենք դու ու Շուշանդ կկշռուէք: զգոյշ կաց, որ թեթեւ չը դաս, թէ չէ կանանոնց ձեռքից էլ չես պրծնի, միտդ պահի, որ մի մեծ քար դնես ջէրդ: Աւետիս, երանի ինձ էլ յաջողուէր մի օր մէկի հետ կշռուէի:

— Մարգարիտի հետ:

— Ձէ, որն ա Աստուած զսմայթ արել ա:

— Դէ Մարգարիտն ա, էլի, սաղ Քեավառ խաբար են, դու նոր ինձնից ծածկում ես:

— Սաղ Քեավառ թնչ են խաբար:

— Տօ՛, որ էգուց ամերը կամենայ...

— Հա՛, ղորդ, Աւետիս, նորա խօսքը կտրելով ասաց Սմբատը, մեծ պատի երկուշաբթին, երբ եօթը փետուրի «ակլատիզը» երգկից կախեցինք, թէ չէ, բարեկամներիդ տանից չարագեղէն կը դայ, իրիկունը լաւ ղոնախներ կուենաս, Աւետիս ասեմ, մի լաւ էլ պար էդ գիշեր պար կը դան: Միջինքին միջնաբլիթ ու կուտապ, ղորդ ա ամեն տան էլ կը լինի, բայց ձեր տունը նորահարսի տուն ա, հանդէսով կը լինի, և ինչքան կուրախանաս, եթէ միջնաբլիթը բաժանելիս, դուլվածը (վիճակ) Շու-

շանիդ դուրս գայ:

— Ղորդ, դուլվածը, որ Շուշանին դուրս էկաւ, ուրախանալով ասաց Աւետիսը, ասա թէ մարդու քէֆ կը դայ: Շատ բաղդով ա, Սմբատ, մեր Շուշանը:

— Որ բաղդով էլաւ, դուլվածն էլ նորան դուրս էկաւ, դու կարծում ես, անպատճառ դուլվածով կը լինի, էլի:

— Ելի պառաւի աւետարան կարդացիր, սաքի մէրդ հարսանիքիդ օրը ընչի՞ պուտուկ գրեց ոտներիդ տակ. դու էլ ամենափառաւորապէս մի ղարկելով փշտեցիր:

— Թէ էդ սուտ բան ա, քո ազաբաշուծեան թուրն էլ ա սուտ, որ շեմերից ընցնելուս բըռնումիր գլխիս:

— Բա սուտ չէ, ղորդ ա, էն ես խալիսի համար էի անում: Ժողովրդի մէջ շատ սուտ բան կայ, որ ճշմարտի տեղ պաշտովում ա, ես ո՞ր մէկն ասեմ, բլթիկ անել, ցաւի թուղթ անել. գարի գցել. ֆալ աչքել. բոլորը, բոլորը կռապաշտութեան բաներ են: Դա մեր հին պապերի հաւատն ա, հիմի չի անց կէնում, երբ որ մեր պապ Լուսաւորիչը Հայոց թագաւորին ու Ժողովրդին մկրտեց, քրիստոնէութիւն մտցրեց մեր ազգի մէջ, պատուիրեց. ասաւ, ինչ որ Աւետարանի մէջ գրուած ա, էն պաշտէք, էլ էդ պառաւական կռապաշտութիւնը



մի անէք, մեղք ա: Բայց ժողովրդի ղուղի մէջ մի անգամ, որ մի բան ա մտնում, շատ դժուար ա մէկէլ քանդել, դուրս հանել. արնի ու երակների միջով որդուց որդի անցնում ա. մենք էլ որ մեր պապերի թոռներն ենք, ճար չը կայ, նրանց արնից կ'ուռենանք, բայց որ մեզ ու մեզ միտք անենք, շուտով խաւարը կը թողենք, դէպի լոյսը կէթանք:

— Ղորդ, Սմբատ, որ լաւաջի տարիքը, ասում են Նորադուզ սատանայ են բռնել, էն սո՛ւտ էր:

— Հա՛, Հա՛, Հա՛, Հա՛, ծիծաղեց Սմբատը, չէ մի գնջիլն էլ վիզն էին գրել:

— Ձէ, ասում ա, ասեղեն խրել դօշին, նօքարութիւն էր անում, որ ասումեն, գնա՛, շուտ ա-րի, լետի էր գալըմ, որ ասումեն, գնա՛, լետի ա-րի, շուտ էր գալըմ: Մի անգամ սատանէն մի է-րէխի ասել ա, տղայ, թնչ կ'լնի, դաս էս ասեղը դօշիցս քաշես: Միամիտ տղէն ասեղը քաշել ա, սատանէն ազատուել ա, գնացել ա, էլ չէ եկել ա:

— Ամօթ բան ա, ամօթ, էդ պէս բաներ գեղացու թալվի օդէքի սուտ նաղլներ են, շատ մեղք ա, որ ասենք, մեր էրէխէքն էլ կ'լսեն կ'հաւատան, մութը տեղը ըլնեն կը վախենան. ով որ էդպէս բաների հաւատա ու ղսա անա, Լուսաւորչու աչքի գրողն ա: Հա, ղորդ, դեռ «լիճքն» էլ մնացել ա:

— Ո՞նց թէ լիճք, լիճքն որն ա:

— Դեռ էդէլ չես իմանում, միջինքից լետոյ կը գալ լիճքը, այսինքն քառասուն մանկանց լիճը ձգելու տօնը, որ միջինքի շաբաթ օրն ա կատար-վում. դու պէտք է ուրբաթ իրիկուն քառասուն անգամ քառասուն ծունր դնես:

— Ութսուն ծո՛ւն:

— Ձէ, տնա՛շէն, կա՛ց, հաշուեմ, չորս ան-գամ չորս.

— Ութ.

— Ձէ տասնվեց, աւելացնենք երկու զրօ, կա-նի մէկ հազար վեց հարիւր ծունր:

— Ո՛ւհ... էդքան էլ ծո՛ւնը կ'լնի: Ե, էլ թնչ մնաց:

— Ել բան չը մնաց, մնաց, որ «Ծառ զար-դարի» կիւրակին էլ աներիդ տանից չորս կնիկ կը դան, նորանցից երկուսը առաջ կ'ընկնեն, երկուսը լետ, մէջտեղ Շուշանիդ առած կը տանեն «դարձ», կը մնաս առանց Շուշանի, մինչև որ Կանաչ կիւ-րակին հօրանց տանից կը բերեն կը տան քեզ: Են ժամանակ նոր ասա՛, թէ ղալմաղալից պրծանք:

Աստուած էլ ինձ իմ ղալմաղալից պըր-ծացնի . . .



Թ.

## Բ Ո Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Սմբատի միակ ցաւը այն էր, որ դժուար էր իւր մեծ եղբօրը յայտնել իւր գաղտնիքը, մինչև անգամ մօրից էլ խնդրեց, մայրը միշտ ասում էր նորան «դեռ սպասիր տեսնենք»: Յետոյ Սմբատի մի ցաւը երկու դարձաւ, երբ լսեց, թէ Մարգարիտին ուզում են ուրիշի տալ: Անճարացած Սմբատը էլ երկար չը կարողացաւ համբերել, և մի օր իրանց հարևան Քէվանի Մաքային ծածուկ կանչեց, հազար ու մի սպառնալիքներ գլխին կարգալով յայտնեց իւր գաղտնիքը և ուղարկեց նորան Մարգարիտի մօտ, որ իմանայ նորա վերջին կամքը:

Սմբատը Մաքոյի միջոցով պատասխան է ստանում Մարգարտից, թէ «ես ինձ վերայ պարտք եմ գրել, որ քոնը մնամ, մինչև մահուան դուռը գընալուն էլ, բայց որովհետև հօրեղբօրս կինը կա-

մենում է ինձ տալ իւր բարեկամներից մէկին, դուրս համար ես յառաջօրէն կաշխատեմ նորա կամքը առնել»:

Այս գէպից յետոյ դեռ կարճ միջոց էր անցել, որ Սմբատը յանկարծ լսեց Մարգարտի անակընկալ նշանուիլը Աթոյենց Պետրոսի հետ: Կայծակ էր խփեց, թէ զնգակ էր դիպաւ նորա սրբտին, յուսահատութիւն և կատաղութիւն մէկ-մէկու յետևից շրջապատելով նորան՝ գցեցին խեղճին, ինչպէս ասում են չօլերը:

— «Ես աշխարհ չեմ մտնի, վարդապետ կը դառնամ, օտարութեան մէջ կ'ապրեմ, էջմիածին կը գնամ, Երևան կը մնամ, Լալլն Լալլն:— Աւետիս, ափօրն ասա, ինձ բիլէթ հանի, ես պէտք է սուրբ Կարապետ գնամ», ստէպ-ստէպ կրկնում էր Սմբատը, բայց Աւետիսը զանազան յոյսերով զբաղեցնում էր նորան:

Հետաքրքիր է իմանալ, եթէ արդարև Մարգարիտը սրտով սիրում էր Սմբատին ինչպէս որ ինքը սիրվում էր նորանից, ինչո՞ւ ուրեմն կակուղ բարձ դրեց Սմբատի գլխին և ինքը յանկարծ նշանուեց ուրիշի հետ ու Սմբատին չօլերը գցեց, չէ որ կարող էր միանգամայն հէնց սկզբից բաց ասել, եթէ չէր սիրում նորան:

Այս հանգամանքում մենք իրաւունք չունինք բամբասելու անհաւատարիմ կարծելով նորան, ո-



ըովհետև բաւական չէ միայն աղջկայ կամքը իւր սիրած երիտասարդի հետ ամուսնանալու, այլ և իւր ծնողք ու ազգականներ, բարեկամներ ու հարևաններ, մինչև անգամ և օտարները պէտք է համաձայն լինին այդ կամքին, որ իրաւունք տան նորան սիրելու, իսկ առանց այդ համաձայնութեան ինքնածին սէրը անկոչ հիւրի պէս յարգ չունի, բացի այդ և նախատական է, այդ պատճառն էր, որ Մարգարիտին իրաւունք չը տուեց, Սմբատին մնալու, ինչպէս ինքը իւր վերայ «պարտք» էր դրել:

Մենք յառաջ քան թէ կը բացադէտինք այդ ցոյց կը տանք Մարգարիտի կեանքից մասնաւոր տեղեկութիւններ:

Վարդանը—Մարգարիտի հայրը 18... թուականի ժանտամահին Թիֆլիսի բաղնիքներից մէկում երկար ծառայելուց յետոյ մեռաւ թողնելով անբաղդութեան մէջ իւր ամուսնուն և իւր մի հափկ Մարգարտին: Իսկ Անոն—Մարգարիտի մայրը, երեք տարի այրի մնալուց յետոյ ամուսնացաւ մի Զիբուխլուեցի մարդու հետ: Վերջինս զղջալով իւր ընտրութեան վերայ, որ աւելի սիրունը թողած Անոյին էր առել, օր չէր տալիս խեղճ կնոջը, ամեն օր ծեծում էր, շատ չը տուեց և Անոն մեռաւ թողելով հինգ տարեկան որբացած Մարգարտին Շողոյի—իւր ազգեր կնոջ խնամքին:

Թէ ինչ էր պատճառը, որ Շողոն կամենում էր անպատճառ Պետրոսը լինի փեսայ՝ դորա մասին լռում ենք:

— Որ երկինքը թռչես, դժոխքը իջնես, քեզ կսպանեմ ու իմ ասածը կանեմ, դու պէտք է ձայն չը հանես, քեզ պէտք է Պետրոսին տանք և մինչև զատկին նշանը դնենք: Այս էր Շողոյի ամենօրուայ սպառնալիքը, որ խեղճ Մարգարտին թողել էին երկու քարի մէջ:

— Հարսէ, ես դեռ մարդի չեմ դնալ, չօրաք էնքան գործած չունեմ, ջհէզ պատրաստ չը կայ:

— Եդ քո բանը չէ, մի շաբթում ամեն բան կը պատրաստուի, վճռաբար ընդհատում էր Հարսէն Մարգարիտի պատճառաբանութիւնը:

— Հարսէ, ընչէս վազդում, ես դեռ էնքան էլ մեծ չեմ:

— Տաւնուկեց տարիդ ընցել ա, որ էս տարի էլ մնաս, կասեն դախացել ա, էլ չեն տանի մարդու:

— Զհաննամին տանեն:

— Զհաննամը գնաս:

— Ախար ինչնից ի՞նչ ես ուզում. լալով ասում էր Մարգարիտը:

— Մահդ, սպառնում էր Շողոն:

— Դէ կը մեռնեմ էլի:

— Մեռնես էլ, չես պրծնի:



— Ես մարդի չեմ գնայ:

— Մեռնես էլ պտի գնաս:

— Ինչ ուրիշ տղի տուր, ես էն տղին չեմ առնի:

— Վիճրը տամ:

— Մէկին:

— Դէ Պետրոսից լաւ տղայ:

— Ո՞րն ա վատ ասում, որ չեմ առնում:

— Վայ, էս ինչ գուլումաթա էր, քա եաման, օրօրվելով ասաց Շողոմն, վայ, Աստուած, որն ա տեսել, որ աղջիկը իր մեծին խակառ կայնի, ասել էն Վեծի ասած, պստիկ լսած, էս օր, ես որ կամ, քո հէրն եմ, քո մէրն եմ, քո տէրն եմ, որ անկջիցդ բռնեմ ըզրկեմ բազարը ծախել տամ՝ գու թէ որ հալալ կաթնակեր ես, պտի սուս մընաս:

— Տար ծախի, թէ որ խօսացի, համա էն տղին մի տուր:

— Շատ ես կատղել, անզգամ, բարկացաւ Շողոմն, և Մարգարիտի ծամերից քաշ տալով նորան երեսի վերայ գցեց և մի քանի «բամբաջա» հասցրեց:

— Վայ... վայ... վայ աման աղէ-ջան, գողգողում էր Մարգարիտը:

— Զոռ, չոռ, վարամ թալածի եթիմ, բօլա է, դու իմ հոգին բողազս հասցրիր է, քրքրուիս

ջանիդ վրէն, անիծելով շարունակում էր բամբաջելը մեր խնամատար Շողոմն:

— Եաման, բօլա, Հարսէ, քո ղուրբանն ըլնեմ, ճչում էր աղջիկը:

— Դէ ասա, Պետրոսին կանես.

— Իրիկունը մի խօսք կասեմ.

— Հիմի, հիմի, տես, կը խեղդեմ, կքցեմ ջրհորը, կը մեռնես իմ անէծքի տակը կը մնաս.

— Հարսէ, քո ոտը պաչեմ, քո ձեռը պաչեմ, ձեռները մեկնած աղաչում էր Մարգարիտը.

— Սոս, անզգամ.

— Որ անզգամ, հօ անզգամ.

— Մինչի դիվին դժոխք նշանց չըտան, դըրախտի ճամփէն չը ճանաչի, նորից բարկանալով ասաց Շողոմն:

— Ի՞նչ պտի անես.

— Քեզ կը մորթեմ.

— Ո՞նց թէ կը մորթեմ, կէս բարկանալով ասաց Մարգարիտը.

— Տօ լիճր.

— Հարսէ, տես, խոհական դիրք ընդունելով ասաց Մարգարիտը, ես որ էրէխայի, կատուի հետ կը խաղայի քանի նրա կամքով էթայի, ինչ կը սիրէր, ոտներս կը փաթթուէր, համա որ գողգողութիւն կանէի կը հեռոտացնի, էլի էն իմ կատուն հօ կֆշշար, երեսս կթռնէր, կծուատէր: Միտդ ա,



Հարսէ, դու հլա մի օր էլ ինձ հետ կռուեցիր, թէ՛ «կատուի հետ շատ գլուխ չեն դնի, երեսդ կը չանգռի»։ Հիմի ես էն կատուն եմ, մնացած բանը դու հասկացի։

— Ընչք, որդի, աղաչողական ձևով ասաց Շողոն, ես քեզ վատ եմ կամենում։

— Շատ էլ լաւ ես կամենում-

— Մարգարիտ, դու ըլնես քո մօր գերեզմանը, էգդդամ աղջիկս ես էլեւ, ըսկի մի օրէն մի օր տեսնէ ես, որ ես քեզ վատ ասած, ես մի վատ բանի դրած ըլնեմ։

— Չէ, լաց ըլնելով ասաց Մարգարիտը, մօր անունը լսելով, թէ՛ Եոդոյի ձեռքի տակ տանջուելով էր մեծացել։

— Ես քո մօրից աւելի քեզ չեմ սիրել։

— Սիրել ես։

— Հէնց քեզ ասա, քեզ, դեռ մի խօսք դարձրէ ես ինձ։

— Չէ։

— Բա ես քաֆը (անգուլթ) եմ, ինձ խղճմը տանք չունիմ, որ ես քո բաղդին սև քար գցեմ, դու դեռ ջահէլ ես, գիտես, Մարգարիտ-ջան, ես էլ եմ ջահէլ էլեւ, ջահէլի աչքին փարդա (քօղ) կը լինի, դու քնչ գիտես քո խէրն ու շառը, կլնի որ իրանը սոթող-կոկող, համա տանը մի ճանկ ալրի կարօտ տղայ ես տեսել ես ու գիտում ես,

ընդուպէստ էլ չը կայ, էտէնց բաներ իմ գլխովն էլ շատ ա ընցել ա, դո՛ւ գիտես, որդի, ես ուզում եմ քեզ մի լաւ բաղդի տիրացնեմ, չէ, չէ, հօ զօռով չէ։ Են օրը, որ քո մէրը էս տնից դուրս գնաց, քեզ ինձ տուեց. «Խանմաղա, ասաց, իմ Մարգարիտս ըստուց դէնը քո աղջիկն ա»։

— Դէ որ էտէնց ա, Հարսէ, ես մեղասուս, մի բան էլ ասեմ չը բարկանաս, բան չը կայ, հալբաթ քո աղջիկն եմ, ըսկի աղջիկը իր մօրը չէ բարկացնում, յետոյ փոշմանում։

— Դէ լաւ, ասա, տեսնենք, քնչ ես ասում։

— Ենա Խաչոյի Անուշն էլ, հօ իր հալալ մէրըն ա, ինչ ասես կտտայ իր մօրը։

— Տօ որդի, ասը պտի հալալ ըլնի. ես չեմ գիտի քո մէրը վիճը աղջիկն ա, էն լուսի փայ մէրըդ էնքան տարի իմ առէչը հարսնութիւն արեց, քօռնամ, կուրնամ թէ մի օրէն մի օր ինձ խօսք դարձրեց, դու էն ասա, ինչի՞ր ուզում ասել։

— Ըսկի, քնչ պտի ասեմ, ուսերը շարժելով ասաց Մարգարիտը։

— Ախար դու չասիր «մի բան ասեմ, չը բարկանաս»։

— Խնչ ասեմ։

— Ինչի՞ր ուզում ասել։

— Ըսկի։

— Մի բան կայ, ասա, ես քո մէրը չեմ։



— Հորսէ, ես էլ քո որդին եմ, քո ջիգեարը.

— Դէ լաւ, ասա՛.

— Որ մի տղի անուն տամ, որ Պետրոսից լաւըն ըլնի, ինձ չես տայ իմ ասած տղին.

— Ո՞րն ա, ասա՛, տեսնեմ, որ լաւ ըլնի, ընչի՞ չեմ տայ. ես իմ աչքը քօռ կուգեմ, թէ որ քո մարդը կլնի, ախար իմ էլ փեսէն կլնի, ես քեզնից շատ պէտք է նստեմ կայնեմ նրա հետ, դէ ասա վիճր տղէն ա.

— Ես թնչ գիտեմ.

— Մի ամաչի, որդի, էս բազարը, որ կալ ջան-բազարի ա, տաւար չեմ ծախում, ջան եմ ծախում, իսան եմ ծախում, էնենց ըլնի, որ տունը տուն ըլնի, մարդը մարդ, որ բարեկամութիւն ա-նենք, էթալ գալ ունենանք, մարդուս մի քիչ բարեկամն էլ պտի լաւ ըլնի. դէ ասա, վիճր տղէն ա.

— Դաւոյի.

— Ի՞նչ Դաւոյ.

— Ես ինչ գիտեմ, թնչ Դաւոյ.

— Ախար որ ճանաչեմէ: Տղի անունը թնչ ա.

— Քա էն տիրացուն էլի.

— Ի՞նչ տիրացու, իրան չը ճանաչող ձեացնելով ասաց Շողոն.

— Սմբատը, հաղիւ լսելի ձայնով ասաց Մարգարիտը.

— Ըհ, հողս նրանց կօտին, իրանք ինչ են, որ իրանց տղէն ինչ ըլնի, ընդուր մի աղբէր ունի, էրեսիցն աղու ա թափում, որ օձի վրայ թըքի, օձը կը սատկի, Յուդի նիաթ (դէմք) ունի վըրէն, դու թնչ օր պտի քաշես ընդու ձեռի տակ, էն իլ աղբօրը ըստուց հինգ վեց տարի հաւատա չը պսակի էլ:

Շողոն այս խօսքերը ասաց ու վեր կացաւ դուրս գնաց, որ Մարգարիտը այլ ևս իր խօսքը չը շարունակէր:

Այս խօսակցութիւնից յետոյ մի շաբաթ անցկացաւ, Շողոն մարդ ուղարկեց Պետրոսենց տուն, որ գան նշան դնեն: Պետրոսիմեծ եղբայրը— Ենօքը պատրաստութիւն տեսաւ, ծխատէր քահանայի էլ կամքն առաւ, որը չհաս էր համարում այդ, և նորա հեա Զատիկի մեռելոց երկուշաբթի երեկոյին շնորհ բերին Մարգարիտենց տուն, ուր և կատարեցին նշանադրութեան հանդէսը. մինչ Մարգարիտը միւս սենեակում երեսի վերայ ընկած լաւիս էր . . . :



Ժ.

## ԼՈՒՍԱՒՈՐԶՈՒ ՏՕՆԸ.

Փեսայ Պետրոսը, առանց հօր մեծացած մի տղայ էր և իւր մեծ եղբօր անուշադիր և անհոգ ընտանոթիւնը թողել էր նորան իւր ազատութեան մէջ մօլութեան հասնել, որպիսի ընթացքը առաջնորդում էր նորան դէպի կորուստ: Մի կրակոտ աչքերով երիտասարդ էր Պետրոսը. սիրում էր յաճախ զարդարուել, ձի խաղցնել, անգործ թափառել, կանանց խումբերին աչքերով ուղեկցել:

Իւր նշանուելուց երկու շաբաթ առաջ եափունչում կօլօլուած ընկերների հետ կանգնել էր ս. Աստուածածին եկեղեցւոյ մի անկիւնում: Այդ օրը Լուսաւորչու տօնն էր, երբ տեղական սովորութեան համեմատ, համարեան, շատ սակաւ բացառութեամբ Նոր-Բայազէտի իգական ամբողջ դասը հարիւրամեայ պառաւից սկսած մինչև ծծկեր

երեսայ պէտք է եկեղեցի դտնուէին Լուսաւորչու աջը համբուրելու և իրանց նշանադրուած հարսներին տեսնելու ու խօսալթ ընծայելու և վերջապէս մէջները մրգեղէն ու քաղցրեղէն բաժանելու: Կը տեսնես խումբ-խումբ սեղանի առաջ, աւազանի մօտ, սների տակ կանգնած տաք-տաք խօսակցութիւնը սկսել են:

— Տղէրք, էնա էկաւ Մարգարիտը, ես մի հետ ասել եմ, պէտք է նրան առնեմ, որ առնեմ, ասաց Պետրոսը իւր ընկերներին մատնացոյց անելով Մարգարին, որը մի խմբի հետ մասուկքը <sup>1)</sup> համբուրելով սեղանի մօտից յետ էր դառնում:

— Ո՞ր մէկն ա, հարցրին ընկերները:

— Էն մէջտեղի շէկ աղջիկը.

— Է՛ն ինչ կանաչ դէլյո՞վ ա.

— Հա, մեր հարսի խնամոնց աղջիկն ա.

— Գեանդա, ախար էնի քեզ չհաս ա.

— Ի՞նչ չհասութիւն կայ.

— Հազր քո բերնով ասիր թէ «մեր հարսի խնամոնց աղջիկն ա».

<sup>1)</sup> Լուսաւորչու աջի մէջ ամփոփուած է Մեծին Ներսէսի մասուկքը, ինչպէս իւր արձանագիրն է ցոյց տալիս: Այս արձաթի ոսկէզօծած մեծ աջը Հին-Բայազէտցիք մասնազականներից մեծ գումարով են գնել:



— Չէ մէ, խնամու եղան գեղէն ա, նրանք որտեղ, ես որտեղ.

Շատ լաւ, մի գլուխ շաքար ա գործակալի ջանը, կը տանք, պրծաւ, գնաց. Բեաւառալ մէջ քանի-քանի չհասներ հասան.

— Էն քեզ չի էլ առնի, ասաց ընկնրներից մէկը, նրա աչքը ուրիշի վրայ ա.

— Վեր վրայ ա.

— Սմբատի.

— Էն կօլօտի.

— Հա, ընչի, պակաս տղայ ա.

— Էն անջաղ մեռլի հաց ուտա, հեգնելով ասաց Պետրոսը.

— Դու ընդու շապիկ հագնելը, պատարագի առաջ բուրվառ անելը ասա, ընդու զանգակինման ձէնն ասա, վերջը նա տէր-տէր կ'ընի, ես գիտեմ, հօ մեր նման դափու դօլազ գետգա չէ.

— Ինձ ղէյրաթի մի գցէք, տէս, ասաց Պետրոսը, հօ զորդից չասեցի, թէ կառնեմ, համա չունքի մենձ-մենձ ես բրդում, Մկրտիչ, կը տեսնաս իմ դօջաղութիւնն ու քո տէր-տէրացուինը:

— Բալքի թէ փախցնես.

— Փախցնելս որն ա, մինչի զատկին, դու ինձ նշանուկ տես.

— Էդէլ էլաւ Յակոյի ասածը, մինչի զատկին դու քեզ տփուկ (ծեծած) տես:

— Զուր տեղ, անջուր մի բոբկցէք, ասաց մի ուրիշը, հլա աչքէք էն քամին (խուժք), իմալ են պառաւների ձեռք պաչում, ընդոնք էլ ընդոնց էրեսը պաչում:

— Սոս կաց, Գէվոյ, հլա անկաջ դրէք, տեսնենք, ինչ են խօսում.

— Զօրանաս, ղուրբան, խնամի-ջան, ո՛ւր ա իմ Անուշը, իմ թագա-նուբարը, հարցրեց մի կին իրա ձեռք համբուրող երեսը ծածկած մի հարսի, որի գրկի երեխէն մի ճիչ բարձած գոռում էր եկեղեցու կամարներից արձագանք հանելով:

— Տօ չօռուր քեզ, թող տեսնենք, ինչ են ասում են, մրմնջացին մի եափուռնջու տակ ծածկուած, աչքները չորս բաց արած, գողի պէս դէս ու դէն մտիկ տուող տղերքը:

— Էնա աղջիկների հետ գալըմ ա, մասունքն ա համբուրում ա, պատասխանեց հարսը համարեն անլսելի ձայնով:

— Տո՛ւր տղի ձեռք, թօ ձէնը կտրի ասաց կինը տալով նորան մի քանի կանֆետ:

Մին էլ տեսնես շարուեցին կնոջ շուրջը հարսն ու աղջիկներ, որոց մէջ էր և Անուշը—այդ կնոջ նոր նշան գրած հարսնացուն: Երբ որ բոլորը կարգով մօտեցան ու գլուխ տուին կնոջը, նա էլ որին զօրանաս, որին ապրես, ծլխս, ծաղկես, կանաչես ասաց ու պրծաւ, կարգը եկաւ հարսնացուին,



որը երեսը բարակ «չիքիլին» գցած ու կարմիր աղ-  
լուխը գնտած քողի տակից բերանի դէմ բռնած  
մի փոքր հեռու կանգնելէր. սիրտը թրթփոււմ էր,  
շունչը ընդհատուում:

Հեշտ բան չէ, ախար սկեսուրի առաջն է  
կանգնել, պէտք է մօտենայ, նորա ձեռքը համ-  
բուրի:

Երեխայ գրկող հարսը, որ Անուշի եղբօր կի-  
նըն էր, յառաջ քաշեց նորան «դէ, Անուշ, ասաց,  
կիսուրիդ ձեռը պաշի» և երբ որ «արի բալես», քե-  
ղուրբան» ասելով կանչեց սկեսուրը, Անուշը գող-  
գողալով մօտեցաւ նորան և գլուխ տուեց: Սկե-  
սուրը երկու ձեռքով բռնեց նրա գլուխը և «ու-  
մուր-ջան» ասելով համբուրեց նորա երեսները և  
մի աթլազի աղլուխ կապեց նորա գլուխը: Անուշը  
նսչնալէս գլուխ տուեց սկեսուրի հինգ տարեկան  
աղջկան էլ: Սա էլ հագցրեց հարսի մատը մի ոսկի  
մատանի: Սուստաձեռն սկեսուրը մի գրպանից չոր  
մրգեղէններ, իսկ միւսից կանֆետ ու նողուլներ  
հանեց և բաժանեց լիուլի ամենին, «դէ ջահէլներ  
անուշ արէք ասաց, դուք էլ ազաբ աղջիկներ,  
քաղցրացրէք բերաններդ, որ քաղցը բաղդի տի-  
րանաք »:

Դէ դուրս կորէք, բօլ ա, մուլթը ընկաւ, կո-  
չում է ժամկոչը եկեղեցու տախտը աւելելով, ժա-  
մի ժամանակ ա, հիմի վարդապետը կը գայ, էս

քնչ սարգ ու կարգ ա դրած, ժամի մէջ չարնդ  
կուտեն, հէքեթ կասեն, ախր մեղք ա, ամօթ ա,  
այ, հայ, հայ, հայ:

Այս գողգողոցի վերայ ջերմ խօսակցութիւն-  
ները, որը ընդհատուեցաւ, որ ժամի ճանապարհին  
դարձեալ շարունակուի, որը կովի փոխուեցաւ, իսկ  
տղերքը վաղուց արդէն քաշուել գնացել էին:

Պետրոսը այս օրից հաստատապէս մտքում  
դրեց անպատճառ ուղել Մարգարտին և իւր մօրը  
յայտնեց իւր միտքը, նա էլ Ենօքին—իւր մեծ  
որդուն յայտնեց, նորա կամքը առաւ:

Այնուհետև յայտնի է, թէ քնչալէս Մարգար-  
տին բռնութեամբ թէ քաղցրութեամբ լռեցրին և  
զատկի օրերը նշան դրին. իսկ Կանաչ կիւրակի  
գիշերը փեսայ Պետրոսը արդէն աներանց տունն  
էր հրաւիրուել և Շողոյի ներկայութեամբ արժա-  
նացաւ Մարգարտին տեսնելու, երբ վերջինս քար  
կտրած նստած էր:

— Ախի, խօսա՛ փէսի հետ, ստիպում էր վե-  
րին ասաիճանի ուրախացած Շողոն, մի ամաչիր,  
հօ խալիսի տղայ չէ, մեր տղէն ա, մեր աչքի լու-  
սըն ա, Պետրոս-ջան, դու էլ գաթայ անուշ արա:



ԺԱ.

## ԽՈՐՀՐԴԱԽՈՐ ԳԻՇԵՐ

Ձատկի տօնից երեք շաբաթ անցել էր: Գիշերային մթութեան մէջ չորս պատանիք մի փողոցով բոլորովին լուռ ու մունջ անցնում էին և ահա կանգնեցան մի դռան առաջ, դուռը մի քանի անգամ թրխկացրին և մի քառորդ ժամից չետոյ ներս ընդունուեցան: Մարգարիտը այդ միջոցին իրանց բակումը կանգնած, մի աներևույթ զօրութեամբ ստիպուեցաւ բակի պատից դուռն նայել և փողոցով անցնող երիտասարդների մէջ նա ճանաչեց Պետրոսին և տեսաւ, թէ ինչ տուն մը տան նոքա:

— «Ախ, ես քեզ քնչ ասեմ Հարսէ, կանչեց նա:

— Ինչ քնչ ա, Մարգարիտ, ձայն տուեց Շողոն:

Մարգարիտը շփոթուեցաւ, և պատասխան էր արոնում: Նա կամ չկարծեց, որ Շողոն զարթուն կը լինի, կամ թէ ահամայ դուռն թռաւ նորա բերանից «Հարսէ» բառը:

— Ախչի, քունդ չի տանում, կրկնեց Շողոն իւր հարցը, նշանածիդ վրայ ես մտածում, Համբարձմանը փեսա-խում կանենք, դարդ մի արա, ես էլ եմ նշանլու էլել, ամեն օր ինձ ու ինձ կը նեղանայի, թէ ինչի՞ շուտ-շուտ փեսա-խում չեն առնում: Հիմի քոնն ա, Մարգարիտ-ջան:

— Հարսէ, հոգոց հանելով ասաց Մարգարիտը, ինձանով ըլի, ես փեսա-խում ոչ Համբարձմանը կուզեմ, ոչ Վարդավառին:

— Հա, հա, հա, հա, բարձրաձայն ծիծաղեց Շողոն, դաստու Վարդավառի անունն էլ ես տալիմ, ինչ ա թէ էն օրն էլ...

— Հարսէ, կտրեց նորա խօսքը Մարգարիտը, ինչ մտքեր ես անում, մինչի Վարդավառը ինչեր կը պատահի:

— Ինչէր կը պատահի:

— Ես գիտեմ ինչ կը պատահի, հառաչելով ասաց Մարգարիտը:

— Ի՞նչ, դու կարծում ես, Եղիակը դուրս գայ, հարսանք կանենք էս կարճ գիշերներին, խօսքը գիտութեամբ ծռելով ասաց Շողոն:



— Հա՛, վրայ բերեց Մարգարիտը, մինչև Վարդավառին ամեն բան սլըծած կը լինի:

— Քա ախչի, ես քո լեզուն չեմ հասկանում, նշանլու լինելը զօլայի բան չէ. մտրդու կը ցընդացնի, քնի, քնի, իմ քունը տանում ա:

ԺԲ.

## ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԵՍ

Մայիսեան մի գեղեցիկ առաւօտ Համբարձման հինգշաբթիի օրն էր լուսանում, ոչ մի ամպի հետք երկնքի ջինջ երեսին չէր նշմարվում: Արևելքի կողմը բոցավառ արշալոյսը արևի հրաշափառ դարձն էր շնորհաւորում և բնութիւնը համեստ գեղեցկութեամբ զարդարուած իւր բոլոր գրաւիչ տեսարաններով զմայլեցնում էր իւրաքանչիւր անհատի սիրտը:

Քաղաքից դէպի արևելք, բերդի դարի երկաթութեամբ բացվում է մեր առաջ մի տեսարան, մի դաշտավայր, որ իւր կանաչութիւնը միախառնելով հասարակ, բայց գոյն-գոյն ծաղիկների հետ, անմահ յաւերթահարսների ձեռքով հիւսուած մի գեղեցիկ սփռոց է ներկայացնում: Գաշաի արևելահիւսիսային կողմը, բերդի ծոցում նստած է սուրբ



Յովհաննէսի մատուռը և նայում է չիմանի երեսին փռուած բոլոր բազմութեան վերայ: Բայց աւելի տխորթութեամբ նայում է նոյնպէս պահուշորերը հագած, զարդարուած իգական սեռին, որոնք ամենքն էլ «Լուսաւորչու անմեղ երինջներն» են տեղական մականունով:

Ահա գալիս են խումբ-խումբ և բարձրանալով չոգում են սուրբի առաջ, համբուրում են ու մոմեր վառում, խաչհամբոյր ձգում և ուխտն անելով վերադառնում են ու փովում չիմանի ընդարձակ տարածութեան վերայ: Մենք էլ համբուրենք և ցած գանք, ներքևում աւագանի ջրով լուացուենք և հետևելով ընդհանուրի օրինակին մի ավիով էլ երկաթահամ ջրից խմենք:

Ահա մի տեղ զուռնա են ածում, ուր պարանի վերայ բարձրացած լարախաղացը իւր զանազան ճարպիկութիւններով նայողներին է զարմացնում: Մի ուրիշ տեղ Մօյգա Գալոն չարփարէքը ձեռքի մէջ չխկացնելով պար է գալիս մարմնամարզութիւններ անելով: Փարոյի Աղաջանն էլ մի ուրիշ խմբի մէջ սազը կրծքին դրած իրանից յօրինած խաղերն է երգում:

— Սրա պէս աշըղ ըսկի Թիֆլիզ էլ չը կայ՝ ասում էր նայողներից մէկը, մէկ Գիւմրուայ Զիվանին կըռնի սրանը, ասում ա իրար հետ ծանօթ էլ են, խաղով բարև են ըղրկում մէկ-մէկու:

— Ա'խպէր, սրանց տուածուրիկ ա, ասում էր միւսը, էս որ ըսենց, սրա աղբէր մօյգա Գալոն էլ ընտեղ ա խաղում, մէկէլ աղպէրը—Իսկոն էլ փայլէվանին ա խաղացնում: Իսկոյի հատը որ ըսկի զուռնաչի չի ճարուի:

— Ձէ, եալնիշ ես, Կարապետ, Իսկոն մեր Յունայի Խաչոյի բարա ուստայ չէ:

— Ձանըմ, ընդու բանը բաշխայ ա:

— Դէնը թամաշ արէք, դէնը, ասաց մի ուրիշը, Քոչոյի Գէվոն քնչ լաւ ձի ա խաղացնում, հա, հա, հա, գնաց, գնաց, ընցաւ, հա: Սիմոն-աղի Մանուկն էլ դէնն էկաւ, աղբէրք, մէ եան կայնէք, էս տարի ինչքան ձիաւոր են եկել, ատամներս եռում ա, համա քնչ անեմ:

— Ղորդ Զոհրաբ, դո՛ւ ընչի էսօր ձինդ չես հեծել:

— Հէրս թողեց որ, ասաւ ձինը խեղճ ա, շատ կը չարչրես:

Տեսնենք միւս կողմը քնչ է կատարվում: Գետի ավին դաս-դաս նստած են՝ կանայք առանձին, իսկ հարս ու աղջիկ առանձին և առաջները սեղան են բաց արել: Սեղանի զարդարանքն է հաց, կէսը տապակած և կէսը խաշած ձկներ, ձուածեղ և ձու: Սա այն գետն է, որ քաղաքի երկարութեամբ արևմուտքից դէպի արևելք հոսելով Նորադուզի մօտ թափվում է Գեղամայ լիճը, այդ



գետն է, որ սեպտեմբերից մինչև յունվար ամիսը առատապէս տալիս է գովուած «Գեղարքունի» ձուկը:

— Ախչի, Հոռոմ, էգուց դու էլ կը գտնուիր քաղելու, ասաց մի կին իւր սեղանակից ընկերին:

— Չէ, գլուխը շարժելով ասաց Հոռոմը.

— Ընչք.

— Էս վախտ լօքի ուստենք ճարում.

— Աւար, էգ իմալ կնիկես, զարմանալով ասաց նորան իւր ընկերը, մեծ պասից մի ճանկ լօքի բա յետ չես քցել ես: Էգուց Համբարձման պատուրբաթն ա, տուն չի մնայ, որ կէթան ուրց քաղելու:

— Տօ դէ ինչ ուրց, ինչ բան, դուք էլ մը Հանա (սպտառ) էք գտել էք, զարգրվում էք, էթում էք, չուր իրիդուն ման էք գալում էք: Ես գիտեմ, մկա ամպերը կլնեն, էգուց էլ ըմէն տարուայ նման անձրև կգայ, պտի մէ լաւ թրջուէք, յետոյ տուն գաք:

Աղջիկները մի կողմից հաց են ուտում, մի կողմից էլ տղերքի վերայ են խօսում նրանց նայելով, որոնք բերդի կողքին քարափների մէջ թախչէքի վերայ խումբ-խումբ նստած, հացը առաջները դրած քէֆ են անում, «բայաթի» ու «զարադի» են կլկլացնում:

Նրանց հացը սրտեղից էր, տանքն էին բե-

րել:—Ո՛չ, այնտեղի ամեն մի խումբի մէջ մի-մի նշանուլ տղայ կայ, մէկի զոքանչը, միւսի քենին իրանց բոխչից բաժին են ղրկել փեսային: Ուրեմն գնանք դէպի տղերքի խմբերը, տեսնենք այնտեղ ինչ կայ, այստեղ գուցէ մեր ներկայութեամբ կը վրդովենք կանանց խաղաղութիւնը:

— Գիշերս Լէյլին ու Մաջլունը ողջում են տուել իրար, ասաց մի տղայ իւր ընկերին:

— Ի՞նչպէս թէ ողջում, հարցրեց միւսը.

— Բա, ախար գիշերս որը մի թասով ջուր դնի լուսնրկի առաջ, աչքերը առանց թարթելու թասի մէջ աչքի մինչև կէս գիշեր, կէս գիշերին կը տեսնի, որ ամեն սարեր, քարեր, ծառեր, ջուրիտ ջուրիտ կը գան, իրար ողջում կը տան: Ամենից յետը մէկէլ տեսար, Լէյլին ու Մաջլունը իրար վրդով փաթաթուած եկան, իրար ողջում տուին: Հէնց էն վախտը ինչ որ սիրտդ ուզի, ասես, կը կատարուի:

Այս ասողը նշանուլ Պետրոսն էր, մինչև հիմա լուռ ու տխուր նստած էր:

— Ղորդ ա, ասում ա Պետրոսը. չունքէ գըշերս կէթայ աներանց տուն, խելք ու միաքի դէպա գէնն ա:

— Չէ, չեմ էթայ, գլուխը շարժելով ասաց Պետրոսը:

— Դէ էս գիշերս էնտեղ էր, բօլ ա, էլի,



ամեն օր հօ բանը գործ չէ՞, վրայ բերեց Պետրոսի փոքր եղբայր Արմենակը:

— Քեզ որը խօսացրեց, նկատեց նորան Պետրոսը:

— Լաւ, լաւ, գիտենք, գիշերս «Լէյլի-Մաջլուն» էք դարձել, խալլու նշանածիդ հետ, էնա ջրի ղրաղին նստած հիմի քեզ ա թամաշ անում ա, ո՞վ գիտայ, գիշերուայ քաղցր գեալաջու (գրոյց) կէսն էլ հիմի աչքով ունքով ա հասկցնում:

— Բա՞ղօ, Աստուած սիրես, սո՛ւս կաց, դրա վախտը չէ:

— Տղա՛յ, ընչես էգէնց, նիաթդ ընչի՞ ա կախ, թէ՛նչ կայ:

— Տօ՛, թէ՛նչ պտի ըլնի, Բաղօ, դու քո քէֆն արա:

— Տօ՛, սաղն ասե՛մ, մէջ մտաւ Արմենակը, գիշերս գնացել էր նշանլուի մօտ, նշանլուն երես չէր եկել էր, հիմի սիրտը կոտր ա:

— Տօ՛, ժո՛ւռ ու մոռ ու մեռնես, բարկացաւ Պետրոսը եղբօր վերայ, վեր կացաւ, որ ծեծի, բայց ընկերները չը թողին: Արմենակը խռովեց, ուզում էր գնալ, նրա էլ փէշերից ընկան կախ, աչք ու երես պաչելով, համոզելով հազիւ-հազ կարողացան նստացնել:

— Շատ նեղսիրտն ես, Պետրոս, մարդ մի

քիչ ըդենց չիլնի, յանդիմանում էին Պետրոսին ընկերները:

— Գնանք, գնանք ցած, ասացին տղէրքը, երբ որ պրծել էր հացկերութիւնը: Եւ ամենքը ցած եկան: Կէս օրը անցել էր, երբ սկսեց բազմութիւնը կամաց-կամաց քաշուել չիմանից:

— Պետրոս, մինչի հիմի քո թնչն ա ինձնից ծածուկ էլել, ասաց հետաքրքիր Բաղօն, երբ երկսով մենակ ընկած վերադառնում էին տուն, եթէ մի բան կայ, ասա՛, քեզ ըդենց ըսկի չէի տեսել:

— Բա՞ղօ-ջան, թէ՛նչ ասեմ, ասաց Պետրոսը, քէֆս խարաք ա.

— Սխար ընչի՞:

— Ջանըմ, իմ սրռը (գաղտնիք) քեզ չասեմ, էլ վի՛րն ասեմ. նշանածիս սիրտը ինձ չի կպնում, թէ՛նչ անեմ, ես ուզում եմ, մի քեզիպէս երկու տըղի հետ մի կիրակի խալվաթ (առանձին) քցենք, էն տիրացու ա, ինչ ղօռադար ա, էն Սմբաա չէլածին մի լաւ ծեծենք, էն ա իմ նշանածին բանից հանողը:

— Չէ, Պետրոս, լաւ չես անի, դրանով դու քո բանը դժա վատ կանես, դու համբեր ա, ես քեզ կասեմ:

Չիմանից ձիաւորները գնացել պրծել էին, իսկ ոտուարների վերադարձը դեռ շարունակվում էր, նրանց մի ծայրը հասել էր քաղաքին, միւս ծայրը



դեռ սուրբ Յովհաննէսից չէր կտրուել: Ամենքն էլ ուրախ ու զուարթ էին: Վերջին խումբը երբ մատուռից դուրս եկաւ, նորա մէջ երեւաց և Մարգարիտը, որ աչքերն էր սրբում, երեւի մատուռի մէջ լաց էր եղել:

Սուրբ Յովհաննէսի մօտ կայ մի երկրորդ մատուռ, դա էլ սուրբ Գէորգն է, որի օձապտոյտ և դժուարագնաց մուտքը շատերին անմատչելի է: Այս մատուռում երկու աղօթասէր երիտասարդներ վաղուց էին մտել «Հաւատովի» քսան ու չորս տունը ասել և իւրաքանչիւր տունը ասելիս մի-մի ծունր կրկնել նոր էին պրծել ու դուրս գալիս, կարծես, գիտութեամբ իրանց յետաձգելով, որոց ուշադրութիւնը վերջին խմբի վերայ էր:

— Աւետիս, է՛ն ա երեւաց, ասաց նրանցից մէկը:

— Ո՛ւր ա, չեմ տեսնում, Սմբատ, ասաց միւսը նայելով դէպի վերջին խումբը:

— Ե՛ն կանաչ գէյրով աղջիկն ա, Հայ, արդեօք ընչի՞ ա էնպէս տխուր երևում...

Մոռացայ վերը նկատել և այս, որ Ս. Յովհաննէսի ժայռերի վերայ խփուած են անթիւ-անհամար մեխեր, որոնց մարդ նայելով ապշում է և ինչ բացատրութիւն տալը չի իմանում:

ԺԳ.

## Գ Ր Բ Ա Յ

— Բա բա՛ջի, մեր տղէն, քանի նշանուել ա, ուրախանալու բաղա՛լ (փոխանակ) տխուր ա, ես թնչ անեմ:

— Ընչի, թնչ կայ որ:

— Քա ո՛չ բարով Համբարձման գիշերը աների տուն էր գնացել, շուտ էկաւ, նիւթը կախ, սիրտը կոտոր, տռանց խօսալու շորերը հանեց, մտաւ տեղերը: Հազար հարցրի, «Տղայ, թնչ կերար, թնչ խմիր, նշանածիդ տեսար», ջուղաբ չը տուեց: Որ շատ ընկայ հետը «Ջհանամին ըլնի» ասաց, ինձ հետ շատ մի խօսա ասաց, թէ չէ ես գիտեմ՝ ասաց, համա էլաւ, խանչալը պատիցը առաւ, հանեց, էն էր, ուզում էր կոխէր իր սիրտը, ձեռ ու



ոտս դող ընկաւ: Արայ հասաւ, «Քո Աստու սէ-  
րըն ասեցի, թնչես անում ասեցի, ճար կտրածի տը-  
ղայ կանոս, ասեցի, մէ արունք անես»: Ելի մե-  
ղայ տուեց իր Աստուն, պարկաւ, քնաւ: Ել մինչի  
լուսը բացուաւ, բացուի քո բալէքների վրէն, քու-  
նըս չը տարաւ, հազար միտք արի, ինձի ինձի նե-  
ղացայ, Աստուած, ասեցի, թնչ անեմ, ասեցի, ես  
թնչ խողը տամ իմ գլխին ասեցի, որ էդ սև սրտի  
աղջիկը սիրովնայ, ասեցի, իմ վրէն, խեղճ տղէն  
էթում ա թէ մի քիչ խօսայ, սիրտը բացուի, էն  
էլ ես ինչ գիտեմ, միտքը ինչ ա, երես չի գա-  
լում ա, տղիս հետ չի խօսում ա, մախտաթ, էդ  
աղջկայ սիրտը չի տաքնում ա իմ տղի վրէն:

— Ախչի, բանը որ էդ ա, էլ ընչես, նեղու-  
թիւն ես քաշում ես:

— Ի՞նչ անեմ:

— Իմալ թէ ինչ անեմ, Խալֆէն հօ շատ հե-  
ռու չէ, մէ օր չարտաբը քցա գլխիդ, դնս մօտը՝  
կուգես ես էլ կը գամ հետդ: Անցած շաբթին Գիւլ-  
լիզարս հիւանդ էր, գախ զլօխն էր ցաւում էր,  
գախ ջանն էր դադում էր, քնի մէջ էլ իր մեռած  
ընկերների հետ էր խօսում էր: Զարթնցնում եմ,  
«աղչի, աւում եմ, թնչ էլաւ ասում եմ քե, մեզի  
ջուր կտրցրիր է»: Ասում ա «Ի՞նչ եմ արել»: Ասում  
եմ «էլ թնչ անես, էսենց բաներ իր խօսում իր քնիդ  
մէջ»: Ասում ա «Չէ, ես Եփեմ էդենց բաներ խօ-

սացել»: Ալմոյիս ասեմ, չարէս կտրաւ, էլայ, գացի  
խալֆի մօտ, ընդու ախրը խէր ըլնի, շատ բան էլ  
չէ, խեղճին մէ դարտակ աղլուխ տարայ: Աղաչեցի  
ասի, «Քո հոգու սաղաղէն ասի, իմ աղջիկն ասի  
հիւանդ ա, մէ թուղթ իշկէս նրան»: Թուղթը բա-  
ցաւ, կարդաց, ասաւ «Սուփնիշանին, մեռնեմ իրա  
զօրքին, մատաղ էք ասել էք ասաւ, չէք տուել էք  
ասաւ, ընդուց ա»: Ղորդ որ էնենց էր, ախչի, էն  
սհաթը ընկաւ միտս, Գիւլլիզարս հլա որ օրօրոցին  
էր, մէ հետ էլի խիւընդացաւ, էլի գիշերը չէր  
քնում էր, հոս լալում էր, «մեռնեմ քե ասի Սուփ-  
նիշան, դու իմ աղջկան ասի բարի լաւութիւն տաս,  
մէ խաւ բէրեմ քո դուռը մատաղ անեմ», էդու  
վրայ աղջիկս լաւացաւ էլ, մենձըցաւ էլ, համա  
Աստուած իմ մտքի առնն աւերա, էրէկուան կէ-  
րածս էսօր միտս չի մնում, Սուփնիշանի մատաղը  
մօռցելի, էնենց մնաց, չուր օղօրմի իր ծնողաց,  
խալֆէն քցեց միտս, համա էն օրը էկայ տուն մէ  
խաւ առայ, մէկէլ գարկի գացի Սուփնիշան, մա-  
տաղն արի, էկայ, մկայ փառք Աստու, Գիւլլիզարս  
լաւ ա: Խալֆէն, որ քո հարսին էլ թուղթ անի  
թնչ ա, քո տղի հետ կդառնան կաթն ու կորեկ,  
էն Աղալ-Մուղնի (սուրբ Գեորգ վկայ):

— Որ էտենց ա բաջի, Աստուած պահի քո  
բալէքը, էդուց զան էթանք ընդու մօտ:

— Շատ լաւ:



Միւս օրը այս երկու կանայք չարսաւները գլխներին դցած մի մօտիկ գիւղի փողոցով անցնում էին, դրանց պատահեց մի երկարահասակ տղամարդ մօտ քառասուն տարեկան, որը հագած ունէր մի հնոտի ֆարաջա, մի մորթի փոքրիկ դրոտակ գլխին և բարձրակրունկ քօշերն էլ ոտին: Դա էր գրբաց Խալֆէն, որը ինչպէս կանանց աւանդութիւնն է ասում, գեռ մօրից չը ծնած, մի սուրբ նորան նշան է տուել, թէ «քո ձեռներից հրաշքներ պէտք է դուրս գայ», և այդ հրաշագործութիւնների մասին հաղարաւոր պատմութիւններ կան: Օրինակ, մի անգամ նա իւր եղունգի վերայ մի գիր էր գրել, մօտին նստող մարդը կպել էր քարից, չէր կարացել, թէ վեր կենայ, մինչև որ նա եղունգի գիրը ջնջել էր: Մի անգամ ջաղացում մի աղօթք էր կարդացել, ջաղացի քարը, որ ֆրոֆրուալին բանելիս էր եղել, իսկոյն տեղնուտեղը կանգնել էր: Քանի անգամ նա փակած կողպէքը առաջին դրած աղօթք է արել, մին էլ տեսար կողպէքը չըթալին ինքն իրան առանց բանալիքի բացուեց: Սիրոյ կամ ցաւի համար հօ էնքան թրդթեր է արել, որ հաշիւ չը կայ, բոլորն էլ կատարուել են...

Բայց ինչո՞ւ նա, որին այդքան հաւատ ու յարգանք էր ընծայում ամբողջը, փոխանակ պարծենալու, միշտ կը տեսնէիք նորան մտախոհ, տը-

խօւր, վերին աստիճանի կասկածոտ: Հաց ուտելիս ամեն անգամ կարծում էր, թէ իրան սպանելու համար, ահա թունաւորել են հացը: Անկողնում պառկած ժամանակ երբեմն վախում էր, թէ երգիկից հիմա հրացան բաց կանեն, և իրան տեղնուտեղը գիւլախորով կանեն: Գիշերներ տանը մենակ չէր կարող քնել երկիւղից: Սարսափելի կերպով վախում էր դժոխքի տանջանքներից, մազէկամրջից, կպրի կարասից և գիշատեսիլ գլեւրից, և վերջապէս նա առանձին եղած ժամանակ շատ անգամ երեխի պէս լալիս էր:

Վերը յիշուած երկու կանայք սորան պատահելիս ձեռը պաշտելին, գլուխ խոնարհեցրին նորան, լետոյ յայտնեցին իրանց նպատակը. Խալֆէն «գլխիս վրայ, շատ լաւ» ասաց և լետ դարձաւ նորանց հետ: Երբ մտաւ տուն, հրաւիրեց նորանց. նստել:

— Հարսիդ անունը ի՞նչ է, թագրէհը գրպանից հանելով հարցրեց նորանցից մէկին:

— Մարգարիտ:

— Մարգարիտ, կրկնեց Խալֆէն, մենք երկու, այլը մէկ, ըէն հինգ, և այլն, ասելով և թագրէհի հատիկները գցելով:

— Մարգարիտի մօր անունը ի՞նչ է:

— Անոյ,

— Անոյ, այլը մէկ, նոն չորս և այլն, ասե-



լով նոյնպէս թագրէհի վերայ հաշուեց մեր Խալֆէն, ամբողջ գումարը հաւասար տասներկսի բաժանեց, մնացած թիւը տասներկու կենդանակերպաների վերայ հաշուեց և գտաւ, թէ Մարգարիտը ի՞նչ աստղի տակ էր ծնուել: Վեր կացաւ տան պատուհանից մի գիրք բերեց ու բաց արաւ: Գրքի տողերի կէսը կարմիր կեսը սև թանաքով էր գրած, մի քանի երեսներ էլ տառերի փոխանակ ծուռնուծուռ գծեր էին տեղաւորուած աղիւսակների մէջ, այդ գծերը «թլիսմ» էին կոչվում: Այդ թլիսմներից մէկը արտագրեց առանձին երկարաւուն թղթի վերայ, թուղթը եռանկիւնի ձևով ծալեց և տալով կնոջը, պատուիրեց, որ տանի տրորել տայ ջրի մէջ և առանց հարսի իմանալուն խմացնի նորան, այն ժամանակ նա կսկսի սիրել իւր մարդուն:

Ընթերցողը արդէն գիտէ, որ թուղթ անել տուող կինը Պետրոսի մայրն էր, որ կամելով մի հնարք գտնել իւր հարսի սէրը գրաւելուն հարևանի կնոջ խորհրդով գիմեց այդ միջոցին և թուղթը միւսնոյն կնոջ ձեռքով ուղարկեց իւր խնամի Շողոյին, որ նա թուղթը տրորելով ջրի մէջ և առանց Մարգարիտի իմանալուն խմել տայ նորան, ինչպէս պատուիրել էր մեր բարի Խալֆէն:

ԺԴ.

## ՂՈՒԼԱԼԱՅ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

Մի առաւօտ, երբ նոր էր արևը ծագել, Նոր-Բայազէտում ամեն տան ուխտ գնալու պատրաստութիւն էին տեսնում: Այդ՝ Աստուածածնի պահոց չորեքշաբթի օրն էր: Մէկը բազարից ղավուն (սեխ) էր տանում, միւսը խիար (վարունգ), մէկէլը կանաչի և այլն: Արևը երբ երկու «մգրախաբոյ» բարձրացաւ, երգիկների մուխն ու ծուխն էլ վերջացաւ: Մին էլ տեսնես Գորոյի հինգ աչքանէ թագա-կամուրջից անցնում են մէկը միւսի լետեից կանանց խումբեր, զարդարուած հարս ու աղջիկներ, հացով ու երեսէքով բարձած էջեր, գնում են ուխտ: Աւելի պարզը գնում են զբօսնելու, մէկը իւր որդու համար հարսն ընտրելու, միւսը իւր



նշանադրուած Հարսնացուն տեսնելու ևսլն: Մի քանի երիտասարդներ էլ առանձին խմբերով դուրս են եկել ճանապարհի վերայ, աղջիկներին տնդդելու: Սմբատն ու Աւետիսն էլ առանձին են զբօսնում, աչքները այս ու այն կողմն են պտտացնում Մարգարիտին խումբերի մէջ գտնելու, բայց նա դեռ չէ երևում:

— Ախջի, Մարգարիտ, դէ շուտ արա, շորերդ հագի է. ստիպում էր տանը Շողոն, երբ Մարգարիտը յամառուել կանգնել էր.

— Ես չեմ գալ.

— Փիա.

— Դու էթում ես գնա, ես կըմնամ, տանը մուղաթ կ'ենեմ.

— Ընչի, դու քօռ պառաւ ես, մնաս տնպահ, նշանու աղջիկ ես փառք Աստծու, կիսուրդը ընտեղ կ'ենի, քեզ խալաթ կը տալ.

— Հարսէ, դու էթում ես, գնա, ինձնից թնչ ես ուզում.

— Յիսոս, Արեգ (զարմացական բառ), խաղըր թնչ կասեն, քեզ թողեմ տուն, ու ես ըլնեմ էթամ: Որ ըտենց ա, ես էլ չեմ էթայ, այս ասելով սկսեց Շողոն որպէս թէ լալ: ձարահատուած Մարգարիտը վեր կացաւ, նոյնպէս լալով պահու շորերը հագաւ և ճանապարհ ընկան:

— Ադէ (մայրիկ), Աստուածածին զատն ա,

Հարցնում էր մի երեխայ, որը գնում էր իւր մօր կողքով:

— Չէ, բալա, մօտիկ ա, Էնա էն տները թնչ ա, որ էրէվում ա.

— Հա.

— Դէ էն տների մէջն ա.

— Ադէ, Աստուածածինն ընչէ ա գացել ա, գատը տեղ կայնել ա ու չգալում ա մեր կուշտը, մենք ենք էթում ենք ընդու կուշտը.

— Աստուածածինը ժամ ա, բալա, մեր ժամն թնչ ա.

— Հա.

— Դէ մեր ժամի նման ժամ ա, էն էլ Ղուլալեցւոնց ժամն ա. էսօր ընդու ըխտի օրն ա, էթում ենք.

— Մկրտիչ, Մկրտիչ, գոռում էր ուրիշ խմբից մի կին իրանցից յառաջ գնացող մի տղայի. ջուրը ընցնելու վախտը սաղը տեղը իմանաս, խորունթը չքշես էշը, թէ չէ բեռը-մեռը կ'թրջի:

— Լաւ, լաւ, պատասխանում էր Մկրտիչը և յառաջ ընկած «չօշ հա չօշ» անելով քշում էր էշը:

— Ուխտաւորների մի ծայրը հասել էր Ղուլալի գիւղը, որ գտնվում է Նոր Բալազդէից դէպի



Հարաւ, ծայրը դեռ քաղաքից չէր կտրուել: Կէս օրուայ շոգին նեղացած ու քրտնած բոլորը Հասան Ղուլալայ պաղ աղբիւրի մօտ, ջուր խմեցին, լուացուեցին, հովացան ու մօտան գիւղը: Եկեղեցու դուռը բաց՝ սպասում էր նրանց: Այս առաջին անգամ չէր, ամեն տարի այս միւսնոյն օրը կրկնվում է այդ ուխտագնացութիւնը: Եկեղեցին համբուրեցին, ուխտները արին, խաչհամբոյր գցին ու դուրս եկան Ղուլալայ «Կալերի դուղը» խումբ-խումբ նրստեցան ու սուփրա սեղան բաց արին: Նոր-բարեկամներ նոր-բարեկամների մօտ հրաւիրուեցան, խումբեր-խումբերի խառնուեցան և սեղան-սեղանի հետ միացան: Շողոն էլ իւրայիններով իւր թագախնամու խումբի մէջ հրաւիրուեցաւ: Հիմա Պետրոսի մայրը Մարգարիտին տեսնելով, որ քողաւորուած գլուխը խոնարհացրաց կանգնած էր, երեսը համբուրեց, մի ոսկի մատանի իբրև այն աւուր ուխտագնացութեան լիշատակ մատը դրեց. միաթլաղի աղլուխ էլ գլուխը կապեց, զարգարեց և իւր մօտ նստացնելով հանաքներ արեց և երեխայակոսն մանր հարցեր առաջարկեց: Մարգարիտը ինչպէս մի չոր քար կծկուած կպել էր գետնից անշարժ և անխօս, նա մտքով յափշտակուած իրան մի ուրիշ տեղ էր կարծում:

Յետոյ սուփրա գցեցին ու պասուցուայ կերակուրներ պարգեցին, մի շիշ էլ արաղ ունէին բե-

րին մէջտեղ դրին: Այդ միջոցին Մարգարիտը ընծայ ստացած մատանին ու աղլուխը տուել էր Շողոյին: Վերջինս ինչքան աչքով ունքով էր արել, այն է ուզեցել էր հասկացնել, թէ «էդ ի՞նչ ես անում. վեր առ, թէ չէ խայտառակ կլինենք», բայց Մարգարիտը գցել էր նորա վերայ և ինքը հեռացել մտել էր հարսնաղջիկների մէջ ու նրստել:

— Պետրոսի մայրը, որ աչքի տակով ամեն բան նկատում էր և իրան չտեսած էր ձևացնում, մտքումը տարակուսութեան մէջ էր, թէ ո՞ր է Խալֆի թալիսմանի բարերար ազդեցութիւնը, դեռ չէ երևում: Յետոյ ինքն իրան քաջալերելով, թէ «համբերենք, կտեսնենք», վեր առաւ արաղի շիշը՝ բաժակը լցրեց և տուեց Շողոյին:

— Խնամի-ջան, հազար բարիս քեզի.

— Հազար բարու տէր կէնաս, խնամի-ջան, ձեռնէդ անպակաս, թասն ընձի, Աստու բարին քեզի, ասաց Շողոն բաժակը առաւ և բերնին մօտեցնելով առանց խմելու լեւ տուեց.

— Ե՛ս, խնամի-ջան, էդէնց կը խմեն, Աստուածդ կը սիրես, խմա՛, խնամի-ջան.

— Քա խնամի-ջան, էն Աղա-Մուղնի, չեմ կանայ:

— Քա դէ լա՛ւ, դէ խմա՛, գլուխը շարժելով



ստիպում էր խնամին, մեր տուած բանը ընչի՞ է-  
դենց ծանդը էք վեկալում էք:

Այս խօսքի վերայ իսկոյն Համաձայնեց Շողոմ  
և սկսեց բարեմաղթել երկրորդ անգամ:

— Սաղ ըլնես խնամի-ջան, Աստուած քո եր-  
կէն ձեռը չը կարճացնի, ուրախ մերիկ ըլնես: Սաղ  
ըլնէք դուք էլ հօրսներ, անքիկներ, Մարգարիտ-  
ջան, բարով դու էլ քո մուրադին հասնես, էն  
սուրբ Աստուածածինն եմ ապաւիներ, ամենքիդ  
դիլլաքն էլ (նպատակ) կատարայ:

Այս ասելով Շողոմ գլուխը մի փոքր լետ ու-  
լարեց, մի ձեռնով բերանի սալիտակ եաշմաղը դէ-  
պի ծնօտը լետ քաշեց և միւս ձեռնով բաժակը  
բերանին մօտեցրեց և մինչև յատակը քամեց:

— Անուշ էլաւ խնամի-ջան, ասաց Պետրոսի  
մայրը և գրպանից մի կտոր շաքար հանելով ա-  
ռաջարկեց Շողոմին:

— Անուշ կէնաս, սաղ ըլնես, խնամի-ջան, ա-  
սաց Շողոմ:

Յետոյ Պետրոսի մայրը նոյնպէս օրհնութիւն  
կարդալով արաղը խմեց, ուրիշներին էլ խմացրեց  
և սկսեցին հաց ուտել:

Ամենքը կերան ու կշտացան, և ուղտի կա-  
րաւանի պէս տողուեցան խումբ խմբի լետեւից: Ե-  
րեխէքը ընկան կիսահաս արտերի մէջ, իրանց ա-

ղանձացու ցորեն քաղեցին, և մանրիկ խրճներ ի-  
րանց մէջքի ղալիշով կապած ու շալակած ճանա-  
պարհ ընկան:

Երեկոյեան զանգակներ տալու մօտ էր, երբ  
Նոր-Բալագէտի իշխան, աղքատ, ծեր, երիտա-  
սարդ բոլորն էլ թափուել էին կամուրջի ականջին  
վերադարձող ուխտաւորներին ընդ յառաջ դուրս  
գալու:





ԺԵ.

## ԱՅՐԻ ՎԱՆՔԸ ԵՒ ԽԱՉԵՐԸ

Սուրբ Խաչի մեռելոց երկուշաբթի օրն էր լուսանում և տների մէջ դարձեալ իրար անցում կար։ Գիշերով մէկը միւսի փակած դռները ձեծելով «Աեր կացէք, լուս ա, կանչում էին, բոլորը գնացին, մենք չեա մնացինք»։ Ո՞ւր էին գնում։

Նոր-Բալագետից դէպի Հիւսիս ծովի ափին մի կիսակործան վանք կալ (ասա, ուր չը կալ)։ Ամեն տարի այսօր դեռ չը լսուտացած շատերն էլ արևածաղի ժամանակ այս վանքն են լինում։

Երևակայիր մի ժայռոտ ծովափ, դարաւոր ժայռերի խռոչնեւում այս ու այնտեղ տեղաւորուած են պարսիկների խրճիթները, որոնցից բարձրացած ծուխը միայն իմացնում է տեսնողին, թէ այնտեղ բնակիչներ—մարդիկ կան։ Ծովափի ծայրին, բարձրագիւր ժայռի գագաթի վերայ կանգնած

է Հալ ազգի շատ վաղուց կորցրած փառքի մի բեկորը։ Դա է Ալրի վանքը. դուռն ու լուսամուտները բաց։ Գիւղի բնակիչները ինչպէս ուզում են վարվում են վանքի հետ, ոմանք յարգանքով և ակնածութեամբ և ոմանք թշնամաբար։

Առաւօտեան հովը փչում է ծովի երեսից և արեգակը ծովի հակառակ ափից բարձրանում է հորիզոնի վերայ։ Վանքի շուրջը հին աւերակների մէջ, որոնք երբեմն միաբանութեան խցեր են եղել, ուր հիմա առատօրէն բուսած է եղինջը—աւերակաց զարդը, ուխտաւոր կանայք երկու քարով սարգած օջախների վերայ իրանց մատաղն են եփում։ Զուռնէն ածում են և հարբած ու գինու տկճօրը ուսներին դրած երիտասարդները պար են գալիս։

Մի քանի տղէրք էլ, որոնք Նորագուզ գիւղի դէմից նաւակ նստած ծովի երեսովն էին եկել, առանձին էին նստել քէֆ անում, նորանց հետ կանայք չը կալին։

Ճաշուալ շոգը կանգնել էր, երբ հացի նստեցին, շատերը դեռ մատաղ եփելուցն էլ էին պըրծել, լանկարծ ձայն տարածուեց ուխտաւորների մէջ թէ մարդ խեղդուեցաւ։

— Ո՞վ ա, ո՞վ ա, հարց ու փորձ անելով իրար խառնուեցան.



— Միրիբենց Մնճն, Միրիբենց Մնճն, խեղ-  
զուեցաւ.

Այս ձայնի վերայ ամենի էլ հացը հարամ ե-  
ղաւ, գոռոնեն իւր ձայնը կտրեց, գոռուն գոչուն  
ընկաւ կանանց մէջ:

— Է՛նա, հա՛, գլուխն երևաց, ահա ջրի տա-  
կնովն էլաւ. ձայն էին տալիս ծովի ափին համար-  
եա՛ մէկմէկու վերայ գիզուած բազմութիւնը:

Մի քանի երիտասարդներ նաւակը շուտով  
դէպի ծովը ուղղեցին, և յառաջեցին դէպի խեղ-  
զուող դիակը: Մինչև նաւակի հասնելը դիակը  
ջրի երես պարզուեցաւ, մէկէլ ուզում էր, որ խը-  
րուի, ղօչաղ Գրիգոր յառաջօրէն շրերը հանած  
նաւակի մէջ կանգնած էր, իրան ցած զցեց ծովի  
մէջ և դիակի թւից բռնած գուրս քարշեց: Միւս  
աղերքն էլ նաւակի միջից Գրիգորին օգնեցին և  
մի քառորդ ժամից յետոյ դիակը նաւակի մէջ հա-  
նած գուրս բերին:

— Ծովի մէջ լողանում էր, շատ աղէրք մը-  
տել էին ջուրը լողանում էին, բայց դա հարբած  
էր չէր իմանում, ո՛ւր էր գնում, խորը տեղն ա  
գնացել, ուզեցել ա թէ յետ դառնայ, էլ չի կա-  
րացել. միւս լողացողները մինչի ջրից գուրս դա-  
լը, խաբար բերելը բանը բանից անց էր կացել:

— Վեր էք, վեր էք ժողովուենք գնանք, սաղ  
երկրի մէջ խաղք էլանք:

Ամենքն էլ սկսեցին անկարգ անկանոն սուս  
ու փուս տուն վերադառնալ:

Ամեն տարի սովորութիւն էր, որ երեկոյեան  
պահուն ուխտաւորները սայլերի վերայ նստած վե-  
րադառնում էին ոչ ուղղակի տուն, այլ յառաջ  
դէպի Խաչերը:

«Խաչեր» է կոչվում Նոր-Բայազէտի արևմտ-  
եան ծայրի արօտը, այնտեղ մի քանի խաչարձան-  
ներ լինելու պատճառով, ուր քարափի միջից սառ-  
նորակ անուշ ու պարզ ջրեր են կարկաչում: Նոր-  
Բայազէտը, որ պարծենում է իւր հովասուն օգով  
և առողջ ջրերով, ահա Խաչերի ջրերն են միւս  
բազմութիւ աղբիւրների մէջ առաջին տեղը բռն-  
ում, որ ստորերկրեայ խողովակներով ճիւղաւո-  
րուած ցրվում է քաղաքի մէջ այլ և այլ տեղեր:  
Խաչերի թաղը իւրաքանչիւր տասը-քսան քայլա-  
փոխին մի աղբիւրի կը պատահի մարդ. ի հարկէ  
այդ առաջին կարգի ջրից՝ «Մարդ եթէ մի սաղ  
գոմէշ կերած լինի, Խաչերի ջրից երկու թաս խը-  
մեց թէ չէ, իսկոյն կը մարսի» ասում է տեղական  
գովասանքը:

Քարափի ջրերից ցած մարգագետնի մէջտեղ  
բղխում է բնական շատրուանով «Խաղախաչի» աղ-  
բիւրը թէպէտև առաջի միջից, սակայն ոչ պակաս  
յատկութեամբ քան քարափի ջրերը. Խաչերի մար-



գազետնի վերայ ամբողջ ամառուայ կիւրակէ օրերը ճաշից լետու խումբ-խումբ մարդիկ նստում են և խաչերի «անմահական» ջրից պատրաստած թէյ են խմում, արաղ ու գինի կոնծում, կամ փեսայի գառն են ուտում:

Շողոն էլ այսօր Ալրի վանք չէր գնացել և ոչ Մարգարիտին բարեկամ ընտանիքի հետ ուղարկել, նա զբաղուած էր այսօր Պետրոսին գառն ուղարկելով: Խազախաչի սիգաւետ տփին Պետրոսը իւր ընկերներով (որոնք վարձուած ղարաուլներ (պահապան) էին գետի ձկներին, որ մարդիկ չը գողանային), նստած քէֆ էին անում: Մի կողմից գառն էր մորթվում, միւս կողմից օջաղ սարքվում, որ մի քանի շամփուր խորոված անեն, ձեռաց ուտեն, մինչև կերակրի պատրաստուիլը:

— Դառան եփն էկաւ, ցնծա՛, ասում է մի տղայ գատարկ ավսէն առաջարկելով նստող երիտասարդներին.

— Փսոնն թնչա.

— Տասն և հինգ շահի.

Իսկոյն վճարում է մէկը, միւսը, երրորդը և այլն. երբ որ բոլորը ցնծում են (վճարում են), ցնծացած փողերի գումարը ուղարկում են բազարից արաղ ու գինի բերում:

— Պետրոս, բարով թագնուպատկիդ արժանի ըլնես, գտալիք ձեռին ասում է մի երիտասարդ:

Պետրոս, բարով կանաչ կարմիրդ կապենք, ասում է մի ուրիշը:

— Սաղ ըլնէք, սաղ ըլնէք, հակիրճ պատասխանում էր Պետրոսը, որ օջախի գլխին կանգնած տաք-տաք ու կիսակի խորոված էր ուտում:

— Տօ գեաղա, խում-խում մի կեր, թող լաւ էփի է:

— Քեաբար ղանլի գետրաք, իգիթ ջանլի գետրաք (խորովածը արիւնալի պէտք է, աղամարդը փարթամ պէտք է) պատասխանում է Պետրոսը:

Սկսվում է կեր ու խումը, երգն ու պարը, երբ ընկերները մի-մի խաղ ստեցին, հերթը Պետրոսին եկաւ, բայց նա չը կամեցաւ երգել և երբ որ նորան շատ սախպեցին մի «բայաթի» էլ նա ասեց.

— Ազիզըմ, Խուդա մագաթ.

Բալըղլար սուդա մագաթ, վոլւ աման, վոլւ աման, Եւր, կալիս չրալ էլլա,

Եարն սուգադը մագաթ, հէ, հէ, հէ, ումուգըմ...

— Ձայնդ անսպառ, ձայնդ անսպառ, կանչեցին ամեն կողմից, իսկ ընկերներից մէկը քէֆի համար ասաց «Ձայնդ անգղամ» և վերջը լայտնեց, թէ ես ոչինչ չը հասկացալ քո երգից: Միւսինը



Հաստատեցին և բոլորը թէ արդարև մենք ոչինչ չը հասկացանք:

Պետրոսը վերաւորուած նրանց արած նկատուղութիւնից սկսեց բացատրել իւր երգի իմաստը, որպէս թէ մի երիտասարդ սիրահարուած լինելով մի աղջկայ վերայ, տանում է նորան և բնակեցնում մի կղզու վերայ, իսկ ինքը ամեն գիշեր ծովի մէջ ընկած լողալով գնում է իւր սիրուհու մօտ: Մի անգամ պարծենում է երիտասարդը աղջկայ մօտ, թէ ինքը որքան քաջ և սրամիտ է, որ մօլթը գիշեր կարողանում է ընկնել ծովը և գտնել կղզին: — «Այդ քո շնորհքը չէ, ասում է աղջիկը, եթէ ես ճրագ չը վառեմ, դու մթնումը երբէք չես կարողանայ կղզին գտնել, դու գէպի իմ ճրագի լոյսն ես լողում, որ գտնում ես» և պայման են կապում, որ այնուհետև առանց ճրագի գնայ երիտասարդը: Յաջորդ գիշերը, երբ մի քանի ժամ շարունակ այս ու այն կողմն է թափառում երիտասարդը և կղզին մթնումը չի գտնում, թւերի ուժն էլ սպառվում է, զղջալով իւր պարծենկոտութեան վերայ, աղաչանքով սկսում է կանչել աղջկան. «Սիրական, վեր կաց, ճրագ վառի, սիրականդ ջրի միջին է»: Աղջիկը այս ձայնը լսելով ծիծաղում է և ճրագ է վառում: Երիտասարդը ճրագի լոյսը տեսնելով, հագիւ հազ կարողանում է իրան հասցնել կղզու ամբ բոլորովին ուժասպառ:

— Կեցցէ, Պետրոսը, կեցցէ Պետրոսը, ձայն տուին ամեն կողմից և քէֆը տաքացաւ:

Այս էր պատճառը, որ Այրի վանքի ուխտաւորները յառաջ խաչերն էին գալիս, այնտեղ ուրախութիւն անող ու սպասող խումբերին իրանց ցոյց տալիս և սպա տուն վերադառնում: Բայց այս աւուր տխուր անցքը արգելք եղաւ նորանց Խաչեր գալուն, և այնտեղ եղող խումբերը երկար սպասելուց յետոյ զարմացմամբ տուն վերադարձան, և երբ տեղեկացան, որ այն օրը ծովում մարդ էր խեղդուել «վայ, Պետրոս, ասում էին, հէնց ք» գառը ուտելու օրը սիրտի էս փորձանքը պատահէր....:



ԺԶ.

# Մ Ո Ւ Ւ Ս Ի Ա Ի Է Տ Ը

Նոր-Բայազէտից դէպի Հարաւ-արեւմուտ է Քոստա—Մահմադ գիւղը մօտ մի Հարիւր չիտուն տուն Հայ ժողովրդով, որոնք ինչպէս Հայ գիւղացու յատկանիշն է, պարտապում են հողագործութեամբ և մասամբ խաշնապահութեամբ: Բայց դժբաղդաբար սոքա համարեալ առանց բացառութեան մուրհակազրով պարտապան են ընդ միշտ տեղացի հարուստ Աւետին: Մուխսի-Աւետը մօտ եօթանասուն տարեկան է և իւր ամուլ կնոջ հետ մի հասարակ կեանք է վարում:

Օրը մէկ է, բայց Աւետի տանից փող տանողը հազար, ոչ մէկից զեռ նա երես չէ դարձրել, ինչ դասակարգի և պատկանէր փող ուզողը,— խրիդ գնացող վաճառական (Նոր-Բայազէտիցի), հարսանիք անող, տուգանքի տակ ընկնող, եզ կամ սալ դը-

նող, ամենի համար առանց խտրութեան բաց է Աւետի դուռը, ամենին էլ ընդունում է, ամենի կարիքին էլ հասնում: Ել ով կարող էր նորան նեղացնել, որ բանը դատաստանի ընկնէր, մինչդեռ տոկոսի տեղ նա երբեմն խոտ, դարման, ցորեն, գորի և Աստուծոյ տուած ամեն բարիք ինչ տալիս եւ առնում է և երբէք իւր պարտապաններին չէ նեղացնում:

Փաշաքեանդ գիւղի «գարգիմանդ» Տէր-Ստեփանը մի մարդու հետ մտնում է Աւետենց տունը:

— Բարի ողջոյն, Հաջի-աղա.

— Բարի աջողում, Հաջի-աղա.

— Օրհնեալ իտէր, բարով, հազար բարի, տեղից վեր կենալով ընդունենց նորանց մ.—Աւետը և հրաւիրեց նստել և տէր-տէրի աջը համբուրելով «Օրհնեալ իտէր» ասաց.

— Աստուած օրհնի, քնչպէս էք, լաւ էք, Հաջի-աղա.

— Փառանց կենաս, տէր-տէր-ջան, պահել աքո սուրբ աղօթքը, դուք քնչպէս էք, լաւ էք, տէրտէր-ջան, խէր ըլնի ձեր գալը, աղջիկ էլ չունենք, թէ էկէլ էք աղջիկ ուզելու, ժպտալով հարցրեց Հաջի-աղան:

— Հաջի-աղա, քաւոր ենոքին մի զատ փող ա հարկաւոր, ասաց տէրտէրը մատնացոյց անելով իւր



ընկերի վերայ, էկել ենք քո մօտ և յուսով ենք, որ անտես չես տունի:

— Տէրտէր, հազը փող չը կայ, ծիծաղելով ասաց Հաջի-աղէն:

— Օրհնած, քո մօտ էլ կասեն փող չը կայ, նոյնպէս ծիծաղալով ասաց տէրտէրը:

— Եթամ ուրիշից ճարեմ, բերեմ, տամ:

— Որ ձեռ տաս կող ու կուշադ, ջէր ու ծոցըդ, էլ թնչ ասեմ էնքան փող կը հանես, որ լըցնես Սևանայ ծովը կը ցամքի:

— Ախ Տէր-Ստեփան, ինչքան գալըմ ես, միննաթ անում ես, փող տանում ես, համա վեր համար, էս ինչ ա քաւոր ա, էս ինչ ա խնամի ա, մէկ օրէն մէկ օր չէլաւ, որ ասէիր իմ համար ա, որ ես էլ հորցնի թէ «թնչ ես տնում փողը» դու էլ ասէիր «Օհանիս եմ պսակում»:

— Հաջի-աղա, քո սալից Աստուծուն թնչ ա պահաս, բայց Օհանս դեռ պստիկ ա, Քեռովառայ շկօլը կարդում ա, հալա պտի քաղաքն էլ տանեմ Ներսիսեան դպրոցը տամ կարգայ, մարդ դառնայ, բայց քաւորս Աստուծոյ աջողի, էսօր, էգուց ուղում ա աղբօրը պսակի, եօլա տար, թէ չէ կլնեմ ոտս փեթակիդ կխփեմ, դեղին մաջիթիէն ու փըշ-փըշան պօլիփրիալը կշռուայ ցածր:

— Հա, հա, հա, հա, ծիծաղաց բարի Հաջի-աղէն, տէրտէր, անիրաւ գողերը թողին որ...

— Հա, էն որ մէշոքով աբասիքը, բղողներով «նիկօլա» մանէթները խորել ես օթաղիդ պօլի տակ, քանդեմ, հանեմ:

— Տօ դէ, ողորմած հէր, ես խօ թագաւորի խազինա չեմ կտրում, էդ ինչ դու ասեցիր, ըսկի ըլնելու բան ա:

— Իէ լաւ, լաւ, քաւորիս եօլա տար, քաւոր Ենօքն ափսոս ա:

— Հաջի-աղա, մենք էլ քո լաւութիւնը չենք մոռանայ, ասաց Ենօքը, որ մինչև հիմա լուռ նստած ականջ էր դնում տէրտէրի ու հաջու հանաքներին, շահը շահ ա, միննաթն էլ միննաթ. կը խնդրենք մեր տէրտէրի խաթրին մեզի եօլա տանես, հարսանիքի վրայ ենք:

— Ծառ լաւ, ասաց Հաջի-աղէն, համա էս վախտ թնչ հարսանիքի վախտ ա, ընչէք վըրազնում:

— Բանն ուրիշ ա, ասաց տէրտէրը:

— Ի՞նչ բան կայ:

— Յետոյ ես քեզի կասեմ:

— Չէ, հիմի ասա:

— Տէր-Հայր, դսէն արա, թող Հաջի-աղէն էլ իմանայ, թնչ ամօթ, ասաց Ենօքը:

— Հաջի-աղա, ձայնը ցածացնելով ասաց տէրտէրը, մի տղայ կայ, ուղում ա քաւորիս հարսնացուն փախցնի:



— Ի՞նչ տղա ա.

— Քեա՛վառցի մի տղա ա.

— Նշանլու աղջիկը ընչի՞ ա ուզում փախցնի, զարմանալով ասաց Հաջի-աղէն.

— Ասում են, սաքի պստիկ վախտուց իրար վրայ աչք են ունեցել.

— Բա դուք ընչի՞ նշան գրիք.

— Մենք քնչ ենք գիտում էդ բանը, ասաց Ենօքը.

— Աղջկայ Հերնումէրը ընչի՞ տուին.

— Աղջկան Հերումէր չը կայ, եթի՛մ ա, իր հօր աղբօր կնիկն ա տուել.

— Են ընչի՞ ա տուել.

— Են էլ էդ բանից խաբար չէ էլել.

— Ա՛խ, էդ մեր Հայ-քրիստոնի մէ կանոնը, ասաց Հաջի-աղէն, որ բանը միտք չենք անի յառաջուց, յետոյ կը փոշմանենք. թուրքն ասել ա. «Հայի յետի խելքն իմն ըլնէր» բօլ էր.

— Դէ, էլա՛ծ բան ա, ասաց տէրտէրը, էլ հօ յետ չեն դառնայ, աշխարհի մէջ խայտառակ ըլնի, պէտք է պսակեն, հօտը կտրեն, էթայ.

— Յետոյ են աղջիկը քնչ հարսնութիւն պտի անի քո տան մէջ. ասաց Ենօքին Հաջի-աղէն.

— Պսակուեց թէ չէ, երկու աղբէր կը բաժանուեն, հօ իրար մօտ չեն մնայ, վրայ բերեց տէրտէրը:

— Հա, Հաջի աղա, հաստատելով տէրտէրի խօսքը ասաց Ենօքը, իմ միտքը էնա, որ աղբօրս պսակեմ, իր կնիկը, իր բաժի՛նքը տամ իրան, էթայ իր գլուխը պահի.

— Եդ ձեր բանն ա, դուք գիտէք, համա իմ փողը, տէրտէր, ես քեզանից կառնեմ.

— Լա՛ւ, Հաջի-աղա, թղթի մէջ ինձ զամին կը գրեմ.

— Ի՞նչքան փող ա հարկաւոր.

— Վաթսուն մանէթ, ասաց Ենօքը.

— Ի՞նչքան ժամանակի.

— Մի տարի գրենք, էլի՛.

— Տէր-Հալը, ասաց Հաջի-աղէն, կը գրես վաթսուն մանէթ, տասին երկու շահ, մի տարի ժամանակի. տակն էլ քո ձեռը կը դնես, թէ որ նա չը տուեց, ես տամ.

Ինչպէս տեսանք, Ենօքը պարտքով փող վեր առաւ, որ իւր եղբայր Պետրոսի հարսանիքն անի, քանի որ իւր հարսնացուն չեն փախցրել: Ի՞նչպէս էին իմացել, թէ մի այդպիսի բան կայ.

Մեզ յայտնի է, որ Մարգարիտի և Շողոյի գեղերային խօսակցութիւնից յետոյ՝ վերջինս մտաւանջութեան մէջ ընկաւ և վերջը կարծիք յղացաւ մի գուցէ, Սմբատը խօսք է տուել Մարգարիտին փախցնելու, և նորանից յետոյ մի օր, երբ տեսել



էր Մարգարիտի ու Քէվանի Մաքոյի ծածուկ իրար հետ խօսելը, իւր կարծիքը հաստատել էր և շուտով իմացում էր տուել Ննօքին, ստիպելով նորան, որ ինչպէս էլ լինի ձեռաց վրայ հարսանիքըն անեն, վերջացնեն, քանի որ բանը ուրիշ ընթացք չի ունեցել:

ԺԷ.

## ՄՈՄՉՈՒ ԱՍԼԻԿԸ

Քերզի թաղում, Մարգարիտենց տանից մի փոքր հեռու դէպի հիւսիս՝ է Մոմչոնց տունը: Անտանիքի մեծ մայրը—Ասլիկը, որի անունը հըռչակ է ստացել իւր երիտասարդութեան օրերից, երազի մէջ Ս. Կարապետից իրաւունք է ստացել, որ ինչ հիւանդի վերայ երեք անգամ մոմ թափի, հիւանդը կառողջանայ: Մոմ թափելու օրերը որոշուած են, այն է երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ երեկոները մոմ-թափի օջաղը միշտ վառնէ, որ հիւանդների յաճախելու օրերն են: Ամեն կիւրակնամուտ երեկոյեան տեսնում ես, տեղացի և շրջակայ գիւղերի հիւանդներ, ոմանք սալով և ոմանք շալակով փաթաթուած դիմում են դէպի նուի-



րակա՞ն օջաղը բժշկութիւն դանելու: Ասլիկը երկաթի ակշաթաթը կրակի վերայ կարմրացնում է, յետոյ կոշտ մեղրամոմի մի կտոր կպցնում հրաշէկ երկաթին, մօմը հալելով կաթիլ-կաթիլ թափվում է ամանով ջրի մէջ, որ դրած է հիւանդի կրծքին: Ասլիկը այդ միջոցին ստէպ-ստէպ յորանչելով աղօթում է. «Ով օխտը անուան տէր Սըպկարապետ, ով Հազարանփրկիչ, ով սրբոց գլօխ սուրբ Աստուածածին, դու քո ստեղծած հոգին չը կորցնես, ով Արաբ սըփնիշան, Կարալագեազու սուրբ Խաչ, Բաղշու Կարմրակ, Փուտկու սուրբ Գեօրգ դու հասնես, ով ազատարար սրբեր, դուք հասնէք, դուք ազատէք ցաւից, չօւից, չար աչքից, չար լեզուից, զադից, զադաբալից, իլլաքի (մանաւանդ) անզգամի նհախ շառից (զրպարտութիւնից) ազատէք ամեն Հայ-քրիստոնէն: Ով աղա Սուլթան Սըպկարապետ, քո ձեռն ա, իմ ձեռը չէ, դու պտի էս ցաւին փախտութիւն տաս: Հալմե երկինք, սուրբ եղիցի, անուն քո եկիցի, արքաւութիւն քո եղիցի, հաց մեզանապաղ տուր մեր այսօր և թողումերոց պարտապանաց, եմի, տանի, մեզի, փորձութիւն, այլ փրկեա՞ իչարէ, զի քո է արքաւութիւն և զօրութիւն փառք յաւիտեանս յաւիտենից ամէն»:

Այս ջերմեռանդ աղօթքից յետոյ, երբ մօմը ջրի երեսին սառչում է, նա բարձրացնում է և շուռ է տալիս մօմի միւս կողմը ցոյց տալով հան-

դիսականներին մօմի վերայ նկարուած զանազան գեծերը:

— Հիւանդը գալլից է վախեցել, ասում է հրաշագործը, կամ թէ աչքով են տուել հիւանդին և կամ թէ մի ոտը շեման մի կողմը, մէկէլը միւս կողմը դրած ջուր է խմել, Յիսոս Քրիստոս, չարքերը զարկել են գլխին, չարոցի ա հանդիպել, Աստծով էրկու անգամ էլ մօմ թափեցի, ումուդ ունիմ աղա-Սուլթանից, որ կը լաւանայ:

— Մօրքուր, խէր ընի մեր մահլէն, էդ թնչ քեամար ա, Մարգարիտ, կորի տոնը, ամօթ չէ նշանլու աղջկան քուչի մէջ կայնել ու ղսա անել, հաղար մարդ ա ընցնում, դառնում, տեսնողն թնչ կասի:

Այս բառեր ասողը Շողոն էր, որ վրայ պատահելով պատի տակին կուչ էկած Մարգարիտին ու Քէվանի Մաքուլին տեսաւ նրանց իրար հետ խօսելը: Մաքոն Սմբատի վերջին խօսքերը Մարգարիտի հաղորդելու համար, որպէս զի ոչ ոք ուրիշ կարծիք չը տանէ, վեր էր առել իւր որդու արծաթի գօտին և Մոմչոնց տուն գնալու պատրուակաւ եկել էր Մարգարիտի մօտ:

— Ադիբէգիս քեամարն ա, Շողոյ-ջան, ասաց Մաքոն, էսօր էրկու օր ա, տղէն բէքէֆ ա, տանեմ Մոմչու Ասլիկը աղօթալ, տանեմ կապեմ տղիս



մէջքը: Մարգարիտը ինձ տեսաւ, եկաւ ձեռս պա-  
չեց, ես էլ ասում եմ, «Մարգարիտ-ջան, ջհէզդ  
էդենց շուտ հազրեցիր, որ հարսանիքդ անում են»,  
նա էլ գլխով էր անում, ձեռով էր անում, զատ չը  
հասկացայ, դու եկար, թողեց գնաց:

— Քա մօրքուր, ինչ ջհէզ, ինչ բան, խնա-  
մոնք էդենց թաւաքեալի (յանկարծ) կայնել են,  
թէ կտանենք:

— Դէ թօ տանեն, պրծնեն, մնայ՝ ինչ, լաւ չէ:

— Տանելը թօ տանեն, իշտա մէփշու մարդի  
ամօթանք ա թէ չէ, մարդ որ իր քէփով ջհէզը  
մէկ-մէկ, ջոկու-ջոկու թաքմիլ չանի, որ խօսք էլ  
ընի, մարդ պարծէնայ, էրես ա տեղ ունենայ:

— Քա ախչի, ղորդ ընչէն էդենց շուտ տա-  
նում:

— Հա-Հա-Հա-Հա, օրօրուելով ասաց Շողոն,  
մկա դու խաբար չես, Հա:

— Էն աղա-Մուղնի, չէ, խաբար չեմ:

— Շողոյ, Աղիբէգիս ազիզ արւր:

— Քա էս մեր գլխին օրը մէ ղալմաղալ սար-  
քողը դու չես, որն ա բա, բարձրաձայնեց կէս  
բարկացած Շողոն:

— Ախչի, դու ծռել ես, ինչ ա, էս դոր,  
դուք դոր, եա թէ չէ իմ ինչ ցաւն ա, իրանց բա-  
նը ծռուն ա էթում, խալխի եախէն (օձիք) են  
բռնում:

— Քա դէ գնա է. մեղայ Աստծու հա....:

— Հա-Հա-Հա-Հա, ինքը տես, իր խնամին  
տես, իլլաք չէ, իրանց թառու-թամուղ փեսէն,  
վոլ, րստոնցից զատը մնալն ա խէր քա, սոխ չես  
կերել, ընչի ա սիրտդ մամուում....:



ԺԸ.

## ԱՆՅԱԶՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Երեկոյեանում էր օրը: Բազարի մարդիկ հետըզհետէ քաշվում էին և մի երկու ժամից յետոյ փողոցներից մարդի ոտը կտրուեց. իրիկուայ մըթուլեան հետ էլ լուսթիւնը տիրեց:

Աստուածածին եկեղեցուց դէպի արևելք մի փողոցի մէջ պատի տակ կանգնած երկու ինչ որ մարդիկ ձեռ ու ոտ շարժելով իրար հետ խօսում էին հազիւ լսելի ձայնով, որը քամու հոսանքով ցնդվում էր օդի մէջ. նրանցից մէկը մի քսան—քսանուհինգ տարեկան երիտասարդ էր, որը քանի խօսակցութիւնը շարունակվում էր, դէմքի ուրախութեան նշաններն էլ աւելանում էին: Իսկ միւսը մի պառաւ կին: Տեսնենք ինչ են խօսում:

— Աստուածդ կսիրես, մօրքուր, ուղիղն ասա, էդ խօսքերը նա իւր բերանով ասել ա, որ

գաս ինձ ասես, անհամբերութիւնից ձեռները տրորելով ասում էր երիտասարդը:

— Քա տղայ, էդա դիմաւոր կառուցեալը վրկալ, ցոյց տալով եկեղեցին, ասաց պառաւը:

— Մօրքուր, դա էնպէս մի բան ա, որ քո երգումները ինձ չեն կարող հաւատացնել, դա էնպէս մի բան ա, ոնց որ սուրբ Սարգսի պասին մեր ղաթարղայից վարդ քաղես:

— Քա ճար կտրածի տղայ, խօ ես քեզի չեմ խաբում եմ, կուզես աչքովդ տես, բանն էնենց սարքեմ, որ իրար հետ բերան-բերան խօսաք, նոր հաւատաս, լաւ ա.

— Սիրտս ուրախութիւնից պատռվում ա, տես, մօրքուր, մատը թափ տալով ասաց երիտասարդը, ես մի փորձ կանեմ, թէ ուղիղ դուրս եկաւ այն ժամանակ կը հաւատամ:

— Այ որդի, ես քեզի սո՛ւտ կասեմ, ինչ որ ուզում ես արա՛, համա էն վախտը իմ աչքալուսանքը էժան չի նստի վրէդ հա՛:

— Թէ որ ուղիղ դուրս եկաւ, ահա եկեղեցու առաջն եմ ասում, ինչ որ լեզուդ կը պտտի տամ:

— Դէ լաւ, հիմի ի՞նչ ես ուզում ես անես:

— Կըզնաս նրան կասես, վաղը ես աղբրի ճանապարհին իրան կսպասեմ, երբ որ պատահեցինք միմեանց, ես ձեռս ինչ տեսակ որ կը շարժեմ, թող ինքն էլ իմ արածի պէս անի: Թէ ղորդ



դուրս եկաւ, էնպէս արեց, քո խալաթը էս իմ ջուխտ աչքի վերայ: Վերջին խօսքից լետոյ երկուսըն էլ փողոցից հեռացան, մթնումը էլ չերեւացին:

— Ո՞վքեր էին սոքա:

Մարգարիտը իւր ապագայի համար երկար ծըրագիրներ կազմելուց ու քանդելուց լետոյ վճռեց, որ Սմբատի հետ փախչի, բայց դժբաղդաբար չորս ամիս անցնելուց լետոյ հազիւ յաջողուեց նորան մէն-մէնակ ընկնել Քէվանի Մաքոյի հետ, որի միջոցով իւր միտքը հաղորդեց Սմբատին, մինչդեռ վերջինս դեգերանքով մնացել էր: Ինչպէս տեսանք ներկայ գլխում Սմբատը չէր հաւատում այդպիսի մի անակնկալ առաջարկութեան, թէ Մարգարիտը կամենում է իւր հետ փախչել:

Հիմա պարզուեց, թէ Մտքոն արծաթի դօտին բռնած ինչ էր հաղորդում Մարգարիտին: Նա պատուիրում էր նորան, որ իրիկուան աղբիւրը ջրի գնալուն Սմբատին պատահելիս կատարի այն նշանացի շարժումաձքը, ինչպէս Սմբատը կանի:

Հասաւ ցանկալի ժամը, երբ Սմբատն ու մի տղայ Սարնգիւլունց պատի տակին կանգնած խօսում էին: Սմբատը սորան բերել էր այստեղ, որ իւր փողոցի մէջ կանգնելուն համար ոչ ոք մի որեւէ կարծիք չանէր:

Մարգարիտը կուժն ուսին վերադառնում էր

աղբիւրից, և երբ պատահեցաւ Սմբատին, վերջինս ձախ ձեռը տարաւ և իւր աջ ականջը բռնեց: Խեղճ աղջիկը իւր ձեռքն էլ բարձրացրեց և ուղում էր հետեւել Սմբատի նշանացի արարքին, երբ յանկարծ աչքերը պատահեցան Սմբատի աչքերին, մի սառսուռ զգաց իւր մէջ, շփոթուելուց ոտների ընթացքը խառնուեցաւ, շտապում էր անցնել, կուժը դիպաւ դիմացի պատին ու շրճփ... կոտրուեցաւ, ինքը թրջուեց, շշկուեց ու չէր իմանում ինչ անի և ամօթից փախս առաւ դէպի տուն:

Սմբատը այս անյաջողութիւնը տեսնելով ընկերի հետ հեռացաւ, լետոյ նորանից բաժանուելով բարձրացաւ դէպի կալերը: Կամաց-կամաց մըթնանում էր օրը, դեռ նա թափառում էր: Երբեմն երեւակայում էր, որ ինքը կը հասնի իւր նպատակին, քանի որ Մարգարիտի սիրտը իւր հետ է: Կ'ամուսնանայ, կը հարստանայ, լաւ տներ ու սիրուն երեխէք կունենայ, երեւելի մարդ կը դառնայ, բոլորն էլ իրան կը գովեն, ու կը զարմանան, թէ ինչպէս յանկարծ բաղդաւորուեցաւ: Իսկ երբեմն մտածում էր, որ դա գլուխ գալու բան չէ, այդ բաղդը իրանից շատ հեռու է, ինչպէս կարելի է մի նշանադրուած աղջիկ Պետրոսի պէս գազանի ճանկերից խլել, որ կլանելու մօտ է, ինչպէս այն հրաշագեղ արարածը, որի միակ փրկութիւնը իրանից էր կախուած մահու որկորից դուրս կոր-



գել...: Բայց սէրը ինձ կատաղի առիւծ է՝ դարձնում, ասում էր նա, ես կը խորտակեմ այդ անեւանելի վհի դռները՝ ջարդուփշուր կանեմ նորա երկաթի շղթաները... Բայց զսպեմ ինձ, պէտք է խոհեմութեամբ գործը յառաջ տանել, մի գուցէ յօնքը ուղղելու տեղ աչքն էլ հանեմ...: Ամեն տեղ նախապաշարմունք, ամեն տեղ՝ տգիտութիւն տիրել է ամենիս: Լոյսը բացակայ է, կամքը սպառնում է, կեանքը կաշկանդուած է, զարգացման հոտ չը կայ բոլորովին...: Ամբոխի մէջ մէկը սիրեց, խայտառակութիւն է, միւսը ատեց՝ բամբասանք է:

Գիշերը արդէն բաւական անցել էր, երբ Սմբատը տուն գնաց: Տանը ճրագ չկար, բոլորը քրնած էին, ինքն էլ առանց շորերը հանելու վեր ընկաւ մի կողմ ու քնեց: Մի երկու ժամից յետոյ Սմբատի պառաւ մայրը, որը որդու ուշանալու պատճառով երկար անհանգիստ մնալով քնել էր, վեր կացաւ, որ իմանայ, թէ Սմբատը եկել է, ճրագ վառեց, «վայ, մէրդ մեռնի, որդի, ասեց, էկել ա, բաց պարկել ա պտի մրսի հիւանդանայ: «Սմբատ, Սմբատ», ձայն տուեց Սմբատի գլուխը բարձրացնելով, «վեր կաց, վեր կաց, շորերդ հան, մտի տեղդ»:

Սմբատը գոռածի պէս միանգամից վեր թրուաւ. կանգնեց, բարկացաւ մօր վերայ, թէ ինչո՞ւ

իրան զարթնացրեց և ինքն իրան նեղացած շորերը հանեց ու անկողին մտաւ:

Ինչո՞ւ արդեօք նեղացաւ Սմբատը մայրական գուրգուրանք ընդունելիս: Որովհոտեւ երազի մէջ էր, նորան թուում էր, որպէս թէ ինքը կանգնած է դարձեալ Սարնգիւլոնց պատի տակ՝ աղբիւրի կողմից գալիս է Մարգարիտը, ինքը ձեռը տարաւ դէպի գլուխը, Մարգարիտն էլ այն ինչ ժպտալով ձեռը բարձրացնում էր, մօր ձայնը ընդհատեց երազը...:

Առաւօտը Սմբատը վեր կացաւ, բայց շատ տըխուր էր, նորա քէֆը, ինչպէս ասում են, տեղը չէր, մի ինչ որ տկարութիւն էր զգում իւր մէջ: Դուրս գնաց ման գալու, որ սիրտը բացուի, բայց դեռ ճաշ չեղած տնքտնքալով տուն եկաւ և մահճակալի վերայ յենուելով մտածում էր:



ԺԹ.

## ԱՂԵՆՅ ՏՈՒՆԸ

Հին-Բայազէտում ապրում էր հարուստ և նը-  
շանտուր մի մարդ, դա էր Յակոբ-աղա Արծրունին,  
որը երբեմն Պարսկական բռնակալութեան երեսից  
նիւթականապէս նպաստում էր Ս. Էջմիածնին,  
ինչպէս ժամանակակից կաթողիկոսների կոնդակ-  
ներն են վկայում: 1827—30 թուականների պա-  
տերազմով, երբ Արարատեան գաւառը պարսիկնե-  
րից անցաւ Ռուսաց ձեռքը, Հայոց ազգի մէջ ի  
հնուց սովորութիւն դարձած գաղթականութիւնը  
դարձեալ զարթնեց: Յակոբի որդի Մկրտիչ-Աղէն  
թողեց տաճկահայտակ Բայազէտը և երեք հա-  
րիւր ընտանիքով գաղթեց դէպի Գեղամայ ծովը:  
Թէև կառավարութիւնը նշանաւոր գաղթականնե-  
րին վերաբնակելու համար նշանակել էր Թիֆլիսի

հիմնադիրը լաւ համարեց Սևանայ ծովակի ափե-  
րում ապրել: Այն ժամանակ Հին-Բեալառը պարս-  
կական մի փոքրիկ գիւղ էր: Պարսիկները շուտով  
հեռացան, և գաղթականների երեք հարիւր տու-  
նը յիսուն տարուայ ընթացքում մօտ մի հազար  
տուն դարձաւ աւելի քան ութը հազար բնակիչ-  
ներով:

Մկրտչի փոքր եղբայրը—Մարգար-աղէն 1850-  
ական թուականների Ռուս-Տաճկական պատերազ-  
մից յետոյ նշանակուեցաւ Կարսի ոստիկանապետ  
մինչև քաղաքի կրկին Տաճկաց վերայանձնելը: Ա-  
ղէնը տունը այժմ ևս նշանաւոր է իւր պատմական  
յիշատակներով:

Մկրտչի միջնակ եղբայրը—Բարսեղ-աղէն ա-  
մենից մեծ ժողովրդականութիւն ստացող և համ-  
բաւով հռչակուած մարդն էր: Բարերար հայր էր  
անխտիր ամենին, թէպէտ և իրանից ծնած որդի  
չունէր: Սա առաջին անգամ 1855 թուին տեղույս  
Հոգևոր՝ տղայոց, իսկ 1870 թուին օրիորդաց դըպ-  
րոցները հիմնեց և եկեղեցիքը նորոգեց: Ներսէս  
Ե-րդ երջանկայիշատակ Կաթողիկոսի սիրելին և  
այն ժամանակուայ Նոր-Բայազէտի Հոգևոր գործոց  
վերատեսուչն էր, ուստի և սորա ձեռքով էին քա-  
հանայք ընտրվում, ուսուցիչներ հրաւիրվում և  
դպրոց աւարտող աշակերտներ մի կտոր հացի տէր  
դառնում: Հասարակութեան ամեն մի ժողով սորա



նախագահութեամբ և խորհրդով էր առաջնորդվում: Աւելորդ է ասել, որ Աղենց տան մեծ թունիրում Աստուծոյ իրան օրը հաց էր թխվում և կերակուրներ եփվում և օրական քանի քանի օտարականներ, թշուառներ, աղքատներ, հոգևորական հիւրեր ևայլն կերակրվում էին առատ օջախից:

Հարկաւոր է յիշել այստեղ և Թագուհի բարեպաշտ Խաթունին—Բարսեղ-աղի կնոջը, ձեռքի նարեկով և աչքի արտասուքով գիշեր ցերեկ անմըռունչ աղօթողին:

— Բայի, գիշերը երազիս Թագուհի Խաթունին եմ տեսել, եկել էր ինձ ասում էր, թէ քո մուրազը կը կտտարուի, ասում է մի կին:

— Հա, Մայրամ Աստուածածինն ա էլել, երազի մէջ նա միշտ Թագուհի Խաթունի կերպարանքով ա երևում մեզ. բացատրում է մի ուրիշ կին:

Մի կիւրակնամուտ երեկոյ, երբ եկեղեցուց տուն էր վերադառնում իրա հետ տուն բերեց և Սմբատին, որի ականջներն աղլուխով կապած էին:

— Տիրացու, որդի թնչպէս ես,

— Նոր մի փոքր լաւացել եմ, Խաթուն.

— Էն աղջկան դտար.

— Ո՛չ, Խաթուն, չը գտայ.

— Խաբար չառար.

— Շատ ման եկայ, շատ հարցրի, բայց չը գտայ.

— Տիրացու, ես քեզ համար շատ եմ ցաւում: Ա՛խ, դու ինձ եկեղեցումը շատ անգամ ես լացարել քո անուշ ձայնովդ: Քո անցքի մասին մի օր ես աղին ասել էի, խնդրել էի, որ քեզ մի լաւութեան հասցնի: Նա ինձ ասաց, «եթէ ես շուտ իմանայի եդ բանը, էն աղջկան, պսակ գնալու օրն էլ, որ լինէր, կը դարձնէի, կը տայի տիրացուին»:

Յեպոյ ասեց ինձ, «Ի՞նչ մի լաւ աղջիկ ճարի, ես նորան քահանայ ձեռնադրել կը տամ»: Ասեց. «ափսոս ա, էն տղէն դեգերուած մնայ»:

— Կո՛ւզես քահանայ դառնալ.

— Կարելի է թէ ուզէի, եթէ այս փորձանքը իմ գլուխս չը գար.

— Ես գիտեմ, որ այդ դժուար է, բայց թնչ արած, արի՛ քեզ պսակենք, տէրտէր անենք, զնա ու վայելի քո կարգը. թնչ կասես.

Սմբատը չը պատասխանեց այս հարցին, այլ գլուխը կախեց և գետնին նայելով մտածում էր: Խաթունը այս տեսնելով ինքն էլ ընկաւ մտածման մէջ, «եթէ Սմբատը թողի աշխարհի անցաւոր վայելչութիւնը և վարդապետ դառնայ, աւելի լաւ է և վերջը աւելացրեց՝

— Ի՞նչ գիտես որդի, որը բարի է, Աստուած էն յաջողի:



Ի.

## Հ Ր Ա Ժ Ե Ծ Տ

Այն օրից, ինչ Մարգարիտը անյայտացաւ, Սմբատի սրտի սիւնն էլ կոտրուեցաւ: Նա Հիւանդութիւնից թէպէտեւ վեր կացաւ, սակայն բոլորովին չ'առողջացաւ և կիսառողջ դրութեան մէջ Մարգարիտի մասին մի լուր առնելու համար գիշեր և ցերեկ այնքան այս ու այն կողմը ձի նըստած մտն եկաւ, որ ցաւը ընկաւ ջանք, էլ դուրս չեկաւ: Նորա հռչակուած ձայնը իւր քաղցրութիւնը կորցրել էր, երեսի գոյնը դեղնել, մեռելի կերպարանք էր ստացել և կեանքից զգուած մի կմախք էր դարձել, ցանկանում էր մեռնել ու չէր մեռնում...

«Եթէ, ասում էր նա, Մարգարիտը կենդանիների աշխարհն է փոխուել, կը մեռնեմ, գոնէ, կը հասնեմ նորան, բայց եթէ դեռ աշխարհի երեսին,

գուցէ, օտարութեան մէջ, հազար նեղութիւններով բեռնաւորուած տնքում է կեանքի մէջ, երկինք ու երկիր մէկ կանեմ, և ինչպէս որ լինի, ինձ նորան կը հասցնեմ, նորան կազատեմ, կամ նորա նեղութեանը բաժանորդ կ'լնեմ. Երկինք ու երկիր... Ինձ տուէք իմ Մարգարիտը, հիմա մեր մէջ չար մարդիկ չունենք, չարը չարով կորսուեցաւ... Ո՛ւր ես, Մարգարիտ, ձայն տուր երկնքից ու գետնից, խղճա ինձ վերայ. զրկուած եմ տուն ու տեղից, զրկուած եմ քաղցր առողջութիւնից, զրկուած եմ կեանքից ու ուրախութիւնից, մնացել եմ մի հիւանդոտ կմախք... Ո՛ւր ես Մարգարիտ-ջան, ձայն տուր, որ իմ մնացած չոր ոսկորները, գոնէ, քեզ մատաղ բերեմ...»

Այս էր Սմբատի ամենօրեայ սուգը, որից օրէցօր տանջուելով մաշվում էր և մի օր շատ այսպէս ողբալուց յետոյ նստած տեղը քնել էր, նորան թուում էր, որ Մարգարիտը լուսեղէն շրթեր հագած Սեան կղզու մի դմբէթի վերայ կանգնած, երկու վառած մոմեր ձեռքին, ուրախ ժպիտը երեսին, կանչում էր. «Սմբատ, արի, արի, ես այստեղ եմ... ես փախել եմ այդ աշխարհից, որ միայն դառնութիւն է... այստեղ, այս սրբափայլը մաքուր հրեշտակների բնակարան է... արի, Սմբատ, այդտեղ լաւ չէ...: Այստեղ էլ արեւը ծագում է, ծառը ծաղկում է... այստեղ էլ կարմրում են ծաղիկ-



ները, փթթում է վարդը, բայց սոխակ չը կալ...  
 Թող ալդ դառը աշխարհը, որ մարդու միայն հա-  
 լածել գիտէ, արի այստեղ, միասին ապրենք և մեր  
 խաղաղութիւնը ոչ ոք չի վրդովիլ... ձեռքիս մո-  
 մերից մէկը իմն է, իսկ միւսը քոնը...»:

Մինչդեռ Սմբատը երազի մէջ էր, «Սմբատ,  
 Սմբատ», ձայն տուին, և նա խելագարուածի նման  
 քնած տեղից վեր թռաւ, կոնգնեց, տեսաւ, իւր  
 մօտ Աւետիսն: Վերջինս Սմբատին շատ որոնե-  
 լուց յետոյ, գտել էր նորան կալերի վերեւը  
 մի չոր քարի տակ վեր ընկած, որ քնի մէջ  
 արտասուքը աչքերից ջրի պէս գնում էր:

— Սմբատ, ընչէս լալում, տղամարդ չէս,  
 կէս լացի, կէս բարկացածի ձայնով յանդիմանում  
 էր Աւետիսը, թնչ էլաւ քեզ, տնաջէն, աշխարհ էլ  
 քեզ պէս մարդ չէր եկել, չէր գնացել:

— Ա՛յ քանդուի քո աշխարհը, հեծկլտալով  
 ասաց Սմբատը.

— Ջանըմ, բօլ ա, ինչ էլաւ, էլաւ, էլ նոր  
 թնչ բանի վրայ ես լալակ(թնած), ասաց Աւետիսը:

— Աւետիս, քեզ պէտք է մի բան ասեմ:

— Ասա:

— Ես պէտք է գնամ:

— Ո՛ւր:

— Մարգարիտի մօտ:

— Ա՛լլա հա՛, բերանը չփացնելով ասաց Աւե-

տիսը, ջանըմ, էդ տղջկայ անունը մօռացի, էլի՛:

— Ես քեզ ասում եմ, որ պէտք է գնամ Մար-  
 գարիտի մօտ:

— Ջանըմ, ձեռը վեկալ, ախար Մարգարիտը  
 հրտեղ ա, որ դու գնաս:

— Մարգարիտը Սեան ա, Սեան:

— Ո՞նց թէ Սեան, այսքան ժամանակ Սեա-  
 նում թնչ ա անում:

— Այնտեղ խաղաղ ապրում ա:

— Տէր Աստուած, հա՛:

— Ուղիղ եմ ասում, Աւետիս:

— Լաւ, լաւ, արի գնանք տուն, քեզ քամի  
 ա դիպել:

— Քամի չի դիպել, Աւետիս, նոր երազին  
 տեսայ:

— Երազին թնչ տեսար:

— Տեսայ, որ Մարգարիտը լուսեղէն շորեր  
 հագած, վառած մոմերը ձեռքին, ինձ ասում էր,  
 ես այստեղ Սեանումն եմ, արի ինձ մօտ:

— Հա՛, վայ ափսոս, ասաց Աւետիսը, ուրեմն  
 մեռել է, խեղճ աղջիկ, վայի՛:

— Աւետիս թնչ ես ասում, իմ տեսած կեն-  
 դանի Մարգարտին թնչպէս ես մեռած ասում, լա-  
 լով ասում էր Սմբատը:

— Արի, արի գնանք տուն, շատ անգամ դու



ես ինձ ասել, թէ երազին մի հաւատաք: Նոքա տուն զնացին:

Այնուհետեւ Սմբատը մտածում է Սեան զնալ, զգալով իւր վախճանի օրէցօր մօտենալը: Նորանց տունը Կարապետ ափօր մահից յետոյ բաժանուել էր, ինքը և իւր մայրը առանձին էին կենում, մինչև որ նորան էլ գերեզման դրեց, մնացել էր մենակ, անգործ, աննպատակ թափառելով: Ահա այս դրութեան մէջ էր Սմբատը, երբ, ընթերցող, մենք առաջին անգամ պատահեցանք նորան, գըրքիս սկզբում, երբ գիշերը անկողնում պարկած, երկար ինքն իրան խօսելուց յետոյ իւր համար «Տապանագիր» կազմեց և այդ վճռին հետեւելով յայտնեց Աւետսին իւր վերջնական նպատակը: Երկար ժամանակ Աւետիսը չէր յօժարում այդ ձեռնարկութեանը, բայց վերջը ցաւելով Սմբատի աննախանձ դրութեան վերայ և միանգամայն լանձնելով Աստուծոյ կամացը, Սմբատին կամք տուեց Սեան զնալու:

Մի օր Սմբատը ոտները չշտեր հագած և ձեռքը մի փայտ առած, մէջքին էլ աղլուխով երկու հաց ու մի կտոր պանիր կապած, որը Աւետսենց տանիցն էր վեր առել, Աւետսի հետ միասին անխօս, տրտում, տխուր բարձրանում էին կալերի դարը Սեան տանող ճանապարհի վերայ: Աւետսի մայրը դուրս եկաւ դուռը և Սմբատի յետևից մի

թասով ջուր թափեց, որ շուտ վերադառնայ: Երբ նոքա հասան դարի գլուխը միմեանց հրաժարական տալիս վերջին անգամ փաթաթուեցան իրար: Սմբատի աչքերում վաղուց ժողովուած արտասուքը խոշոր կաթիլներով թափուեց Աւետսի թշերի վերայ, երբ որ նոքա համբուրվում էին:

— Աւետիս-ջան, հոգիս, ասաց Սմբատը, սիրտըս ինձ ասում է. «Աւետսին պինտ գրկիր, էլ չես տեսնելու նորան»:

— Ես շուտ-շուտ քեզ մօտ կը գամ, նոյնպէս էլայ լինելով ասաց Աւետիսը:

Սմբատը կրկին և կրկին խօսք առաւ Աւետսից, որ շուտ-շուտ այցելէ իրան, և նորանից բաժանուելով ճանապարհ ընկաւ:

Երկու երեք վերստ ճանապարհ կտրելուց յետոյ ողբագին ձայնով սկսեց դուրս թափել իւր սրտի ցաւը:

«Արտասուքն աչքիս դուռդ եմ գալիս, ո՞վ ծովապատ սուրբ Սեան,

«Քեզ պատարագ բերեմ հոգւոյս սէրն ըղձակաթ՝ սուրբ Սեան,

«Զոքեմ դուռնդ կարօտ շրթամբ համբուրեմ սուրբ քարերդ,

«Պատճառ, խոցուած սիրտս արիւն է, ցաւն անփարատ՝ սուրբ Սեան:



« Սիւնիք նստած ջուր ես տալիս դրախտագէտ  
Սրաքսին,  
« Դու հասնում ես քեզ յուսացող ամեն մարդի  
մուրազին,  
« Ի՞նչ մեկնութեամբ պիտի բանաս գաղտնիքը  
իմ երազին,  
« Գտնեմ կորած Մարգարիտս, ո՞վ անարատ սուրբ  
Սեան:

« Սէրը ջանիս կրակ դարձաւ, Մարգարիտն ա  
գմբէթին,  
« Ո՞վ սուրբ Նշան, դու ճար անես քո ջրատար  
Սմբատին.  
« Ինձ հասցնես իմ կենդանի, թէկուզ մեռած  
Մարգարտին,  
« Հոգիս Աստծուն բաժին մնայ, շատ է ինձ բաղդ,  
սուրբ Սեան:»

Երեկոյեան պահուն մի անծանօթ երիտասարդ  
մտաւ Սեանայ վանքի վանահօր խուցը: Ծերունի,  
բայց ամուր կազմուածքով վանահայրը, որի ման-  
կութեան ժպիտը դեռ փայլում էր շրթունքների  
վերայ՝ նստած էր և ակնոցն աչքերին կարդում  
էր: Նորա հանդէպ գրասեղանի առաջ կանգնած  
էր մի ջահիլ աբեղայ: Անծանօթը մօտեցաւ վա-  
նահօր աջը համբուրեց և ասաց՝

— Աստուած օգնական.  
— Աստուած պահապան, ա՛ տղայ, ի՞նչ տեղացի  
ես, հարցրեց վանահայրը.  
— Նոր-Բայազէտցի, պատասխանեց նորեկը.  
— Հը՛, հի՞նչ կայ, հի՞նչ չը կայ, վրայ-վրայ  
հարցրեց վանահայրը:  
— Հայր-սուրբ, ես եկել եմ այստեղ, որ մը-  
նամ:

— Ինչո՞ւ համար մնաս,  
— ձգնելու համար:  
— Անունդ հի՞նչ ա.  
— Սմբատ.  
— Կարգալ գիտում ես.  
— Գտիտում եմ.  
— Ագա՛, սրան տար մի խուց տուր, Միքայէլին  
էլ ասա, թող մի ձեռք տեղտշոր տալ սրան, ա-  
սաց վանահայրը աբեղային և նոքա դուրս եկան:



ԻԱ.

## ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՄՕՏ

Պերեգմանատանից հեռու Կարմիր Խաչքարի առաջ չօքած էր լինում մի հիւանդոտ միաբան, թէև նորա վերայ չէր երևում ոչ մի մազեղէն հանդերձ, ինչպէս բոլոր միաբաններն ունէին, այնուամենայնիւ նորա թուխ մօրուքը և գլխի խրճճուած ու թօզակալած մազերը վկայում էին նորա միաբան լինելուն: Սա երբեմն «Տէր ողորմեա» էր երգում և երբեմն ձեռքերը շարժելով ինքն իրան խօսում էր, այնպէս, որ եթէ մէկը նորան այդ դրութեան մէջ տեսներ, պէտք է անպատճառ խեղադար կարծէր, բայց նա խելագար չէր, որովհետև այդտեղից մարդ անցնելու միջոցին զգուշանում էր ու լուրջ կերպարանք ընդունում:

Կարմիր Խաչի պատուանդանի մօտ շարած քարեր էին երևում, որ մի ինչ որ գերեզմանի նմա-

նութիւն ունէր: Երբեմն հիւանդոտ երիտասարդը «Տէր ողորմեա» էլ, երգն էլ մոռացած գերեզմանում պառկող մեռելին էր ուղղում իւր խօսքերը....:

— Երջանիկ մեռել, երանի՛, ես էլ քեզ պէս կեանքի ծանրութիւնից ազատ՝ գերեզմանում հանգիստ պարկած լինէի:

— Սմբատ, սաղմոսի զանգակը տուին, արի՛ գնանք, ձայն տուեց ինքնախօսին, ներքեից անցնող մի ուրիշ միաբան:

— Հայր սարկաւազ, ասաց նա, ներողութիւն, ես այսօր տկար եմ:

— Բա՛, Սմբատ, էս սաղմոս ասել ա, թան չէ, ամեն մարդի բան չէ:

— Չձմարիտ, որ հիւանդ եմ, ասաց Սմբատը վեր կենալով:

Սմբատը սուտ չէր ասում, թէև հիւանդութիւն նա մշտապէս ունէր, բայց այս աւուրը ուրիշ, մի նոր հիւանդութիւն էր, նա գլխի պտոյտ էր զգում, նորա աչքերը սևանում էին և ծնկները դողդողում: Ուստի դժուարութեամբ վեր կացաւ և իրան կանչողի յետեից գնաց, բայց ոչ գէպի եկեղեցի, այլ ուղղակի իւր խուցը, ուր հասնելուն պէս երկար ճանապարհ կտրած մարդի նման յոգնած ու քրտնած վեր ընկաւ մահճակալի վերայ մինչև երեկոյ, իսկ երեկոյին շորերը հանեց



անկողին ընկաւ, այդ ընկնելն էր, որ ընկաւ . . .

Օրըստօրէ Հիւանդութիւնը սաստկանում էր և նորա մօտ եկող գնացող չը կար, բացի այն սարկաւագից, որը Կարմիր Խաչի մօտից Մարգարիտ կորցնող Սմբատին սաղմօս ասելու էր հրաւիրում. նա միայն էր օրը մի անգամ այցելում և մի օր նա Սմբատի խորհրդով նորա վաճառատունը դռնփեան մօտին նամակ ուղարկեց Նոր-Բալագէտ Աւետիս Մանուկեանցի հասցեով:

Այն օրից, ինչ Սմբատը մտաւ Սեան, ոչ ոքի հետ ծանօթանալ չը կամեցաւ, ոչ մէկի և ոչ միւսի ենթագործութիւնները նորա գտնելիք «Մարգարիտի» մասին չ'ապացուցուեցան: Նորա հետ ծանօթանալ ցանկացող սարկաւագ կամ աբեղայ սաղմուն ընդունելութիւն էր գտնում նորանից, մի խօսքով նորա ասած «Մարգարիտի» գաղտնիքը մընաց գաղտնիք:

Տասնևհինգերորդ օրն էր, որ մահուան անկողնի տակ տնքում էր Սմբատը, երբ այցելու սարկաւագը ներս մտաւ և հիւանդի մօտ նստելով ձեռքերէ նորա ճակատին: Հիւանդը աչքերը բաց արեց — Հայր... սարկաւագ... դ՞ուք էք...

— Ես եմ Սմբատ, ի՞նչպէս է առողջութիւնդ:

— Լաւ եմ... լաւ եմ... ծանրութեամբ ասաց Սմբատը: Հայր սարկաւագ... ես, որ մեռնեմ... ինձ կը թաղէք... Կարմիր Խաչի մօտ... ահա իմ բոլոր կտակը:

Այցելուն այս խօսքի վերայ արտասուեց, բայց յետոյ սկսեց յուսադրել:

— Ձեռ մեռնի, չեռ մեռնի, Սմբատ, մի վախենար: Բայց ինչո՞ւ անպատճառ Կարմիր Խաչի մօտ:

— Է՛հ... երկու ամիս է դեռ աւելի... ինչ եկել եմ... իմ ընկերը Կարմիր Խաչն է եղել...

— Գիտես, Սմբատ այնտեղ մի գերեզման կայ:

— Գիտեմ, հեկեկալով ասաց Սմբատը, հէնց մեռելի մօտ էլ ինձ թաղէք...

— Սմբատ, լաւ չէ այդ:

— Ինչո՞ւ:

— Գու վաճառական ես, իսկ նա մի աշխարհական, էն էլ աղջիկ:

— Ի՞նչպէս թէ աղջիկ, աչքերը մեծ-մեծ բանալով ասաց Սմբատը, կարծես կամենում էր հէնց միանգամից տեսնել մեռելի անցեալը, որ այնքան ժամանակ ցանկացել էր իմանալ:

— Մի օր մի խեղդուած աղջկայ դիակ ջուրը գուրս էր բերել ծովի ափը. վաճառատունը հրամայեց, թաղեցինք նորան Կարմիր Խաչի մօտ:

— Ի՞նչպէս աղջիկ էր, ի՞նչ նշան ունէր, հարցրեց Սմբատը կամենալով նստել, բայց չը կարաց, յետոյ սարկաւագի օգնութեամբ նստեց:

— Մի հասած աղջիկ էր՝ շէկ ծամբրով, կարծեմ, որքան յիշում եմ, ձախ թշի վերայ մի ինչ որ սև խալ էր երևում...



— Հոգեհոգ սիրես... բացականչեց Սմբատը և ուշադնաց եղած ընկաւ բարձի վերայ: Սարկաւագը նորան ուշի բերեց:

— Աստուծոյ սիրոյ համար... սարկաւագ, ինձ տար այն գերեզմանի մօտ. ես կը մոնեմ...

Սմբատը այս խօսքը ասելով՝ վեր կացաւ կանգնեց և գողգողալուց պէտք է վեր ընկնէր, եթէ սարկաւագը մի փոքր ուշ բռնէր նորան, որի ուսերի վերայ յենած, համարեալ, քաշէքաշ գնալով իրան հասցրեց Կարմիր Խաչի մօտ: Վեր ընկաւ գերեզմանի վերա, և ձեռքերը տարածելով պինդ գրկեց գերեզմանը և նուտղած ձայնով մենակ մի «Մարգարիտ» բառ թռաւ նորա բերանից: Սարկաւագը ուզում էր նորան յետ քաշել, բայց նա արդէն մեռած էր:

Հետեւեալ օրը պատարագից յետոյ մինչ եկեղեցում թաղման կտրդ էր կաաարվում, յանկարծ մի տղայ կատաղածի նման եկեղեցի մտաւ և գոռալով փաթաթուեց դադաղին: Այդ տղան Սմբատի աղբրացու Աւետիսն էր, որ իրիկունը նամակը իրան հասնելուն պէս գիշերով ճանապարհ էր ընկել:

Սմբատը թաղուեցաւ Կարմիր Խաչի մօտ:

ԻԲ.

## Ա Ն Մ Ե Ղ Զ Ո Յ Է Ր

— Մատաղդ ըլնեմ, ոտներիդ տակին մեռնեմ, ինձ էլ տար:

— Ես չեմ կարայ:

— Քո զուրբանը, քո շունը դառնամ, պիտի տանես:

Ախչի, թնչ ես ուզում ինձանից, ես չեմ կարայ, էլի:

— Ասածու սիրուն ըլնի, աղբեր-ջան, մօրքուրի գերեզմանի խաթեր.

— Յայտնի կը տանեմ, բայց ծածուկ ըլնի, չեմ տանի.

— Որ ծածուկ չըլնի, էլ ուր եմ գալլմ.

— Ախչի, յետոյ ես թնչ ջուղաբ տամ.

— Քո ազիդ արևի սաղաղէն, աղբեր-ջան, դու ինձ ազատա, քեզանից ո՞վ ա ջուղաբ ուզողը.



— Լօտկէն շատ ծանր ա.

— Իմ ծանրութիւնն թնչ ա, որ էնքան բեռների մէջն երևայ.

— Գիշերս պէտք է ես Նորագուզ ըլնեմ.

— Ես էլ կը գամ.

— Ես Հիմի պէտք է գնամ.

— Ես էլ կը գամ, բայց չէ, ղուրբան աղբէր, թող մի քիչ մթնի, մարդ ու մուրդ քուչէքից քաշուի, յետոյ.

— Դէ լաւ, լաւ:

Արշալոյսի առաջին ճառագայթները դեռ նոր էին սկսել երևալ, ծովի մեղմ քամին փչում էր զովութիւն տարածելով ծովափնեայ դաշտերին, իսկ հանգարտ կանգնած ծովը արշալոյսի շողերով կարմրած և ափի աւազների հետ մանրիկ ալիքներով խաղ բռնած ախորժ ձայնով չրլփում էր, երբ Նորագուզ գիւղի մօտ մի բարձած նաւակ ճանապարհ ընկաւ դէպի Չիբուխլու:

— Տղէք, ձայն տուեց թիավարներին մի երիտասարդ, որ ինչպէս երևում էր, ապրանքատէրըն էր, քանի առաւօտուայ հովն ա) մի քիչ ձեռք ոտ արէք, որ ճաշուայ շոգին դժուար չըլինի:

— Ափսոս մեր քամին չի գալըմ, ելքեանը (առագաստ) բանայինք, ասաց ղեկավարը, դեռ շոգը չընկած տեղը կը հասցնէր մեզ:

— Կերթանք, թնչ կայ որ, ասաց թիավարնե-

րից մէկը, կուզէք, մինչի Չիբուխլու մենակ ես թիակ քաշեմ, ախչի, դու ըսկի չը վախենաս, այս ասելով քաջալերեց մի աղջկայ, որ իւր յետևը կուչ եկած նստած էր:

Նաւակը աջողակ առաջ էր գնում: Ոչինչ վտանգի նշան չըկար, ամենքն էլ ուրախ էին: Աղղիբի ղիմադէմը հասնելով նոքա ճաշ արին, նորանց ճաշը բաղկանում էր հացից ու պանրից: Միայն կուչ եկած աղջիկը չը մասնակցեց նորանց ճաշին. «ախորժակ չուներ» ասաց:

Ճաշը վերջացնելու էին, երբ մի բարակ քամի սկսեց շնչել հակառակ կողմից:

— Ո՛վ Սևանայ սուրբ Նշան, քեզ եմ կանչել, բացականչեց ապրանքատէրը երեսը խաչակնքելով դարձած դէպի հեռուից երևացող Սևան կղզին:

— Տղիս մտիկ, հեզնց նորան, մինչի Չիբուխլու մենակ թիավարել կամեցողը, ընչի՞ շուտ վախեցար, հազար եդպէս քամի ըլնի կուլ կը տամ:

— Կուլ կը տաս, համա փորիդ մէջ չի սթրվի, ասաց մի ուրիշ թիավար:

— Բա թնչ կըլնի:

Պատասխանի փոխանակ ամենքն էլ ծիծաղացին: Այդ ծիծաղին չը մասնակցեցին միայն ապրանքատէրը և կուչ եկած աղջիկը:

Մի միջոց անցաւ, երբ նաւակը բաւականին ճանապարհ էր կտրել, բայց հակառակ քամին հե-



տրդհետէ սաստկանում էր, որ մի ժամու չափ էլ եթէ չը փոխուէր մըրկի, նաւակը կարող էր Սևան դուրս գալ, այն ինչ մըրիկը ղեկավարին էլ, մինչև Զիբուխլու թիավարողին էլ յուսահատութեան մէջ գցեց: Ապրանքատէրը սաստիկ կերպով վախում էր: Իսկ աղջիկը: — Ո՛չ, նա չէր վախում, որովհետև նորա վերայ ուշ չը կար, նա արդէն սիրտը շատ յետ դարձնելուց յետոյ ուժասպառ վեր ընկած էր բեռների արանքում:

Քանի գնում էր, մօտալուտ վտանգը սպառնում էր նորանց, նոքա շարունակ կռվում էին փրփրադէզ ալիքների հետ, որոնք ահագին կոհակներով կատաղութեամբ յարձակվում էին նաւակի երկու կողմին միանուագ, այդ ըոպէին մեծ ուժով, որ ցատկում էր նաւակը, քիչ էր մնում, որ նետէր իւր վերալից ամեն բան:

— Աստուած ձեր տունն աւերա, ասաց թիավարներից մէկը. բոլորս էլ գնացինք, կորանք վալլահ:

— Աօջաղ կացէք, մի տեսնենք, քաջալերեց յուսահատուած ղեկավարը:

Բայց նաւակը մեծ ցատկումներ անելով յառաջ էր թռչում, յետէլ գալիս ինքնակամ, երբեմն ջրեղէն լեռները թռցնում էին նորան իրանց զազաթի վերայ և երբեմն երկու կոհակների բաժանուելով հեռանում էին միմեանցից խոր ան-

դունդ իջեցնելով նաւակը: Թիերի նշանակութիւնը ոչնչացել էր արդէն:

Ջրի ահեղաձայն գոռգոռոցից ծովագնացները միմեանց ձայն դժուար էին լսում, խառնուել էին իրար: Մըրիկը շարունակվում էր:

— Պէտքէ բեռները ծովը թափուին, ասաց վերջապէս ղեկավարը:

— Աստծու սէրն ըլնի, ինձ գցէք ծովը, բեռներին ձեռ մի տուէք, ասաց ապրանքատէր երիտասարդը:

— Պէտրոս, տեսնում ես մեռնել ապրելու օր ա, ինչ ապրանք, ինչ բան ա աչքներս դալըմ, ասաց երիտասարդին թիավարներից մէկը և ցորենով լիքը մի մէշոկ ծովը գլորեց:

— Ձեզ ղուրբան ըլնեմ, ախար էդ ինչ էք հանում իմ գլուխը:

Մի քանի մէշոկներ իրար յետևից ծովը թափուեցան, դորա վերայ ապրանքատէրը սկսեց երեխայի պէս լաց ըլնել: Նոքա պատրաստ էին և բոլոր բեռները թափել, բայց մըրիկը ժամանակ չէր տալիս, որ նաւակի կապերը արձակէին:

Մի ոստիւն և ահա մօտեցան Սևանայ ժայռատափին, որտեղից դժբաղդաբար դուրս գալու հրնարք չը կար: Կատաղի ալիքը մի փետուրի նման նաւակը անդադար այս ու այն կողմնէր թռցնում ծովագնացներին իրան խաղալիք դարձնելով:











18978

2013



